

ՄՄԲԱՏԻ ՀԵՐԵԱԹԸ

Աօխատասիրութիւն
Ռ. Գ Ի Ւ Լ Գ Ե Շ Զ Ե Ը Ն Ի



Դիալական ժողովրդոց համար



Ա Հ Ե Պ Մ Ե Ա Խ Գ Ր Ա Պ Օ Ւ

Արագոտիպ-Տայարան թուին. Ափինեանցի

1904

(19)

5



Ա 15
Տե 97.-

ՍՄԲԱՏԻ ՀԵՖԵԱԹԸ



Թ. Դ Ի Ի Լ Դ Ե Շ Ե Ռ Ե Ւ Ւ Ւ

A 32952

Դիմական ժողովրդոց համար



Ա Զ Է Ք Ս Ս Ն Գ Ր Ա Գ Թ Լ


Արագածիպ-Ցպարան Յովի. Ափինեանցի

1904

(18)

СИМФОНИЯ

Дозволено Цензурою, 23 Июля 1904 г. гор. Тифансь.



ՄԻ ՔԸՆԻ ԽՕՍՔ

Դեռ մանուկի հասակումս, երբ իմ նախնիքը նահապետական սովորութեամբ գիւղական տաք գոմի սենեակներում ձիթով ճրագի լուսով նստոտած հին աւանդական հեքեաթներ էին ասում և սիրով ականջ անում, ես սրտով ցանկանում էի այդ հեքեաթներից մի բանիսը գիտենալ, և իմ մեծերի նման, ես ես պատմել էի ուզում ուրիշներին։ Ասուած տուեց մեծացայ, բայց չկարողացայ ըստ արժանույն ուսումնարան գնալ և կատարելագործուել ուսման մէջ, այնուամենայնիւ ես դարձեալ չէի մոռանում իմ մանկական հաստկում մտածածու։ Վերջապէս 1890 թուին, իմ ուսման կարօտ ուզեղը յոզնեցնելով սկսեցի յօրինել այս հեքեաթը և վերջ տուի չօրս ամսուայ ընթացրում, որը պարունակում է իւր մէջ մօտ 70 երգեր, հարց և պատասխան, առնուած սուրբ գրքերից, վկայութիւններով, բաջ և յաղթող պատերազմներ։

Խոստովանում եմ նաև այն, որ ես մի գիւղական և անուսում անձնաւորութիւն լինելով, կարող են իմ գրութեանց մէջ անկանոն նախադասութիւններ և խորթ բառեր երեալ, այդ մասին ներողութիւններ եմ իսնդրում պ. ընթերցողներից։

Մ. ԳիհլզեաԶեսն

100
101
102
103
104
105
106
107
108
109
110
111
112
113
114
115
116
117
118
119
120
121
122
123
124
125
126
127
128
129
130
131
132
133
134
135
136
137
138
139
140
141
142
143
144
145
146
147
148
149
150
151
152
153
154
155
156
157
158
159
160
161
162
163
164
165
166
167
168
169
170
171
172
173
174
175
176
177
178
179
180
181
182
183
184
185
186
187
188
189
190
191
192
193
194
195
196
197
198
199
200
201
202
203
204
205
206
207
208
209
210
211
212
213
214
215
216
217
218
219
220
221
222
223
224
225
226
227
228
229
230
231
232
233
234
235
236
237
238
239
240
241
242
243
244
245
246
247
248
249
250
251
252
253
254
255
256
257
258
259
260
261
262
263
264
265
266
267
268
269
270
271
272
273
274
275
276
277
278
279
280
281
282
283
284
285
286
287
288
289
290
291
292
293
294
295
296
297
298
299
300
301
302
303
304
305
306
307
308
309
310
311
312
313
314
315
316
317
318
319
320
321
322
323
324
325
326
327
328
329
330
331
332
333
334
335
336
337
338
339
340
341
342
343
344
345
346
347
348
349
350
351
352
353
354
355
356
357
358
359
360
361
362
363
364
365
366
367
368
369
370
371
372
373
374
375
376
377
378
379
380
381
382
383
384
385
386
387
388
389
390
391
392
393
394
395
396
397
398
399
400
401
402
403
404
405
406
407
408
409
410
411
412
413
414
415
416
417
418
419
420
421
422
423
424
425
426
427
428
429
430
431
432
433
434
435
436
437
438
439
440
441
442
443
444
445
446
447
448
449
450
451
452
453
454
455
456
457
458
459
460
461
462
463
464
465
466
467
468
469
470
471
472
473
474
475
476
477
478
479
480
481
482
483
484
485
486
487
488
489
490
491
492
493
494
495
496
497
498
499
500
501
502
503
504
505
506
507
508
509
510
511
512
513
514
515
516
517
518
519
520
521
522
523
524
525
526
527
528
529
530
531
532
533
534
535
536
537
538
539
540
541
542
543
544
545
546
547
548
549
550
551
552
553
554
555
556
557
558
559
559
560
561
562
563
564
565
566
567
568
569
570
571
572
573
574
575
576
577
578
579
580
581
582
583
584
585
586
587
588
589
589
590
591
592
593
594
595
596
597
598
599
600
601
602
603
604
605
606
607
608
609
610
611
612
613
614
615
616
617
618
619
620
621
622
623
624
625
626
627
628
629
630
631
632
633
634
635
636
637
638
639
640
641
642
643
644
645
646
647
648
649
649
650
651
652
653
654
655
656
657
658
659
659
660
661
662
663
664
665
666
667
668
669
669
670
671
672
673
674
675
676
677
678
679
679
680
681
682
683
684
685
686
687
688
689
689
690
691
692
693
694
695
696
697
698
699
700
701
702
703
704
705
706
707
708
709
709
710
711
712
713
714
715
716
717
718
719
719
720
721
722
723
724
725
726
727
728
729
729
730
731
732
733
734
735
736
737
738
739
739
740
741
742
743
744
745
746
747
748
749
749
750
751
752
753
754
755
756
757
758
759
759
760
761
762
763
764
765
766
767
768
769
769
770
771
772
773
774
775
776
777
778
779
779
780
781
782
783
784
785
786
787
788
789
789
790
791
792
793
794
795
796
797
798
799
800
801
802
803
804
805
806
807
808
809
809
810
811
812
813
814
815
816
817
818
819
819
820
821
822
823
824
825
826
827
828
829
829
830
831
832
833
834
835
836
837
838
839
839
840
841
842
843
844
845
846
847
848
849
849
850
851
852
853
854
855
856
857
858
859
859
860
861
862
863
864
865
866
867
868
869
869
870
871
872
873
874
875
876
877
878
879
879
880
881
882
883
884
885
886
887
888
889
889
890
891
892
893
894
895
896
897
898
899
900
901
902
903
904
905
906
907
908
909
909
910
911
912
913
914
915
916
917
918
919
919
920
921
922
923
924
925
926
927
928
929
929
930
931
932
933
934
935
936
937
938
939
939
940
941
942
943
944
945
946
947
948
949
949
950
951
952
953
954
955
956
957
958
959
959
960
961
962
963
964
965
966
967
968
969
969
970
971
972
973
974
975
976
977
978
979
979
980
981
982
983
984
985
986
987
988
989
989
990
991
992
993
994
995
996
997
998
999
1000

ՍՄԲԱՏԻ ԵՒ ՍՈՖԻԱՅԻ ՀԵՔԵԱԹԸ



Առաջին ժամանակներում Արմաւիր բաղա-
րում ապրում էր մի վաճառական,
Սաղաթէլ անունով. Սաղաթէլը շատ
հարուստ, մեծատուն և առաջադէմ մի իշխան էր.
ունէր նաև մի կին Մարգարիտ անունով:

Սաղաթիէլը մեծ կալուածատէր մարդ էր այդ
քաղաքում. ունէր նա իրան 30 հատ բազազի խա-
նութ, 20 հատ կուպեցի խանութ, 15 վառարան,
12 սրճարան, 10 հատ պանդոկ (խան) այս բոլորը
նա կառավարում էր վարձուած կառավարիչներով:
Թիւ ամեն մի բանով նա լի էր և տարեկան ամեն
մի ծախսից դուրս 6000-ի չափ ոսկի եկամուռ էր
ստանում, բայց այս ամենը նրանց չէր ուրախա-
ցնում. նրանց անզաւակ լինելը ոչ թէ միայն տըխ-
րաթիւն էր նրանց, այլ ամօթանք էլ էր համար-
ւում:

Մազաթէլը յիսուն և հինգ տարեկան էր և
իւր կին Մարգարիտն էլ նմանապէս իւր հասակն
առած անդաւակ կին էր։ Սոքա մի լաւ սովորութիւն
ունէին, այն է՝ իրիկուն, առաւօտ եկեղեցուց յետ
չմնալով կազօթէին իրանց անդաւակութեան և աշ-
խարհի խաղաղութեան համար։

Նրանց ողորմածութեանը չափ չ'կար, որսվհե-
տե, երբ իրիկուն կամ առաւօտ եկեղեցի գնա-
լու կ'լինէին, քաղաքում ապրող աղքատ և անճար
մարդիկ նրանց դռնից սկսած մինչև եկեղեցին հաս-
նելը աջ և ձախ կանգնած կը լինէին. Նրանք ըստ
սովորութեան առատ ողորմութիւն տալով կ'հաս-
նէին եկեղեցին և այնտեղից դառնալով դարձեալ
նմանապէս մինչ տուն։ Բայց այս հս պէտք է ասել
որ, Մազաթէլը իւր կին Մարգարտին միշտ իւր
ձախ կողմն ունենալով կ'չբջէր, և Մազաթէլը միշտ
աջ կողմի գտնուող աղքատներին կ'տար ողորմու-
թիւն, իսկ Մարգարիտը իւր ձախ կողմիններին։ Բա-
յցի այդ յիշուած առատ տուրբերը, տարուայ իւրա-
քանչիւր տաղավարներին մի մի եղ մատադ կանէին,
ու քաղաքի մէջ գտնուող անճար աղքատներին ա-
ռատ կերակուր կ'բաշխէին. մերկերին հագուստ,
պարտատէրերին իրանց տալիքներից կ'ազատէին.
վերջապէս Աստուածային ամէն մի պատսւիրանը
այդ քարի և ընտիր լնտանիրը՝ անձանձաձրոյթ
կ'կատարէին։

Եյս Աստուածանոյ ամուսինների ո. աղօթքը

արձագանք դատաւ Տիրոջ Աթոռի առաջ. և նրա ո-
ղորմած ծառաները, մեծ ովորմութիւն դատան ամե-
նաբարձրեալ Երարշից. Երբ Սաղաթէլի կին Մար-
գարիտը յրացաւ և նրա յղութիւնը յայտնուեց, նը-
րանք անսպասելի մի ուրախութիւն տեսնելով կըրկ-
նալատկեցին և եռապատկեցին իրանց տուրքը և
ողորմութիւնները. Անցաւ ինն ամիս, ինն ժամ և
ինն րոպէ և ահա Մարգարիտը ծնաւ մի շատ գե-
ղեցիկ ու աննման արու զաւակ. և ըստ սովորու-
թեան, ուժ օրից յետոյ Մկրտեցին և անունը Սըմ-
բատ զրին. Առառւծոյ հովանաւորութեամբ Սմբատը
աճում և մեծանում էր և երբ ուժ տարեկան դար-
ձաւ, Սաղաթէլը տարաւ նրան մի Ղաղարոս անու-
նով ուսուցչի մօտ. որպէսզի իւր որդին կատարե-
դործուի ամեն մի բանում և աստուածային ո. պատ-
ուիրանները ուսումնասիրէ. Ուսուցչի հետ պայմա-
նաւորուեցան հինգ հարիւր սոկով, հինգ տարուայ
ընթացքում սովորեցնելու.

Սաղաթէլը Սմբատին թողեց ուսուցչի մօտ և
ինքը զնաց իւր գործին. Անցան որաշուած հինգ
տարինները և Սմբատը Ղաղարոսի մօտ իւր եռան-
դուն աշխատութեամբ սովորեց ո՛չմիայն հայերէն,
այլև տաճկերէն լեզուին էլ ամենահմուտ մի կարգացող
դարձաւ. մինչև անդամ իւր վարժապետ Ղաղարոսն
էլ զարմացել էր նրա ընդունակութեան վերայ.

Թէ չայկական և թէ Ցաճկական ուսումնա-
կանները անկարող էին Սմբատի հետ ըանակ-

յութեան մտնել և նրան պատասխանելու տկարա-
րանում էին, Մէկ օր, նա ուսումնարանից տուն վե-
րադառնալիս, երբ անց էր կենում մի սրջարանի
գռնով, տեսաւ այդ տեղ մի երգիշ. որ նուազում
էր քաղցր և երգում. զմայլեցաւ նրա ձայնից և
կանգնեց այդ տեղ. վերջապէս Սմբատը սաստիկ
յուզուած կանգնած մնաց այդտեղ մինչ երեկոյեան
եկեղեցւոյ գանգակների խփելը, և երբ Մայր Եկե-
ղեցւոյ գանգակը որոտաց, Սմբատը սթափուեց խոր
յուզմունքից և օրուայ մթնելը տեսնելով, շտապեց
դէպի տուն. բայց ճանապարհին մտածում էր եր-
գեցողութեան վրայ. Սմբատը հասաւ տուն, նա ներս
մտնելիս մայրն հարցրեց ինչի այսօր ճաշից յետ
միացիր. ինչ պատահաւ քեզ. Սմբատը իրան պա-
տահած անցքը ծածկելով ասաւ որ, մի քիչ տկար
եմ այսօր. Մարգարիտը փաթաթուելով որդուն,
համբուրեց նորա մի քիչ գունատուած թշները և
խսկոյն սեղանի վրայ կանչեց ճաշելու. բայց Սմբա-
տը փոխանակ ուտելու, գարձեալ լսած եղանակնե-
րի և երգերի վրայ էր մտածում. հայրն էլ նկատեց
որ Սմբատը հաց չի ուտում, հարցրեց՝ Սմբատ զան,
ինչպէս երեսում է դու տկար չես, բայց չ' գիտես
քեզ ինչ է պատահել. ինձանից մի պահիր որդի,
ասա գոնէ ուղիղը, մի հեար կ' ինի. Սմբատը տե-
սաւ որ հայրը շատ է ստիպում, ասաւ հայրիկ, այ-
սօր ճաշին տուն գալիս, մի սրջարանի գռնով անց
էի կենում, լսեցի մի անուշ ձայն, ներս գնացի որ,

— 2 —

մի երգիշ գեղեցիկ նուադում էք և երգում, նբանով
զմայլած ճաշխց յետացայ. և մինչև հիմայ էլ կար-
ծես աշքիցս և ականչիցս շեն հեռանում թէ ինքը
երգիշը և թէ նորա եղանակները, այս հայրիկ, ե-
րանի թէ ես էլ սովորած լինէի այդ արհեստը և
հիմայ ես էլ նրա պէս երգէի և նուագէի, այն ժա-
մանակ շատ ուրախ կանցնէին իմ օրերը։ Հայրը
պատասխանեց Սմբատ ջան, ամեն մի բան մարդ
կարող է իւր ժամանակին սովորել. սրովհետեւ զու
գեռ փորբ ես, հիմայ բո ուսումնարան գնալու ժա-
մանակդ է և երբ մի փոքր կ'մեծանաս և ուսումն
կաւարտես, այն ժամանակ կարող ես սովորել և
այս ինչ որ ցանկանում ես, որովհետեւ ամեն մի
գիտութեանց մայրը՝ կարդալն է, երբ իւր ժամա-
նակին կարդալը լաւ չսովորես, երբ մեծացար նր-
բանից յետոյ քեզ ուսումնարան գնալը անվայել
կ'լինի և ուսումն թերի կ'մնայ։

Սմբատն ասաւ հայրիկ ջան, այդ կողմից ան-
հապ եղիր, որովհետեւ, բացի իմ հայերէն լեզուիս
աւարտելը, Ցաճկնրէն ես լաւ դիտեմ. կարդալու
կողմից իմ գիտեցածս ինձ բաւարար է, ցանկանում
իմ որ ինձ այդ արհեստին ուզարկէք սովորելու,
որովհետեւ ես շատ եմ սիրում նուագիլ ու երգել.
Հայրն ասաւ, ուրիմն ես վաղը անպատճառ կ'զը-
նամ բո վարժապետի մօտ և բո գիտութեան մա-
սին տեղեկութիւն կառնեմ և նրանից յետոյ քեզ
կուզարկեմ այդ արհեստն էլ սովորելու։

Միւս առաւետ շատ կտնուիս Սաղաթէլը գրնաց Ղազարոս վարժապետի մօտ և նրանից իմացաւ Սմբատի ուսման, զարդացման մասին, վճարեց նրան խոստացած 500 ոսկի վարձը և տուն վերադառնալով ասաց, Սմբատ, որդեակ, այժմ ես հասկացայ քո ասածներիդ ճշտութիւնը. Հիմայ կարող եռ քո ցանկացած արհեստը սովորել, վեր կաց գընանք քո տեսած վարպետի մօտ որը սրջարանում երգելիս, դու տեսել էիր:

Այդ երգիչ վարպետի անունը Մելքիսեդեկ էր, Սաղաթիէլը նորա հետ պայմանաւորուեցաւ մի հարիւր ոսկով, երեք տարուայ ընթացքում լաւ նուազել և երգել սովորեցնելու Սմբատին. Մելքիսեդեկ վարպետն էլ մի որդի ունէր ևս Սմբատ անունով: Վարպետը Սմբատին իւր որդւոյն անուանակից լինելովն, նրա վարրի գերազանցութեան և ձայնի քաղցրութեան համար շատ էր սիրում և բարի աշքով նայում նրա վերայ. Մելքիսեդեկը Սմբատին հարցրեց, թէ որ նուազարանն ես սիրում, որի վրայ սովորես և երգես. Սմբատը վինը (սանթուր) վերառաւ. Մելքիսեդեկը ամեն ջանք գործ էր դընում իւր աշակերտին սովորեցնելու և մինչև մի տարին լրանալը Սմբատը նուազածութիւնը բաւականին սօվորած էր. երկրորդ տարում Սմբատը համարեայ ամեն ինչ սովորել էր. վերջապէս լրացան երեք որոշուած տարիները և Արմաւիր քաղաքում մի հոչտկաւոր և անուանի երգիչ ու բա-

եաստեղծ անուանուեց Սմբատը, որի հետ համարեայ իւր վարպետն անդամ չէր կարսղ մրցել։ Սըմբատի անունը հոշակուեց ամբողջ Երարատեան աշխարհում։ Մելքիսեդեկը իւր աշակերտի վրա այլիս պակասութիւն չ'զտնելով ըստ հին սովորութեան իւր աշուղական օրհնութիւնը տուեց Սմբատին և արձակեց. Սմբատը իւր վարպետի ձեռքը խոնարհարար համբուրելով վեր առաւ իւր սանթուրը և զնաց իրանց տուն. Նա շարունակ երգով ու նուագելով էր անցկացնում օրերը։

Մէկ օր Սմբատը քաղաքում ման գալիս աևստ արարական շուտագնաց նժոյգների վերայ նըստած երկու զինուորներ գեղեցիկ հաղնուած. փայլուն զէնքերով կոլորուած, որսորդական պարկերը ուսերին, մի բանի գամբռներ և բարակներ յետեներից զցած գաշտից բաղաքը մտան. Սմբատը դրանց աեսնելիս ցանկացաւ նրանց արհեստն էլ սովորել և դրա համար հարցնել կամեցաւ նրանցից, թէ արդեօք նրանք էլ կ'կամենան այդ արհեստում իրանց աշակերտ և հետեւողներ ունենալու, երբ Սըմբատը դիմեց նոցա, նրանք ևս Սմբատի շարժման և զեղեցկութեանը հաճութիւն տալով, սիրով ընդունեցին Սմբատի առաջարկութիւնը և պատասխանեցին. սիրուն պատանի, մեր արհեստի սկզբունքը աղատ կեանք վարել է նշանակում, մենք նժոյգների վրայ նստած ազատ շրջում ենք դաշտ և անտառ որսում ենք համեղ միս ունեցող թռչուններ

հ այդ թոշանների համեղ մսերից բաղցրահամ
խորտիկներ կ խորովածներ ենք պատրաստում և
ազատօրէն վայելում. Սմբատը որ իւր կեանքը մինչ
տու օր ուսումնական շրջաններում բանտարկուած
էր համարում, ազատութեան ձայնը լսելուն պէս,
խսկոյն և եթ միտքը դրաւ նրանց արհեստին հետե-
ւել և որի համար էլ տուն դնալով, հօրը առաջար-
կեց, հայրիկ, ասաւ նա, ես կամենում եմ որսկան-
ների շարքն անցնել: Եթէ կ'բարեհաճես, ինձ հա-
մար մի լաւ ձի և մի ձեռք հանդերձ և զէնքներ
զնիր և ես զինուած կ'հեծնեմ ձիս և որսի կ'գնամ
իմ ընկերների հետ. հայրը թէի կամք ունէր, բայց
որդուն փորձելու համար ասաւ, Սմբատ ջան, դու
դեռ փորը ես, չես կարող ձի նստել. գուցէ ձին
շափ ընկնելիս դու չ'կարողանաս վրան մնալ և դր-
բա համար էլ չեմ ուզում. Որդին ասաւ հայրիկ,
եթէ ես հիմիկուանից չ'պատրաստուիմ այդ արհես-
տում, գուցէ վաղը կամ միւս օրը ես թշնամիներ
ունեցայ, նրանցից ինչպէս կարող եմ պաշտպան-
ուել, չէ աւելի լաւ է նախօրօք պատրաստուել, որով-
հետեւ այրական քաջութիւնը զինավարժութիւնից է
կախուած. վերջապէս Սմբատը հօր հաճութեամբ
որսկանի ամեն մի պիտոյքը պատրաստեց, մի լաւ
ձի առնել տուեց. որովհետեւ Սմբատը մի հատիկ
զաւակ էր դրա համար հայրը նորա ամեն մի խըն-
դիրները չէր մերժում. հայրը Սմբատին թանկագին
շորեր գնեց, ոոկէ ժամացոյց և մի արհեստական

մատանի, գեղթափ ակներով. Նրա մատանու ակը այս չնորբը ունէր, երբ պատահէր դեղուած (թռւնաւորուած) կերակուր, այդ մատանու տկով, իոկոյն կ'լաւանար այդ թռւնաւորուած կերակուրը կամ մարդք. Վերջապէս Սմբատի համար ոչ մի բան պակաս չէր, նրա ձին արդէն ծառաները ամեն ջանք դործ դրած պահպանում էին. մի ամսու շափ Սմբատը օրական երեք անդամ կ'հեծնէր ձին և քաղաքի փողոցներում շուռ կուգար:

Սմիսը լրանալուց յետոյ մի Համբարձում անունով զինաւորի և որսորդի պատահելով նորա հետ պայմանաւորուեց, և միմեանց ժամադիր եղան, որպէս զի միւս օրը ամենը իւր կողմից պատրաստուած կանուխ գան որոշուած տեղը և նշանակուած ժամանակին գնան իրանց ցանկացած գործին. վերջապէս միւս օրը, արշալայսը գեռ նոր էր բացուել, Սմբատը վեր թռաւ տեղից, հագաւ իւր գեղեցիկ որսորդութեան շորերը զինուեց իւր մաքուր և փայլուն զէնքերով, հրամայեց ծառաներին, ձին դուրս բերին և կանգնեցրին զուռը, Սմբատը դուրս եկաւ և երեսը գարձնելով դէպի աղօթարան, խաշակնեց և աղօթեց, Տէր, դու մեղ հետ եղիր ատելով հեծաւ ձին, սլացաւ դէպի նշանակուած տեղը. Արեք գեռ նոր էր իւր փայլուն ճառագայթները տարածել Արմավիրի շրջակայ լեռներն ու դաշտերը. ամեն մի խօսի, ամեն մի ծաղկի քթից մի, մի մարգարիտէ ցող կախուած փայլին էին տալիս.

Սմբատը կարծես նոր աշխարհ եկած, նոր լոյս տեսած զմայլած մնացել էր հաղարաւոր ծաղիկների և զոյնզգոյն վարդերի հոտերով. վերջապէս համբարձաւմն էլ եկաւ և միմեանց բարի լոյս մաղթելով առաջ գնացին, հասան դաշտը. նրանք աշրերը յառած աջ ու ձախ նայելով գնում էին. յանկարծ մի այծեամ ընկաւ նրանց աշքովը, համբարձումը, որ փորձուած մի որսորդ էր, իսկոյն շտապեց յարմար դիրքի կողմը և այնտեղից նշան բռնեց այծեամի կրծքին և նետը բաց թողնելով գլորեց այծեամին.

Սմբատը շտապեց, ձիով վրայ հասաւ և բռնեց վիրաւոր այծեամին:

Նրանք ուրախանալով վեր առան այծեամը և բաշուեցան մի կողմ, իջան ձիաներից և թողին որ արածեն, իսկ իրանք չոր ցախեր ժողովելով կրակ արին և այծեամի մսից սիրուն խորոված պատրաստեցին և նստան ուտելու. գինի էլ ունէին, գինով և խորոված մսով լաւ ճաշելուց զինի մի բիշ էլ հանդիստացան և իրանց բաղդը օրհնելով, հեծան ձիերը և դարձան դէպի բաղար. Համբարձումը ամեն մի կերպ աշխատում էր Սմբատին վարժեցնել այդ արհեստում՝ թէ ձիախաղերի և թէ զինավարժութեան մէջ. Այդ երկուսը բաղար հասնելիս համբարձումը Սմբատին տարաւ դէպի իրենց տան կողմը և ցոյց տուից իրանց տները ու պատուիրեց որ, ամեն առաւտ դայ իրան իմտց տայ և միասին զբ-

Նան դաշտ։ Դրեթէ բաւական ժամանակ նրանք շարունակեցին իրանց սրսկանութիւնը. միայն Սըմբատի սովորութիւնն ինչ էր. ամեն իրիկուն դէպի բաղաք դառնալիս, նա կոկուէր ձիախաղը և զարմանալի կերպով զէնք խաղացնելով կ'մտնէր քաղաք, համարեայ ամեն երեկոյեան ամրողջ քաղաքը տեսութեան դուրս կ'գար Սմբատի զինավարժութեան, և զարմանալի շարժումներին։

Զիուց իշնելիս, ծառաները ձին կ'տանէին խընամելու, իոկ ինքը մի քիչ հանգստանալուց յետոյ՝ կաւնէր նուազարանը, կ'նուազէր և կ'երպէր։ Նրանից յետոյ վեր կ'առնէր ո. դրբերը և մի առ մի տչրից անցնելով, նրանց միջից ո. ազօթքներ վեր առնելով, կ'զրէր և ըստ նահապետական դարուց կ'կարէր իր վրան շար աշրից ազատ մնալու և սլատերազմների մէջ յաղթանակ տանելու նպատակաւ։

Սմբատի քաջութեան անունը տարածուեց ամբողջ աշխարհը և հեռաւոր տեղերից Սմբատի քաջութեան և գեղեցկութեանը տեսնելու կուգային։

Մի օր Սմբատը Համբարձումի հետ որսի գընացած ժամանակը, անտառի մէջ պտտուելիս յանկարծ իրարից անջատուեցան և կորցրին իրար։ Համբարձումը մենակ մի եղնիկ տեսաւ և շատ շարշարուեցաւ և մինչև անտառի ծայրը հասցրաւ, յետոյ միթութեան պատճառաւ կորցրեց։ Համբարձումը իր անյաջուղութեան համար բարկացել էր և քիչ էր

մնաւմ որ բարկսւլմիւնից տրաքուէր։ Եյդ միջոցին յանկարծ քառասուն ձիաւոր մի աւազակախումը մէկէն յարձակուեցին Սմբատի վրայ։ բայց բազ Սմբատը աներկիւղ սուրը մերկացրեց և այդ քառասունին էլ առաջ խառնած տարաւ մի բարձր բարափից թափեց։ Նրանց ձիերը առաւ և բոլորն էլ տարաւ քաղաք և յանձնեց նահանգապետին, որի համար Սրմբատի և իւր նժոյդի նկարը վեր առած տարածեցին սղջ աշխարհում և կայսերական պարգևներով վարձատրեցին Սմբատին։ Եյնուհետեւ Սմբատը առանձին էր զնում որսորդութեան, որովհետեւ էլ ոչ երկիւղ ունէր և ոչ մէկից կախում ունէր։ Մի օր էլ Սմբատը դարձեալ տռանձին գնաց որսի և դէպի այն կողմը, որտեղ որ սպանել էր աւազակներին, մինչ կէս օր լինելը ոչ մի օրս չ'պատահեց նրան, մենակութիւնից նա յօպնած ձիուց իջաւ մի տղրիւրի մօտ։ սառը ջրով մի քիչ զովացաւ, հաց կերաւ և իր վերտրկուն գլխին քաշելով պարկեցաւ ընելու։ Եյդ տեղում շատ էր քնել թէ քիչ, երազում իւր գլխու մօտ կանգնած տեսաւ մի սպիտակ ձիաւոր։ Սմբատը նրան տեսնելիս վախեցաւ։ Նրան աւազակ կարծելով, բայց զինուարը, նրան ասու մի վախենար Սմբատ ես քս կարծածդ չեմ. այլ երազակաս ո. Սարգիսն եմ, վեր կաց, ձիդ նստիր և իմ յետեիցս արի։

Սմբատը թէկ քնած ու երազումն էր տեսնում այդ և. զինուարին, բայց նրան այնպէս թուաց թէ

ինչը արթուն և կենդանի աշօք և տեսնում ամեն մի երեսյիթ. նա որպէս թէ իւր ձին նցտած զնաց եւրա յետից և յանկարծ իրան մի անծահօթ բազարում մի բարձր դարպաղի դրան կանգնած տեսաւ իւր առաջնորդով զինաւորի հետ. զինաւորը ձայն առւալ Սօֆիա գուրս արի և ահա դարբաղի գոները բաց եղան և ներսից մի գեղեցիկ ու աննման օրիորդ գուրս եկաւ և նրանց դիմացը կանգնեց. բայց թէ ինչ օրիորդ, մի չքնաղ և արեգակի նման փայլուն և պայծառ դէմքով՝ հրեշտակ կործա լինէր:

Եյգտեղ զինաւորը իր մօտից հանեց մի շիշ զինավ լիք և բիւրեղեայ բաժակը լցնելով դէմ արեց Սմբատին և ասաւ վեր առ այս բաժակը և խմբր այս օրիորդի կենացը և սիրոյ համար. Սմբատը առաւ բաժակը սիրով և ողջ լերուք ասելով ընկունեց, զինաւորը մին էլ լցրեց և տուաւ օրիորդին ասելով, դու էլ խմբր Սմբատի սիրոյ և կենաց համար. նա էլ միննոյն բանը կրկնելով խմեց:

Զինաւորը ասաւ Սմբատ, այս բաղաքը Ձելթուն քաղաքին է և այս օրիորդը Տիգրանի վաճառականի գուստը, ահա այս բարձր և վիթխարի շինութիւնները բոլորն էլ Տիգրանինն են, ես ձեր երկուոի բրտերումն էլ սարսափելի սէր եմ գցում որ միմեանց սիրէք, բայց ձեր դլիմից շատ անցքեր կանցնեն մինչ կատարումն. միայն անհօք եղէք, ես ամեն գործում ձեզ կ'պաշտպանեմ. Սմբատ վեր արի ձիէդ

և Սօֆիային ձեռք խփիր և ծանօթացէք։ Սմբատը
իջաւ ձիուց և դէպի Սօֆիային գնալիս Սօֆիան
դէպի տուն փախաւ։ Սմբատը շտապեց դէպի նը-
րան և դռնից ներս մտնելիս ոտքը սկիհաց և վայր
ընկաւ. զլուխը դրանք դիալչելիս, Սմբատը ցնցուեց
և արթնացաւ քնից. հասկացաւ որ երազ էր տե-
սածը, սրտի կսկծից ուշադնաց եղաւ. համարեայ մի
ժամուայ շափ էլ այդպէս մնալով, վերջապէս ուշքի
եկաւ և աչքերը բաց աբաւ ու աեսաւ որ արդէն
գիշեր է և աստղերը փայլում են, տեղից ելաւ և
դէպի ձին գնաց. իսկ ձին, Սմբատի ուշադնաց ե-
ղած ժամանակին ոտքերով այնքան էր խփել գետ-
նին, որ գետինը հերկած կարծես լինէր։ Սմբատը
մի բիշ շոյեց իւր ձին և նստելով նրա վերայ դր-
նաց քաղաք, ձին յանձնեց ախոռավանին և գնաց
տուն։ Ծնողները նրան որ գունատուած աեսան
ներս մտնելիս, սարսափահար եղան և իսկոյն հաս-
կացան որ Սմբատին մի բան պատահել է շփոթ-
ուած հարց ու փորձ էին ուզում անել և իմանալ
եղած անցքը. սակայն Սմբատը ոչ խօսում էր և ոչ
պատասխանում, այլ բիթ ու բերանի վրայ ընկած
լուռ էր մնում. վերջապէս իւր ծնողաց թախան-
ձանքին զիջանելով խօսեց և ասաւ, իմ ցաւը ձեզ
միայն սանթուրովս կարող եմ յայտնել։ Մայրն իս-
կոյն շտապեց և սանթուրը հասցրաւ Սմբատին.
Սմբատը մի լաւ լարելուց յետոյ սկսեց նուազել մի
զիւանիի եղանակ և երգեց այսպէս.

Ո՞ւ հայրիկ ինձ ո. Սարդիսը մէկ բարի պայման
տուեց.

Երազի մէջ ինձ երեաց և սիրոյ նշան տուեց.

Ականատես ու յայտնապէս ցոյց տուեց Զէյթուն
բազար,

Տիգրան կուրեցի աղջիկը Սօֆիին սիրական տուեց:

Այդ պատճառով ես դառել եմ խինդ ու խելազար.

21. կարելի որ մոռանամ թէ կուզ անցնի ամ հազար.

Կարմիր վարդի թեր թշերը ունեները մարգարաշար,

Հրեզին ցեղից ընտրուած ինձ մի աննման տուեց:

Եթէ Սստուած արժան անէ կամիմ տեսութիւն զնամ.

Թէ չտեսնիմ մի բռոլէ, պէտք է որ էրվիմ մնամ,

Այդ հայրիկ իմ, բո Սմբատիդ խղճալով արա խնամ,

Այս նոլատակիս զնալու Սստուած հրաման տուեց:

Սմբատը այս երգը աւարտելուց յետոյ նրա
հայրն ու մայրը սկսեցին հարց ու փորձ անել. որ-
դի ասում էին, այդ ինչ խօսքեր է, որ քեզանից
զուրս խօսում ես, Զէյթուն որտեղ, դու որտեղ,
Տիգրանը ով և նրա աղջիկը ով. մի սխալուի որդի,
այդովէս բան չկայ. նրանք ծածուկ Սմբատի ձին
տեղափոխեցին և դէնքերը նոյնապէս ուրիշ տեղ պա-
հացին. որպէս զի անզէնը և առանց ձիու չկարո-
գանայ զնալ, բայց Սմբատը ասաւ որ ես տռանց
ձիու և զէնքի էլ կաբող եմ զնալ, բայց վերջը մը-
տածեց որ, առանց իւր ծնողաց օրհնութեան եթէ
զնալու լինի, գուցէ գործը չլաջողուի. ուստի միտ-

բը դրաւ որ նրանց օրհնութիւնն առնի և յետոյ
նդայ, առաւ նուազարանը ձեռքը և սկսեց քէշի
ողլու եղանակով երգել այս երգը.

Հաղար ու մէկ անուան տէրը կ'սիրէի,
Ո՞վ ծնողը ինձ տուէր հրաման գնամ.
Խնդրեմ տուրը ու ողսրմութիւն նուիրէր,
Որ Աստուած ինձ լինի օգնական գնամ:

Ծնողները տեսան որ սա հաստատ ոլիտի պը-
նայ, հայրն ասաւ որդի, սպասիր մի քանի խօսք
էլ ևս ասեմ, եթէ կ'ուզես լսիր իմ խօսքերը և ա-
սաւ:

Հայ ը ը

Այդ ինչ միտք է որդի, կամ այդ ինչ սէր է,
Մեզ տխուր թաղնելով չէ արժան գնաս.
Քեզ կաղաչեմ մէկ քանիմ օր համրերէ,
Հօրդ թաղես, անես գերեզման գնաս:

Ո ը դ ի

Հայրիկ, մի արգելիր ինձ ճանապարհից,
Սիրելին չի ջոկուի իւր սիրահարից.
Թէկուզ գեամ ընկնեմ մեծ զնաթ քարից,
Սօֆիի սիրուն կուզեմ դէմ մահուան գնամ:

Հայ ը ը

Ո՞վ գու իմ մէկուճար աղնիւ որգեակ,
Քո գնալուդ տեղը, մեզ ասա շիտակ.
Եերունի ծնողըդ մի թող անզաւուկ,

Մկարծեմ որ լիովնես յաւիտեան գնասո:

Ո ւ դ ի ն

Սմբատն եմ զնալուս տեղը Զէյթուն է,

Երաղումս տեսած սիրելիս հնն է,

Թէ ես ձեղ մսուանամ, Ցէրն ինձ սպանէ,

Կցանեկամ սիրելուս տեսութեան գնասո:

Հ ա յ ը ը

Ո՞վ գու Սակաթէլի որդի հարադատ,

Որովհետե գնալու ես գու հաստատ,

Եղօթք անեմ մնաս փորձանքից ազատ,

Տէրը միշտ քեղ լինի օգնական գնասո:

Երգեցողութիւնը կերզացնելուց յետոյ թէի իրաւունք տուին զնալու, միայն ձին և գէնրերը չըտիին, մտածելով թէ, նա մի ջահել երիտասարդ է, նա ինչ գիտէ Զէյթունը կամ նրա ճանապարհը, բայց դուրս կ'գայ մի քանի օր կ'պտտուի և էլլի կրտսեալունայ տուն: Բայց Սմբատը հաղու իր անուկան հասարակ հագուստը, սոկէ քամարը կապեց և ժամանակոյցը վրան առաւ և այն ակօթքի դրսւածքները իւր հետ վերցրեց, նաև այն թանկապին և գեղթափ ակնեայ մատանին ու իւր սանթուրը, մնար բարով առաւ և ընկաւ ճանապարհ, Ցէր գու օգնիր աղօթքը մրմնջալով. բայց Սմբատը իր մանկութիւնից մինչև այդ ժամանակ ոտքով ճանապարհ չէր գնացել, որի համար շատ գժուար էր թւում Սմբատին. թէի մնակ մարդու համար մեծ

դժուարութիւն է հեռաւոր ճանապարհ՝ շարունակի-
լլ. բայց Սմբատը Սօֆիայի սիրով տարացած ոչ
մի բան չէր դժուարանում նորա համար, ոչ հեռաւ
և անծանօթ ճանապարհը և ոչ միայնակութեան
երկիւղը կարողացան Սմբատին խւր սիրելու տեսու-
թեան ճանապարհից յետ կանգնեցնել։ Արմաւիրից
մինչև Գէյլթունը երկու ամսուայ ճանապարհ էր
այն էլ սուրհանդակի համար։ Վերջապէս մի տմ-
սեայ ճանապարհորդութիւնից յետոյ մի օր հասաւ
մի հայաբնակ քաղաք, հարցրաւ քաղաքի մասին և
խմացաւ որ Բաղէշ (Բիթլիզ) քաղաքն էր, իրան ի-
ջեանելու համար մի կարմիր գոնսվ սրճարան ցոյց
տուին, որ Սարգիս Մատաթեանցին էր պատկա-
նում։ Վասն զի նրա սանկթուրից հասկացան որ եր-
գիշ էր, նրա համար տարան այնտեղ որ մի փորբ
շահուի։ Սմբատը ներս մտաւ սրճարանը խոնարհ
կերպով բարեկց և նստեց դրան մօտերքում. սրճա-
րանը լի էր բազմաթիւ մարդկանցով, կային նաև
նուագածուներ, որոնց գլխաւորի առաջ մի թաշկի-
նակ կար փոած և վրան ուսկի և արծաթ դրամներ
կիտուած, երգում էին երգիչները բաւարար եղա-
նակներով որոնց գլխաւորի անունը Մաղաք էր և
ունէր եօթ աշակերտներ։ Սրճարանի բարձրագոյն
տեղը բռնել էր մի իշխան մարդ, որի հրամանները
իսկոյն և եթ կատարում էին այնտեղ գտնուողները,
այդ մարդը տեսաւ Սմբատին և ձեռքի գործիրից
հասկացաւ որ երգիշ է, մօտեցաւ նրան և հարցրաւ,

երեի դուք էլ երգիշ կ'լինէք եղբայր, համեցէք
վերև, և մեր երգիշների շաբրն անցած երգեցէք
մի բան էլ դուք եթէ կարելի է, բայց Սմբատը ա-
շուղական մրցումներից զգուշանալով, պատասխա-
նեց, հայր իշխան, որովհետեւ ես օտար երկրացի
մի անծանօթ մարդ եմ, դուցէ իմ կողմից այս ժո-
ղովրում մի անբաւականութիւն տեսնուի, այն
ժամանակ ինձ իմ յանձանքը ներոզ և ինձ պաշտ-
պանող չունենամ, ինձ լաւ չի լինի. աւելի լաւ
կ'լինի թոյլ տար ինձ այս երեկոյ իբրև հիւր, հան-
գոտանալու և վազը իմ ճանապարհը շարունակելու:

Իշխանը ասաւ, սիրելի մենք բոլորս էլ հայեր
ենք քեզ այստեղ ոչինչ ասող չի լինի. և բացի
զրանից եթէ դու մի լաւ բան գիտենաս, այն ժա-
մանակ քեզ համար մի քիշ ճանապարհածախս էլ
կ'հաւաքենք, մի վախենար, այս սրճարանը իմս է,
ինձ Սարգիս Մատաթեան կասենի, բաղաքիս դա-
տաւորներն էլ առանց ինձի ոչ ոքի պատժելու ի-
րաւունք շտնին: Իշխոնի այս խօսքերից Սմբատը
սրաւապնդուեցաւ և ասաւ, պարոն եթէ դուք կը-
րաբեհանձեք ինձ մի փոքր պաշտպան հանդիսանալ,
և էլ իմ կարեաց չափ, իմ չնորհքը ցոյց կ'տամ:
Իշխանը գարձաւ վարպետ Մազարին ասաւ, վար-
պետ, խնդրեմ բարեհանձեք թոյլ տալ մեր օտար
եղբօրն էլ մի տեղ նստել և մի քիշ երգել:

Վարպետ Մազարը նախանձութիւնից լցուած,
վեհանձնաբար ցոյց առւեց ամենից ստոր աշակերտի

մօտ նստելու։ Իսկ Սմբատը փոխանակ վարպետի ցոյց տուած տեղը նստելու բարձրացաւ և վարպետ Մաղաքի մօտը նստեց։ Մաղաքը այս որ տեսաւ մտքումն ասաց, սա կամ իրանից յոյսով մի գիտնական է և կամ մի շատ տգէտ տղայ է, հարկաւոր է սորան մի կերպ փորձել։ Բայց Սմբատի զեղցկութեան և շարժումներին բոլորն էլ հաւանեցին և սրտով սիրեցին։ Մաղաքը նուագեց դիւանու եղանակը և ասաւ. Սմբատին, պատրաստ կաց, այստեղ նստելը օրէնքով է, սիրելիս. Սմբատն ասաւ ես պատրաստ եմ համեցէք։ Եւ Մաղաքը հարցրեց այսպէս.

Մաղաքն

Եյն ինչն է որ աշխարհի մէջ ամեն բանի վրայ կայ, Ստեղծուած ոչինչ չկայ, որ ճանաշուի առանց նա. Դու որ այդքան համարձակուար քեզնից պատասխան կուղիմ.

Ելթէ կարողութիւն չունիս սաեթուրդ տուր ու գնայ։

Սմբատը

Եյն անունն է աշխարհի մեջ ամեն բանի վրայ կայ, Ստեղծուած ոչինչ չ'կայ, որ նա անուն չունենայ. Քեզ կաղաշեմ չ'բարկանաս չնորհալի վարպետ Մա-

ղար,

Խնայէ պանդխութեանն շատ էլ մի հսկարտանայ,

Մաղաքը

Եյն ինչն է որ տարուայ մէջը ծնունդ կառնի տա. սըն և մէկ,

Եմոէ ամիս կ'ծնանի, մինը արու մինը էզ.

Եյս ինչն է որ ոսկորը սև միսն սպիտակ կաշին
չէկ.

Չատ ժամանակ կաշին կուտայ մերկ մսովը կ'մնայ:
Մմբատ

Եղանին է աարուայ մեջը ծնունդ կառնէ տառն և
մեկ,

Եմոէ ամիս կ'ծնանի, մինը արու մինը էզ.

Եյն փշատն է ոսկորը սև միսը սպիտակ կաշին չէկ,
Չատ ժամանակ կաշին կուտայ, մերկ մսովը կ'մնայ.

Մաղաքը

Եյն ինչն է որ անունը կայ, ինը չ'կայ, աննիւթ է,
Զայնը գալուս կ'ճանաշուի, անտես, աներեսոյթ է,
Ես բեղի վարպետ կանուանեմ, հարցերս գտնիս դու
թէ,

Մաղաքը այս փորձերովը, կուզէ չետրհդ իմանայ:

Մմբատը

Եյն երգն է որ, անունը կայ ինը չ'կայ աննիւթ է,

Զայնը գալուս կ'ճանաշուի, անտես աներեսոյթ է.

Պատրաստ կաց որ, այսուհետե բռ օրդ սև ու մութ է,
Մմբատը ձեռքիդ բնարը անշուշտ առնել կ'ջանայ:

Եյս երգը աւարտելուց յետոյ, Մաղաքը ասաւ
ուրեմն դու ինձ հետ հակառակումլ կուզես. Մմբա-
տը ասաւ, եթէ ձեռքիցս գայ, իրաւունքով սագդ
ողիտի խլեմ ոչ թէ միայն հակառակում, դրա հա-
մար Մաղաքը կարմրելով վեր առաւ սազը և մի

թաջնիսի եղանակաւ առաւ այսպէս.

Մաղաքն

*Ակզրէն չայրն Աստուած, հոգէն մարդ շինեց
Քանի տարեկանի շափով կատարեց.*

*Եյն ժամ որ Աղամին դրախտէն հանեց,
Հանդերձ շունէր, նա ինչնվ կառավարեց:*

Մմբատն

*Ակզրէն Հայր Աստուած, հոգէն մարդ շինեց,
Եռհսուն տարեկանի շափով կատարեց,*

*Եյն ժամ որ Աղամին դրախտէն հանեց,
1) Աստուած, մաշկեղէնից կարեց հազցրեց:*

Մաղաքն

Եյն ի՞նչ այգէպործ էր, այգուց չ'կերաւ,

Ո՞վ հրամայեց արև, լուսին դադարաւ,

Եյն նվ էր որ արեգակը դարձրաւ

Ի՞նչ պատճառով այդ նշանը ցոյց տուեց:

Մմբատն

2) Ենովին էր այդեգործ այգուց չ'կերաւ,

3) Ցեսուի խօսքով արև լուսին դադարաւ,

4) Ցեսային էր արեգակը դարձրաւ

Եղեկիայի համար նշան ցոյց տուեց:

Մաղաքն

Մաղաքն եմ քեզանից կուզեմ մեկնութիւն.

Եյն նվ էր մօտեցաւ իրան մայրերուն

1) Եննդ. 3 գ. 20 համար 2) Ժող. 30 հրես. 3) Ցես. 10 գ.
12,14 համար 4) Բագ. 20 գ. 8,10,11 հ.

Ո՞ր աղջի խօսուացքն է Ըգամայ լեզուն,
Եյն նվ էր որ ծովը արօրով վարեց:

Սմբատն

Սմբատն եմ անտրտունչ կ'տամ մեկնաւթիւն,

1) Ծրիսովոմ լիկեց իրան մայրերուն

2) Հայերէն խօսուացքն էր աղամայ լեզուն,

Եյն Ծրիստակէսն էր որ ծովը վարեց:

Եյս հարցերի պատասխանը որ տուեց Սմբատը Սարդիս աղէն ասաւ, վարպետ, հաւանեցար տուած պատասխաններին, թէ ոչ: Մաղարը քթի տակովն առաւ ինչու չէ, և այնտեղ զտնուողները ասին, կեցցէ շատ տեղով պատասխանեց. և Սարդիս աղէն ասաւ ՚երողութիւն հիմայ հերթը Սմբատինն է, թող ՚նա ասէ. և դու Մաղար պատասխանիր. Մաղարը ակտուայ կերպով մնաս չունի առաւ, Սմբատը վեր առաւ ՚ուաղարանը և մի աջամփ թաշնիս ՚ուաղելով ասաւ.

Սմբատն

Ավ իմաստուն, հանճար քաջ վարպետ Մաղար,

Պտարաստ կաց հարցմունքիս պատասխանը տու.

Ում մազը սիստակեց ամենից տռաջ,

Քննէ զրբերը ինձ էլ հասկացու:

Մաղաքն

Եյլպիսի հարցմունքից ես լաւ եմ տեղեակ

Զուր տեղ զրեանքներից վէճ մի բան դու.

1) Բ. Բ. 15 գլ. 20, 22 համար 2) Ճանապար հերկ. 366 երես:

Երբահամ սիպտակեց ամենից առաջ,
Եյդ տղայոց հարց է, բան գիտես հարցու:

Մմբատն

Դաւիթը որ եղաւ Սաւուղին փեսայ,
Ի՞նչ բան ընծայ տուեց թէ գիտես առաջ.
Այն ի՞նչ կենդանի է, որ այժմուս էլ կայ,
1) իսկ նա ստեղծուած է առանց Ասածու:

Եյս տունը որ ասաւ, Մաղաքը չ'կարողացաւ
շուտառվ պատասխան դմտնել, սազը վայր զրաւ և
սկսեց ծխախոտ ծխել, և մտածել թէ, արդիօք
ինչ կայ, առանց Ասածոյ ստեղծուած։ Սարգիս ա-
ղին տեսաւ որ Մաղաքն էլ չի պատասխանում հար-
ցրաւ, վարպետ ինչու չէս պատասխանում։ Մաղա-
քը ասաւ ներողութիւն պարոն, որովհետեւ բաւտ-
կան ժամանակ է որ չեմ ծխել, մի քիչ ծխենք,
թող նա միւս տունն էլ ասէ և ես երկուսին մէ-
կէն կ'պատասխանեմ։ Մմբատը միւս տունն էլ ա-
սաւ այսովէս.

Մմբատն

Մմբատն եմ խորամիտ, հանճարեղ գիտուն,
Հաւրերն ում միս բերին առտու իրիկուն.
Եյլ պատասխան շունիս փակուեց քո լեզուն,
Կամենհում ես ասել, մեղայ Ասածու:

Մմբատը իւր հարցը աւարտելուց յետոյ Մար-
գիս աղին ասաւ, վարպետ, բաւական է, ծխախոտ

1) Այս կենդանու մասին Յայսմաւուըքի մէջ Փետր. 29 տեսէք:

ծխացնես, թէ կարող ես, պատասխանիր, եթէ ոչ, աշուղական պայմաններով այս մարդը ձեր սազերը ու այդ ձեր հաւաքած փողը կ'խլէ։ Մաղաքն ասաւ ոլ. Մատաթեանց, եթէ այս գիշեր ինձ ժամանակ տար, վաղը անպատճառ ես կ'պատասխանեմ. Մատաթեանն ասաւ, եթէ այդպէս է, սէտք է ձեր նուտպարանները և այդ փողերը մեզ մօտ իբրև դրաւ մնան. դուք գնացէք. Մաղաքն ասաւ, թող այդպէս լինի. իրանը գնացին և սրճարանումն եղած ժողովուրդն էլ ցրուեց, իսկ Սմբատը մնաց այնտեղ, սրավիետե Սարգիս աղէն չ'ժողեց ուրիշ տեղ գնալու. Մաղաքը գնաց տուն և այդ հարցի համար շատ մտածեց, և տեսաւ որ չի կարողանում կտնի տուաւ, ամենից լաւ է, որ ես այս քաղաքից փախչիմ և հեռանամ. մինչ նրա այստեղից գնալը, և այն գիշերը ելաւ և բաղաքից փախաւ, առաւօտեան, քաղաքի ժողովուրդը հաւաքուեցան սրճարանը, որ տեսնին թէ կարողանում է Մաղաքը նորեկ աշուղի պատասխանը տայ, նրանը չ'գիտէին թէ Մաղաքը փախել է, երբոր տեսան Մաղաքը ուշանում է, մարդ ուղարկեցին նորա յետեից, բայց Մաղաքը տանը չ'գտնուելով, նորա կինը ասաւ որ, նա այս գիշեր տուն չի եկել. գնացողները թէն քաղաքում մի քանի տեղ փնտրեցին, բայց իզուր և վերջը իմացան որ նա փախել է եկան և յայտնեցին որ նա փախել է. Մատաթեանը ասաւ, Սմբատ, իրաւունքով այդ փողերը և սազերը քոնն են, ինչ ուզում

և արա, միայն կ'խնդրեմ որ, իմ սրճարանից չհեռանաս, որովհետև այստեղի ծաղիկը Մաղաքն էր, երբ նա չկայ, դու եղիր. Սմբատը մտածեց և ասաւ, լաւէ մի քանի օր այստեղ կ'մնամ և ինձ մի րիշ ճանապարհածախս հաւաքելով կ'գնամ իմ գործին. Եյս քաղաքի միւս երգիշները Մաղաքի փախչելը որ լսեցին, թանկագին ընծաներ հաւաքելով եկան Սմբատին տեսութեան, որովհետև դրանք էլ Մտղաքից դժգոհ էին. Սմբատն էլ առաւ սազերը ընծայեց նրանց իսկ փողերը ինքը վեր առաւ. այնուհետև այդ սրճարանի երգիշը միայն Սմբատն էր. բայց Սմբատը Զէյթունը չէր մոռանում, աղատ ժամերում քաղաքից դուրս կենէր և դէպի Զէյթուն գնացող ճանապարհների մասին հարց ու փորձ կաներ, ծանօթանալու համար:

Հիմայ թող Սմբատը այստեղ մնայ, իսկ մենք ընթերցողին տանենք Սմբատի ծնողաց մօտ Արմաւիր քաղաքը. Սմբատի ծնողները երբ նրա վերջին մնար բարեաւը լսեցին համարեայ չէին հաւատում որ նա հաստատ պիտի գնայ. դրա համար, թոյլ կերպով թողին նրան տանից հեռանալու, բայց երբ երրորդ և չորրորդ օրը վրայ հասաւ և Սմբատը արդէն հեռացել էր, նորա հայրը՝ Սաղաթէլը կը նոջը Մարգարիտին մնաս բարով ասաւ, ես մինչեւ Սմբատին չ'գտնեմ, էլ ինձ տուն գալ չկայ ասաւ և իւր ձին հեծնելով, ընկաւ ճանապարհ քաղաքէ քաղաք, երկրէ երկիր, ամեն մի անցորդից և պա-

տահողից հարցնում էր, բայց ոչ ոք շեր իմանում
նորա որդու տեղը. Օրուայ մէկում Սաղաթէլը ճա-
նապարհին տեսաւ որ առաջից մի կարաւան է զա-
յիս, մտքումք գրեց որ նրանցից հարցնէ, սրանք
տուաւ ման եկող մարդիք են, ամեն տեղից տեղե-
կութիւններ կունենան, տեսնենք իմ Սմբատի մա-
սին էլ մի բան դիտեն թէ ոչ, երբ որ մօտեցան,
Սաղաթէլը, յարգելով նրանց պետին, բարեեց խո-
նարհաբար և խնդրեց որ կարաւանը կանգնեցնեն
նրանք այնպէս էլ արին. Սաղաթէլն տուաւ տէր
վաճառականն, իմ ցաւը շատ խիստ է. եթէ բերա-
նացի տսեմ գուցէ չհասկացուի. թողէր որ երգե-
լով հասկացնեմ, և իր դաշտիլը սաղի տեղ համա-
րելով, ոկտեց հարցնել այսպէս.

Սաղաթէլն

Վաճառական բեղնից մի բան հարցանեմ,

Պարգեէ մէկ բարի լուր վաճառական.

Որդիս կորուցել եմ, հարց ու փորձ կանեմ.

Սրտիս մէջ վառվում է հուր, վաճառական:

Վաճառականը որ լսեց դրա երգելը ասաւ,
սպասիր հերթով ասենք և ասաւ.

Վաճառականն

Այդ ի՞նչպէս կորուստ է սիրելի եղբայր,

Որդուկ անունն ինձի տուր իմ սիրելի.

Պարտս լինի շուռ գտմ ընդհանուր աշխարհ

Դժնեմ, թէ կուղ լինի ուր իմ սիրելի:

Սաղաթէլն

Որդիս մէկ ու ճար է անսւնը Սմբատ,
Տասնութը տարեկան մի երիտասարդ
Միջրին ոսկէ գօտի, ծոցին կայ սահախ,
Երգելով կածէ սանթուր, վաճառական։

Վաճառականն

Սմբատին ես տեսայ Բաղէշ քաղաքում
Սարդոի սրճարանը սանթուրն առտջին
Երգի միջով յաղթեց երգիշ Մաղաքին
Ճատերին էլ եկաւ դուր, իմ սիրելի։

Սաղաթէլն

Սաղաթէլն եմ կուկամ Սմբատիս համար,
Ռւբեմն իմ որդին տեսած ես եղբայր,
Գնալու եմ, բայց չեմ գիտէ ճանապարհ,
Ըստո կուկամ այսպէս տխուր, վաճառական։

Վաճառականն

Վաճառական Կարապետն եմ նազարով,
Ըստուառուս միշտ է հազար-հազարով,
Ճանապարհը ցոյց տամ և գրեմ գրով.
Մի սլըտտուի անմեղ դուր իմ սիրելի։

Երգեցողութիւնը վերջացնելուց յետոյ, վաճառականը վեր առաւ թուղթ ու զրիշ և ճանապարհի գծապրութիւնը նկարելով ամեն նշաններով ցոյց տալու համար գրեց և յանձնեց Սաղաթէլին, և տուաւ, կ'գնաս Բաղէշ և կ'հարցնես Սարգիս Մատաթեանի սրճարանը. ճիշտ այնտեղ կ'փնդրես Սըմ-

բատին. Սաղաթէլը տուաւ գիրը և չնորհակալ եղաւ վաճառականից ու ընկաւ ճանապարհ, գնաց հասաւ Բագէշ և հարցնելով դուաւ Սարգիս Մատաթեանի սրճարանը, իջաւ ձիուց. Նրան տեղաւորեց ախոռում և ինքը մտաւ սրճարանը մի քանի սուրճ խմեց և տեսաւ որ Սմբատը այնտեղ է, նրան ոչինչ չասաւ. Սմբատն էլ նրան ծանօթութիւն շըլայտնեց նրա համար որ, առանձին կերպով նրան համոզէ և յետ դարձնէ: Այդպէս մնացին մինչև մութին ընկաւ, մարդիկ հեռացան և այստեղ մնացին միայն Սմբատն, իւր հայրը և սրճարանում ծառայողը: Եառան Սաղաթէլին ասաւ եղբայր, դու էլ այստեղ պիտի մնաս թէ ուրիշ տեղ ունիս գնալու, Սաղաթէլն ասաւ, ուրիշ տեղ չունիմ, եթէ կ'յոժարանառ այստեղ կ'մնամ. Սմբատը ասաւ դա մեր երկրացի է, թոյլ տնւր, թող այստեղ ընի. Վերջապէս հայր ու սրդի միասին անկողին մտան: Սաղաթէլն ասաւ սրդի, այս ինչ բան բռնեցիր, դու մեզի ասացիր ես սիրահարուած եմ և Զէյթուն պիտի գնամ սիրելոյս տեսնելու, ինչնւ եկար այստեղ մնացիր և ինձ շարշարելով այստեղ բերիր: Սմբատը հօրը միամտացնելու համար ասաւ, ներիր հայրիկ, ես սխալուեցայ որ ձեզ չլսեցի հիմայ մի քիշ հանգիստ եղիր ընիր, առաւուը կելնենք և միտոին կ'գնանք մեր տուն: Սաղաթէլը համոզուեցաւ այդ խօսքերով և ընաւ: Առաւուը երբ Սարգիս Մատաթեանը եկաւ սրճարանը, Սմբատը

իրան թոյլավութեան համար Մատաթեանից խընդ-
րում է երգելով ու ասում այսպէս.

Սմբատն

Խնդրում եմ քեզանից ով բարի իշխան,

Որ թոյլ տաս ես գնամ իմ հայրենիքս.

Ցաւեր ունիմ սաստիկ, անթիւ զանազան
Խնդրեմ թոյլ տաս, գնամ իմ հայրենիքս.

Եյս գիշեր երազումս տեսայ հայրիկս,

Լալում մորմօքում էր անուշ մայրիկս

Արտասունը թափեյով ազնիւ ըոյրիկս

Խնդրեմ թոյլ տաս գնամ իմ հայրենիքս:

Սմբատն եմ ես մի նորահաս մին ու ճար,

Իրաւ այսօր գլխիս մթնել է աշխարհ,

Հայր ու մայրս մորմօքում են ինձ համար,

Խնդրեմ թոյլ տաս գնամ իմ հայրենիքս:

Մատաթեանը որ լսեց այս երգը, ասաւ, որ
այդպէս է Սմբատ, ես չեմ արգիլի քեզ, գնայ Աստ-
ուած քեզ հետ. Սմբատը Մատաթեանից չեսրհտ-
կալ եղաւ և մնաս բարով ասելով հօր հետ միա-
սին դուրս ելան սրճարանից. ձին քերել տվին և
երկուսն էլ հեծան ու ընկան ճանապարհ. մի քիշ
ուր բազարից հեռացան, ճանապարհը երկուսի բա-
ժանուեց, Սմբատը թռաւ իջաւ ձիուց և միւս ճա-
նապարհով գնալու եղաւ, հայրն էլ իջաւ ձիուց
և փաթաթուեցաւ նրա վզով, համբուրռում էր և
լաց լինում. Սմբատն ասաւ մի լաց լինիր հայրիկ

չան, ես երբէք ձեզ չեմ մոռանայ. բայց մինչև իմ
սիրելոյս չ'զտնեմ անկարելի է որ ես տուն դառ-
նամ, աղօթիր ինձ համար որ ես աջող ընթացք
ունենամ. սիրելոյս առնեմ և յետ դառնամ. իսկ
հայրն դարձեալ անհամբեր լաց էր լինում և խընդ-
րում մի գնար իմ մէկ ու ճար որդեակ:

Սմբատը տեսաւ որ, հայրը շատ է լալիս և չէ
թողնում գնալու՝ ասաւ հայրիկ, ինձ բաց թող, մի
երկու խօսք եկաւ միտքս երգելու, ասեմ զու լսիր,
հայրն ասաւ ոչ որդի, ինչ որ ասես զուր է. Սմբա-
տին ասաւ տես հայրիկ սանթուրին ինչ է ասում և
նուազեց զուրէյիթ եղանակով այս երգը.

Ո ր դ ի ՛ս

Մի լար այդպէս անմիշիթար
Մի լար հայրիկ, մի լար մի լար,
Օրհնութիւնով քից ճանապարհ
Մի լար հայրիկ, մի լար մի լար:
Հայրն ասաւ լսիր որդեակ ես էլ տուն.

Հ ա յ ը ն

Որդի թէ որ ինձ կ'սիրես,
Մի գնայ որդիս մի գնայ,
Երաւ իմ սիրտս կաւերես,
Մի գնա հոգիս մի գնա:

Ո ր դ ի ն

Սուկ մի անիր, անմեղ ու զուր,
Ինձ գնալու հրաման տուր,

Գնում եմ սիրեկանիս հիւր,
Մի լար հայրիկ, մի լար մի լար:
Հայր ը ն

Ինչպէս հրաման տամ գնառ,
Գնացիր այնտեղ կ' մնաս
Գուցէ պատահի մէկ վնաս
Մի գնա կեանքս, մի գնա:

Ո ը դ ի ն

Եթէ որ ես այնտեղ մնամ,
Իմ ոտեղծողս ուրանտմ,
Կերպ-կերպ պատիժներ ստանամ.
Մի լար հայրիկ, մի լար մի լար:
Հայր ը ն

Եյդ երդմանդ հաւատացի,
Բաւէ որբան, որ ես լացի,
Քանիմ օր ինձ մօտ մնացիր
Մի գնա յոյսս, մի գնա:

Ո ը դ ի ն

Հայր, Սմբատից մի նեղանար,
Գնալու եմ չ'կայ հնար
Բայց միայն ձեզ չեմ մոռանար
Մի լար հայրիկ, մի լար մի լար:

Հայր ը ն

Սաղաթէլն եմ հասակս տռած,
Մի թող այսպէս ճիտս ծռած,

Մինչեւ գառ կ'մնամ մեռած

Մի զնար, գառս մի զնար,

Երգեցողութիւնը վերջացնելուց յետոյ Սմբատն
ասաւ հայրիկ, օրհնիր ինձ, որ ես անմինառ իմ
ճանապարհը շարունակեմ և իմ նողատակին հասնիմ։
Սաղաթէլը տեսաւ որ էլ հնար չկայ, չի կարողա-
նում սրդուն յետ կանգնեցնել, ասաւ, որսվիճակ
դու խոստացար որ ինձ չմոռանաս, Սստուած քեզ
օրհննէ և պահպաննէ, որ դու նողատակիւդ հասնիս և
բարով յետ դառնաս։ Սմբատն համբուրեց հօր ձեռ-
քը և հայրը նորա ճակատն և լալով բաժանուեցան։
Սաղաթէլը նոտաւ իւր ձին և դարձաւ դէպի իւր
բաղարը, իսկ Սմբատն ուղեղորուեց դէպի Զէյթուն։
Սմբատն իր յոյն Աստծոյ վրա դրած, չարշարուե-
լով հասաւ իր ցանեկալի Զէյթուն քաղարը. պատա-
հեց մի մարդու և իրան համար մի բնակավայր ու-
ղեց գտնել հարցնելով։ Այդ մարդն ասաւ, մի քիչ
առաջ որ երթաս, կ'պատահիս մի աղբիւրի և այդ
աղբիւրի մօտ կայ մի սրճարան, որ պատկանում
է Մուշեղ Բագրատեանին. այս քաղաքում ամենից
երեկի և մարդաշատ սրճարանն այն է, այնտեղ
կարող ես երգելով օգտուել։ Այնտեղ կայ նաև մի
երգիչ օրիորդ նոյեմզար անունով, որն այդ սրճա-
րանի տէր Մուշեղ Բագրատեանի աղջիկն է և Յով-
սէփի իշխանի հարսնացուն, թէ այս քաղաքում է
թէ նորա սահմաններում նրա հետ երգող և նրա
հարցերին պատասխանող չկան. Յովսէփի Մելիքեա-

նը այս բաղաքի կուսակալի տեղապահն է, Նոյեմ-
գարն այս հինգ տարի է սր նշանուած է այդ Յով-
սէփի որդու հետ, միայն չի պսակւում, որովհետեւ,
նա ուխտել է որ երբ իրան մի որեւէ երգիշ յաղ-
թեց, այնուհետեւ նոր պիտի պսակուի. Եթէ չնորհը
ունիս, այդպէս մի բան կարողանաս անէ, բաւա-
կանին օգուտ կ'ստանաս պ. Յովսէփից և նա այնու-
հետև կ'պսակէ իւր որդին և հարսանիք կանէ. Սրմ-
բատն ասաւ, այդ իմ գործը չէ, ես մի անծանօթ
մարդ եմ, ինձ ինչ պէտք է ուրիշների հետ հակա-
ռակուել. Եւ այն մարդու մօտից հեռանալով զնաց
ուղիղ այդ ցայց տուած սրճարանը, ներս մտնելով
տեսաւ որ մի սիրուն օրիորդ նստած է վերի կող-
մը. Սմբատը նստեց մի քիշ հանգստացաւ, մի եր-
կու սուրճ խմեց. Նոյեմզարը տեղից ելաւ, նուազա-
րանը մի լաւ լարեց և սկսեց նուազել կանգնած ու
խաղալ, և սւլիդ որ շատ հրաշալի ձայն և նուա-
դել գիտէր, մի երկու եղանակ կրկնելուց յիտոյ,
Յովսէփ Մելիքեանը տեսաւ Սմբատին հիացած նրա
գեղեցկութեամբ և նրա մօտի սանթուրին ևս տես-
նելով մտքումն ասաւ, սա մի չնորհալի վարպետ
է երեսում, եթէ իմ հարսին յաղթելու լինի, կարող
է սա լինել, մտածեց և հարցրաւ, այդ ինչ գործիք
և մօտինդ եղբայր, սանթուր է պարոն, պատաս-
խանեց Սմբատը, ուրեմն նուազել և երգել կարող
ես չէ, այն պարօն մի քիշ գիտեմ. Ուրեմն ես քեզ
մէ բան էլ կասեմ, եթէ կարօղացար այս աղջկան

յաղթել, այն ժամանակ ինչ կամք ու նպատակ ունիս, անշուշտ ես կ'կատարեմ. Սմբատն ասաւ կը փորձուինք, եթէ Աստուած մի քիչ չնորհք տուել է կ'տեսնեք: Յովսէփը դառանալով նոյեմզարին տսաւ, պատրաստ կաց որ, այս մարդի հետ ոլիտի փորձուիք: Նոյեմզարն ասաւ ես պատրաստ եմ, ու սկսեց խաղալով նուագել գիւանիի եղանակով, այսպէս:

Նոյեմզարն

Թէ կարող ես համարձակուի արի առաջ պատանի
Տեսնիմ թէ ինչ մտքով մտար դու այս բաղաք պատանի,
Ուրեմն լաւ զգուշացիր դու բեղն ու քեղ պաշտ-
ուաննէ,
Թէ չէ սրտումք կ'մխեմ նետու նիզակ ոլատանի.

Սմբատն

Համբերէ որ հերթի իմն է ով իմ տեղեակ նաղանի,
Քեզ նմանի հետ խօսալու ունիմ փափակ նաղանի,
Ըուտափոյթ ինձ մի անտրդիր խօսակցութեան մի-
ջոց տներ-
նս մի տպէտ ու անկիրթ եմ, դու հեղինակ նաղանի:
Նոյեմզարն

Երբէք ոչ ոք չի անարդի եթէ իրան գիւտենայ,
Իմացիր որ կ'հալածուի ով ինձ դէմ վստահանայ,
Մուկն ինչ է որ կարողանայ, կատուի ճանկին դի-
մանայ

Մկի համար մահ է, միայն, կատուին կտտակ, պատնի:

Սմբատն

**Եյս մասով ես աշխարհի մեջ շատ ու շատ տեղ պը-
տառյ**

**Մի երգիշ կամ մի հեղինակ ինձի յաղթող չկտայ,
Մի կարծիր թէ չդիտութեան ես այս քաղաք ներս
մտայ**

**Բերանդ ուղիղ բաց արա, լեզուդ շիտակ, նազանի:
Նոյեմզարն**

**Լսէ ով դու անմիտ յիմար, ես քեզ ասեմ իրաւը
Որսի նման ճանկս ընկար իմացիր գլխիդ ցաւը
Նթէ որ լսած լինէիր նոյեմզարի համբաւը,
Մէկէնի մէկ չէիր լինի դու հակառակ, պատանի:**

Սմբատն

**Բարի համբաւդ լսելով եկել եմ քեզ տեսութիւն
Կամ սանթուրս քեզ ընծայեմ կամ քու սազդ ինձի
զուն**

**Բայց ասեմ իմ նպատակս յայտնի լինի ամենուն,
Սմբատն եմ ես քեզ որսալ ունիմ նպատակ, նազանի:**

**Եյս երգից յետոյ նոյեմզարն նուազեց թաջ-
նիս ու կրկին երգեց մի դարա հէջջայ:**

Նոյեմզարն

Իմացիր տես ինչ եմ ասում այ տղայ,

Թէ կարաս պատասխան տիուն, ո, հիւն լրէ,

Թէ խելք ոմնիս վազով 1) վինդ տուր գնայ
Ընկար փոսը ինչպէս կէն ո, հիւն, ըրէ:

Սմբատն

Երդէն պատրաստուած եմ, խօսիր այ աղջիկ,
Բայց ինձ էլ մի փոքր լիուն, ո, հիւն, ըրէ,
Վինս թեղ տվող շեմ, թող լսեն մարդիք.
Ինչ ես դառել այդպէս մէն, ո, հիւն ըրէ:

Նոյեմզարն

Ուրեմն դու շես զիտեր թէ ես ով եմ,
Ամբողջ աշխարհ զիտէ, զլուխոս ինչ զովեմ,
Ես մի խոր ու անյատակ ովկիանոս, ծով եմ,
Քեզ կ'խեղդեմ անմեղ դա, ո, հիւն, ըրէ:

Սմբատն

Դու թէ ովկիանոս ես, ես մի նաւավար,
Հանապազ ծովերում շուր կուգամ ճարտար,
Խոր տեղից դուրս գալու կ'գտնեմ հիար,
Չկայ ինձ վնասող ջէ, ո, հիւն ըրէ:

Նպեմզարն

Նոյեմզարն եմ տրդէն քեզ կ'տամ իմաց
Թշնամիդ ճանաշէ, աշքերդ լեն բաց.
Մտածէ պաշտպանէ կեանքդ զգուշ կաց.
Սրտումդ կ'սխմեմ սէ, ո, հիւն, ըրէ:

Սմբատն

Սմբատն եմ հակառակ քեզ նման շարին,
Կանչում եմ ո. Սարգիս բաջ զօրավարին

1) Վին ստեղուց:

Իմացիր որ քեզ պէս հարիւր հաղարին
Ես կ'սպանեմ առանց թոյ, ո, հիւն, ըրէ:

Այս երգը աւարտելուց յետոյ Յովսէփի իշխանը
մէջ եկաւ և ասաւ, Նոյեմդար, քաւական է ինչ որ
գու ասիր, հիմայ էլ հերթը Սմբատինն է. բայց
Սմբատն ասաւ ոչ, պարոն թող այսօր Նոյեմզարն
ասի, և վազը ես կ'ասեմ. Յովսէփին ասաւ, դուք զի-
տէք, ես քեզ համար եմ ասում, որ չ'ասես թէ
ինձ սլաշտպանող չ'կայ. Ընորհակալ եմ պարոն դուք
ողջ լինիք: Նոյեմզարը մտածեց որ հասարակ խօս-
քերով շի կարողանում Սմբատին կապել, սկսեց ո.
գրքերից և զանազան իմաստութիւններից հարցեր
առաջարկել, հիմա տեսնենք Նոյեմզարն ինչ կ'հար-
ցնէ և Սմբատը ինչ կ'պատասխանէ.

Նոյեմզարն

Հսէ քեզ եմ ասում ով երիտասարդ,
Մտածէ հարցերիս պատասխանը տաս,
Երբէք ինձի յաղթող շեմ տեսած մի մարդ,
Գիտեմ վերջը դու էլ սանթուրդ կուտաս:

Սմբատն

Ճատ մի քամահարի օվ ազնիւ աղջիկ,
Եցէ թէ յաղթուիս, ինձ խոնարհանաս,
Ցաղթող կ'գտնուին հեզ, խոնարհ մարդիկ,
Բայց դու հպարտ ու շատ վերեից կ'գաս:

Նոյեմզարն

Այն ի՞նչ դուռ էր առանց փակել մնաց փակ,

Ով բացեց այն դուռը, ներս մտաւ շիտակ,
Եյն ովք է միշտ տիրոջ կամքին հակառակ,
Բնշպէս որ դու այժմս հակառակ կաս:

Սմբատն

Եյն տաճարի դուռն էր, որ մնում էր փակ,
Ցիսուս տէրն էր բացեց ներս մտաւ շիտակ,
Սատանէն էր Ցիրոջ կամքին հակառակ
1) Հպարտութեամբ երկնուց թափաւ երեք դաս:

Նոյեմզարն

Եյն ովք էր որ քարին զարկեց, բխաց ջուր,
Եյն ովք էր հազար մարդ մեռցուց առանց սուր,
Եյն ովք էր որ իրան կնոջն ասաւ բուր,
Երբեք թէ մի որից չ'բաշէ վնաս:

Սմբատն

2) Մովսէս մարդարէն էր քարից հանեց ջուր
3) Սամոննի էր հազար մարդ մեռցուց առանց սուր
4) Արրահամն էր իրան կնոջն ասաւ բուր,
Եյգիսովի էլ մնաց տպատ անիմնաս:

Նոյեմզարն

Նոյեմզարն եմ երգիշապետ հաստատուած,
Ե՞նչ բանի համար էր զղջացաւ Աստուած,
Եյն ովք էր երկնքից կրակ թափեց ցած,
Եյրեց մարդիկ յիսուն յիսուն և ոչ տաս:

1) Ժող. 134 երես: 2) Ելից 17 դ. 3) Գատ 15 դ. 15 համար
4) Օհնուք. 20 դ. 1 համար:

Սմբատն

Սմբատն եմ ո. Երրորդութեան յուսացած

1) Զբհեղեղի համար զղջացաւ Աստուած.

2) Եղիան էր երկնքից կրակ թափեց ցած

Այրեց մարդիկ յիսուն, յիսուն և ոչ տառ:

Եյս հարցերից յետոյ, Յօվսէփ իշխանը ոտքի
կանգնեց և ասաւ կեցցես վարպետ Սմբատ, կեցցես.
և Նոյեմզարին ասաւ, Բնշպէս է Նոյեմզար Նոր
վարպետը, ասաւ վնաս շռնի, բայց վերջը Նայե-
ցէր: Նոյեմզարը նորից սկսեց նուագել և երգել
այսպէս.

Նոյեմզարն

Եժմ քեզ հետ խօսենը երեք-երերով,

Երկնքումը վկայ երեքը Բնշ է,

Երեք էլ կան երկրումը նոյն ձեռվ,

Փրկչական աւանդած երեքը Բնշ է:

Սմբատն

Եյն երեք վկան օր երկնքումը կան,

3) Հայրը, որդին, հոգին երեքը այն է,

Երեք էլ կան երկրումը նոյն նման,

Զուրը արիւն հոգին, երեքը այն է:

Նոյեմզարն

Ո՞վ գրեց ցողի տակ փորձելով բուրդը,

Ով ցրուեց Սգիթոփէլի խորհուրդը,

1) Եննդ. 9 դ. 10 համար: 2) Պազ. 1 դլ. 9 համար. 3) Տով-
հաննու ա. թղթ. 5 դլ. 7 համար:

Դաւիթը որ թուեց իւր ժողովուրդը,
երեք բան յայտնուեց, երեքը լինչ է:

Սմբատն

- 1) Գեթէօն ցօղի տակ զրեց այն բուրդը,
Քուսին ցրուեց Արիթոփէլի խորհուրդը
- 2) Դաւիթը որ թուեց իր ժողովուրդը,
Սովոր, սուրբ, մահը երեքը այն է:

Նոյեմզարն

Եյն ով էր հաւաքեց մեծամեծք ընտիր,
Սստուած իրան մեղքի դէմ տուեց վճիռ,
Յանկարծ պատի վերայ դրուեց երեք գիր
Երրէր մարդ շիմացաւ երեքը լինչ էր:

Սմբատն

- 3) Յազդասար հաւաքեց մարդկանց ընտիրը,
- Եյն գրերն էր իրան մեղաց վճիռը,
- 4) Իսկ Դանիէլ կարդաց այն երեք գիրը,
Մանէ, թեկեղ, փարէս, երեքը այն է:

Նոյեմզարն

Նոյեմզարն եմ մի օրիորդ անելման,
Դու ինձի դէմ մի ձեանայ գիտեական,
Սստուած մարդուց պահանջում է երեք բան,
Կարճ ես իմանալ, երեքը լինչ է:

Սմբատն

Սմբատն իմ Աստուած է իմ օգնականը,

1) Թագ. 6 գլ. 36-38 համար: 2) թ. Բագ. 17 գ. 15 համարը
և թ. Բագ. 24 գ. 10,18,20 և 25 համար: 3) Դան. 5 գ. 25: 4) Գոտ-
եղ. 1,2,4,5 համար:

Կուտամ քո հարցերիդ նուրբ պատասխանը

Սիրելի քո ասած այդ երեք բանը,

1) Հաւատ, յոյսը, սէրը երեքը այն է:

Ես հարցմունքների ժամանակ բաւական փող
հաւաքեցին որ, ով որ յազմէ, փողը նրան տան,
ու նոյեմզարին ասացին. Էլ բան ունիս հարցնելու
թէ վերջ պիտի տառ, ասաւ ի՞նչ վերջ տալ, ի՞նչ
բան, այս օր կամ ես իմ սազը նրան պիտի տամ,
կամ նա իր սանթուրը ինձ, ու նորից նուազելով
դուրէիթ հարցուց.

Նոյեմզարն

Դարձեալ նորէն քեզ հարցանեմ,

Սոզոմոն տաճարն ուր շինեց,

Քանի սիկդ արծաթ տուեց, (1 սիկդը 2 դրամ է)

Սկզբից այն տեղն ով գնեց:

Սմբատն

2) Սոզոմոն տիրոջ տաճարը

Ուռնէի կալի մէջ շինեց,

Ցիսուն սիկդ արծաթ տուեց,

3) Եյն տեղը Դաւիթը գնեց:

Նոյեմզարն

Եյն ով էր որ միշտ անդադար,

Հալածում էր այրն արդար,

Սաւուղ թագաւորի համար,

Սամուէլին ով վեր հանեց:

1) Ա. Կորն. 13 գլ. 13 համար: 2) Բ. Թոք. 24 գ. 24 համար:

3) Բ. Մեսյ 3 գ. 1 համար:

Սմբատն

Եյե սաւուզն էր միշտ անդադար,
 1) Հալածում էր Դաւիթի արդար,
 Սամուէլ Սաւուզի համար
 Վհուկ կնիկը վեր հանեց:

Նոյեմզարն

Ո՞վ բացեց բերանը իշուն,
 Որ խօսեցաւ հետ իւր տիրուն,
 Ըդամ իւր անդրանիկ որդուն,
 Ի՞նչ մտքով Կայեն անուանեց:

Սմբատն

2) Աստուած իշու լեզուն բացաւ,
 Իսկ Բագամու հետ խօսեցաւ
 Ըդամ ծնաւ մարդ ստացաւ
 Եյդ մտքով 3) Կայեն անուանեց:

Նոյեմզարն

Տէրի մեր Հայր երկնաւորը
 Ըդամ ստեղծեց մը օրը,
 Կայենն ատեց իր եղբօրը,
 Արելին ինչնվ սպանեց:

Սմբատն

Տէրն մեր Հայր երկնաւորը,
 Ըդամն ստեղծեց ուրբաթ օրը,

1) Ա. թէ. 28 դ. 10 համար: 2) Թզոց 22 դլ. 22 համար:
 3) Կայեն ստացուած տսել է:

Կայեն իւր Սբել եղբօրը

1) Սուր զիզիկ քարով սպանեց:

Նոյեմզարն

Նոյեմզար է իմ անունը,

Տուր խօսքերիս մեկնութիւնը,

Ով բռնեց բռով արիւնը,

Ո՞ր գէպի երկինքը ցանեց:

Սմբատն

Սմբատ է իսկ իմ անունը

Տամ խօսքերիդ մեկնութիւնը

2) Զար Յուլիանոս իւր արիւնը

Բռով վեր երկինքը ցանեց:

Նոյեմզարը բոլոր հարցերին Սմբատը մի առմի
պատասխանելուց յետոյ, Յովսէփի իշխան վերջ տալ
տուեց երգեցողութեան և ժողովուրդը սրճարանից
ցրուելուց յետոյ Սմբատին տարաւ իրանց տուն։ Ե-
րեկոյեան հացկերութիւնից յետոյ Սմբատին ասաւ
ինչպէս է վարպետ կ'կարողանաս նոյեմզարին յազ-
թել թէ ոչ. Սմբատն ասաւ եթէ Աստուած օդնէ
կարող եմ, տեսնենք վաղը։ Առաւոտը տեղներից
վեր կացան թէյ խմելուց յետոյ վնացին դարձեալ
նոյն սրճարանը, ուր ժողովուրդը հաւաքուած նը-
րանց էին սպասում։ Սմբատն ու Յովսէփի իշխանն
էլ նստած մի մի սուրճ խմելուց յետոյ Յովսէփին
ասաւ, նոյեմզար պատրաստուիր, որ այս աւուր
հարցի հերթը Սմբատինն է. Նոյեմզարը ասաւ ևս

պատրաստ եմ թող հարցինէ, այնուշնետե Սմբատը
լարեց սանթուրը և երգեց այսպէս.

Սմբատն

Քեզանից հարցանեմ ճարտար օրիորդ
Հրեշտակաց զնտի գումարը քանիս է,
Եյն ի՞նչ սլարիսալ է որ լուսով անաղօտ
Կամ ինչով է շինուած շարը քանիս է:

Նոյեմզարն

Ինչ որ կամիս հարցու ինձ համար չէ փոյթ,
1) 2) Հրեշտակաց զնդի գումարն է տասերկուս,
Եյն վերին Երուսաղեմն է անաղօտ,
Ակունքներսվ շինուած շարն է տասերկուս:

Սմբատն

Եյն քաղաքի բարձրութիւնը նրբան է,
Երկարութիւն լայնութիւնը նրբան է,
Ջուրջանակի քառանկիւնը նրբան է,
Ասպարէղաչափ հաղարը քանիս է:

Նոյեմզարն

Եյն քաղաքի բարձրութիւնն է հաւասար,
Երկարութիւն լայնութիւնն է հաւասար,
Ջուրջանակի քառանկիւնն է հաւասար,
3) Ասպարէղաչափ հաղարն է տասերկուս:

Սմբատն

Եյն ավ էին մահի շեղան արժանի,

1) Յոյժ. 21 դ. 10, 22 համար; 2) Մաղթէսսէ 26 դէ 52 հա-
մար; 3) Յոյժ. 21 դ. 16 համար:

Գետինը պատռաւ, դժոխքն իջան կենդանի,
Ի՞նչ մարդ կտրեց ջուրը գետ Յորդանանի.
Այն ջրից դուրս հանած քարը քանիս է:

Նոյեմզարն

- 1) Կորխու դադան մահի շեղան արժանի,
Գետին պատռաւ, դժոխքն իջաւ կենդանի.
- 2) Յեսուն կտրեց ջուրը գետ Յորդանանի,
Այն ջրից դուրս հանած քարն է տասերկուս:

Մմբատն

Մմբատն եմ ուսումով ուսեալ կրթուած.
Ես քեզ յաղթելու եմ թէ կամի Աստուած,
Այն բնի ծով էր եղանց վրա հաստատուած,
Այն եղների թիւ համարը քանիս է:

Նոյեմզարն

Նոյեմզարն եմ չնորհք ունիմ Աստուծով՝
Երբէք չեմ յաղթուի քեզ պէս տղայով,
3) Սոլոմոնն էր շինեց եղանց վրա ծով,
Այն եղների թիւ համարն է տասերկուս:

Այս հարցերից յետոյ Մմբատը տեսաւ որ, Նոյեմզարն էլ լաւ չնորհք ունի, ասաւ, արդեօք չեմ
կարող մի այնպէս բան հարցնէ, որ սա չ'կարողա-
նայ պատասխան գտնել. մտածեց և հարցրաւ այս-
պէս: Ղօշմա:

Մմբատն

Լսէ դարձեալ ես քեզ ասեմ քանիմ բան,

1) Բգ. 16 գ. 1-35 հ.: 2) Ցես. 4 գլ. 3) Գ. Բագ. 7 գլ. 23 հ.:

Էլ խօսենք հին ու նոր կտակարանով,
Պատրաստուի որ տառ խօսքերիս պատասխան
Դիտեմ որ հմուտ ես ամեն մի բանով։

Նոյեմզարն

Ոչ թէ քանիմ, կուզես հարցու հաղար բան,
Կմեկնեմ հին ու նոր կտակարանով
Պատրաստ եմ որ տամ հարցերիդ պատասխան
Լիովին լցուած եմ ամեն մի բանով։

Սմբատն

Հրեայը որ բռնեցին մեր Տէր Յիսուսին,
Եյն ով էր որ փախաւ մերկ, կտան ուսին,
Կարդա տամն և չորս գլուխ Մարկոսին
Ով լինեն խմացի տւետարանով։

Այս տան մեկնութիւնը Նոյեմզարը չ'կարողացաւ տալ. վասն զի տւետարանումը չ'կայ դրա մեկ-
նութիւնը, Սմբատն ասաւ, ուրեմն լոիր միւս տունը.

Սմբատն

Աստուած իրան բերանով զրեց վեց անուն,
Սահակին, Յիսուսին մին էլ Յովհաննուն,
Միւս երեքն ով են այն էլ գտի դուն,
Վեց մարդ էին Աստուածադիր անունով։

Նոյեմզարը այս տունը ես չ'կարողացաւ բա-
ցատրել. Սմբատն երբորդ տունը ասաւ։

Ա) Խմացէլն է, Եննդ. 16 գ. 11 համար. Բ) Սովորոնն է ա.
Մեաց. 22 զլ. 9 համար. Յ) Յովհանն էր Գ. թող. 13 զլուխ։

Սմբատն

Ըռարեալը Յիսուսին ասին ով է մեծ,
Եյստեղ մի մանուկ կար, գրկեց և օրհնեց,
1) Եյն մանուկի անումն լնչ էր շյայտնեց,
Դէ. պատմէ Սմբատին բո սուրբ բերանով:

Բոլորն էլ լսեցին և տեսան որ Նոյեմզարը
յաղթուաւ և սազը յանձնեց Սմբատին, միարերան
ասացին կեցցես Սմբատ, Յովսէփի իշխաննն էլ տե-
ղից վեր կացաւ, Սմբատի ճակատը համբուրելով
կեցցես ասաւ և այն հաւաքած փողերը յանձնեց
նրան: Նոյեմզարն էլ ելաւ տեղից և իւր սկէսրայր
Յովսէփի ձեռքը համբուրելով մօտը կանգնեց և ա-
սաց այսօր իմ ուխտը կատարուեց, այսուհետեւ ձեր
իրաւասութեան ենթակայ եմ. ինչպէս ձեր կամքն
է կատարեցէք: Սմբատը Նոյեմզարին խնայելով սա-
զը յետ տուեց իրան և պ. Յովսէփի հետ զնացին
իրանց տուն: Յովսէփին ասաւ Սմբատ զան, որով-
հետեւ դու իմ հարսնացուին յաղթեցիր, որ նշան-
ուած էր իմ ուսումնագէտ Լսոն որդուս հետ, այժմ
ես կ'պատրաստուիմ իմ որդուս պսակելու Նոյեմզա-
րի հետ: Միայն ես խոստացել իմ բեզ, որ բո նը-
պատահկդ էլ կատարեմ, ուրեմն ասա, տեսնեմ լնչ
ցանկութիւն ունիս: Սմբատը սանթօւրն արաւ ձեռ-
քը և առաւ լոիր պարօն որ ես յայտնեմ բեզ իմ
գաղտնի նպատակը, և երգեց.

Հ) Խնամատիոն էք ուս, Ժիի. Արքայ բառ. 2 հատ. 284 երես:

Սմբատն

Լոէ պարոն, լոէ վիրքերս բանամ.

Քաղցրութեամբ ընդունէ դառն աղաղակս,

Միրոյ բոցերու մէջ վառուած կմնամ

Լոէ որ քեզ յայտնեմ, դադտնի կրտկո:

Մի օրիորդ ինձ գցել է քարէ քար,

Ենունը Սօֆիա գերազնիւ խոնարհ,

Վառվում եմ էրէցւում եմ ես նորա համար,

Խոկ նա է իմ կեանքս, իմ հոգեակո:

Սմբատն եմ քեզ ասեմ, իմ հետեանքս

Լոէ աղաղակո ու աղերսանքս,

Տիգրան կուրեցի աղջիկն է քաղձանքս

Ահա տէր իմ, այս է իմ նպատակո:

Երգը աւարտելուց յետոյ Յովսէփն ասաւ, ուրիմն գու Տիգրան վաճառականի օրիորդի հետ ո՞ք ունիս, Սմբատն ասաւ այն պարոն և դրա համար էլ եկել եմ. Յովսէփն ասաւ շատ լաւ, անհոգ եղիր այդ իմ գործն է, Տիգրանը հիմայ այստեղ չէ, նա դործով գեացել է Եւրոպայ, երբոր եկաւ, նա իմ ձեռքից չի կարսդ աղատուել. Մենք այժմ պսակի պատրաստութիւնը կ'տեսնենք և հարսանիրը կանենք, նա էլ մօտ օրերս կ'զայ անպատճառ.

Հարսանիրը սկսուեց, շատ մեծ հանդիսով պըսակեցին Նոյեմզարին և Լեռնին. եօթն օր տեսեց հարսանիրը, վերջին օրը, բոլոր բարեկամները ընծաներ յեղացրին հարսի և փեսայի անունով, Տիգ-

արնի անսւնն էլ յիշուաւ այդ հանդիսում, բայց
ինքը չկար, կերան, խմեցին եօթն օր բոլոր բա-
րեկամներով և ուրախացան, հարսի և փիսայի հա-
մար բարեմաղթութիւններ անելով զնացին ամեն
մարդ իրանց տուն։ Միւս օրը, Յովսէփը և Սմբա-
տը միասին նստած ժամանակ մի նամակ յանձնուեց
ոլ. Յովսէփին, որից լսուեց որ, Տիգրան վաճառա-
կանն եկել է և հրաւիրում է Զեղ տեսութեան։
Յովսէփն ասաւ այս լաւ եղաւ Սմբատ, վեր առ
սանթուրդ և միասին գնանք։ Ելան և գնացին դէ-
պի Տիգրանի տուն, երբոր դարրազին մօտեցան
Սմբատն մտքումն ասաւ, ահա սա իմ երազով տե-
սած դարրազն է, միայն տեսնենք արդեօք Սօֆիան
էլ տեսածիո նման պիտի դուրս գայ թէ ոչ։

Դոնից ներս մտնելիս, նուազածուների ձայնը
Սմբատի սիրտը ցնցեց, և ներս մտան միասին.
Ներս մտնելիս բոլոր ժողովսւրդը ոտքի կանգնեց
և նուազարատները լռեցին։ Մինչև Յովսէփը Տիգ-
րանի հետ տեսնուեց և յետ նայելով նշան արաւ
ժողովուրդը նորից նստեցին։ Այդ բոլորը Տիգրանի
բարեկամներն էին, որոնք եկել էին նրա գալուս-
տը շնորհաւորելու։ Երգիչները Սմբատին տեսնելիս
սառեցին մնացին, որովհետեւ նրանք բոլորն էլ Սըմ-
բատի հոչակաւոր անուանը ծանօթ էին, և չէին
կոտահանում ծկտու հանել։

Փողովուրդի լռութիւնը տեսնելով Յովսէփը
Սմբատին ասաւ, լարիր սանթուրդ և մի բիշ եր-

գիր տեսնենք: Սմբատը իր սանթուրը պատեանից հանեց, մի լու լարելուց յետոյ նուազեց ու երգեց այսպէս: Թօվիսաննայ դիւանի:

Սմբատն

Զեղանից այ կ'եամեննայ որ խօսի բան ինձի հետ,
Կամ նուազի վին ու տաւիլ նուազարան ինձի հետ,
Ով որ իրանից յոյսով է թող գայ մտնի ասպարէզ,
Առաջարկէ զրբերից հարց ու պատասխան ինձի հետ:
Երբէք չունիմ ահ ու երկիւղ աշխարհի մէջ ոչ որից
Որովհետեւ երկնաւոր տէրն է օգնական ինձի հետ,
Ով նրանից մեծ տէր ունի, ինձ կ'յաղթէ յայտնապէս
Եթէ ոչ նա չէ կարսդ բանալ ընթան ինձի հետ.

Եյն որ տուեց խւր ձեռքովը Սմբատիս սիրոյ բաժակ,
Խոստացաւ որ ինքը լինի միշտ պահտպան ինձի հետ:

Սմբատը այս երգը երգիշներին փորձելու համար ասու: Եյնտեղում եղած երգիշներից և ոչ մէկը բերան շը կարսդացան բանալ Սմբատի դէմ և տեղներից ելեւելով գուրս զնացին. Տիգրանը հիացած նայում էր Սմբատի վերայ, նա զարմացն էր նորա վստահութեան, գեղեցկութեան և չնորհաւոր խօսքերի վերայ: Չատ նայելուց յետոյ ասաւ, չնորհալի վարպետ, նրանդացի էր: Արեկելեան կողմ, Արարատեան աշխարհի Արմաւիր քաղաքիցն եմ պարոն, պատասխանեց Սմբատը: Հայ երանի ձեզ, որ դուք այն նշանաւոր լիւան մօտ էք, որի վերայ

Նոյեան տապանն է կանգնել։ Եսա տեսնենք ինչ-
պէս է ձեր քաղաքի դրութիւնը, պատմիր նրա
կարգերի և սովորութեանց մասին։ Սմբատն առաւ
երգիշի լեզուն բաց անողը նուագարանն է. ելժէ
կ'բարեհաճէք, երգելով կ'պատմեմ ձեզ, և ոկսեց
նուաղել ու ասել.

Սմբատն

Ամենայն տեղ քո անունդ յիշում են
Քեզ պատմեմ տեղով նշանով Արմաւիր,
Հսովները յոյժ կարօտդ բաշում են,
Գովական ես ամեն բանով Արմաւիր։

Դարուն որ կ'լինի սերմեր կ'ցանեն,
Ծաղիկներ բացուելուս տեսութիւն կտնեն,
Ճղեղ օրիորդներ կան աննըման են,
Պար կ'րոնեն երգաբանով Արմաւիր։

Մարտ ամսում կ'տնկեն գանազան տունկեր
Սմառը կ'ծախուի պատուական մրգեր,
Երգիչներ կ'երգեն ձայնաւոր երգեր,
Գոյնզգոյն նուագարանով Արմաւիր։

Մէկ կողմդ այգի է, մէկ կողմդ պարտէզ,
Ծաղիկ բուրաստանով լի ես քեզու բեզ,
Ծուն որ կ'լինի խաղող կ'մղես,
Կ'արբենաս անուշ գինով Արմաւիր։

Առաւոտ որ կ'ծագէ արուսեակը
Քաղցը երգով կ'զայլայլէ սոխակը.

Եստակ, բրինձը, սոխք, բամբակը,
Աշխարհը չէն է միշտ բեղանով Արմաւիր:

Երաւ գովելի է քո հանդ ու հողդ,
Անհատ է արգիւնքդ, ոսկիդ ու փաղդ,
Աստուածածնան կտրուելիս խաղսղըդ
Կ'օրհնեն զրբով ու բահանով Արմաւիր:

Իմ անունս Սմբատ, քննը Արմաւիր
Դատաւորներ մէջդ կ'կտրեն վճիռ
Հաշտարար վեհ հողի դատաւոր ընտիր
Ռւղիդ, արդար դատաստանով Արմաւիր:

Այս երգից յիտոյ բոլորն հւաւանութիւն տալսվ
Սմբատին կեցցես, զօրանաս, վարպետ առացին ինչ-
պէս որ մենք լսել էինք, այնպէս էլ պատմեցիր:

Բայց Սմբատի երգի ձայնը Սօֆիան որ լսեց,
եկաւ զրան մօտ, և տեսաւ որ երգողը, իւր երտ-
զում տեսած երիտասարդն է, յետ դարձաւ և զնաց
իւր նաժիշտներին տսաւ, ազդիկներ այս մեր սե-
նեակում երգող երգիշը այն է, որի կարօտը ես
բաշում էի: Այն ժամանակը որ Սօֆիան եկաւ զրան
դէմք Սմբատին տեսնելու, յանկարծ Սմբատի աշքը
որ նրան առաւ, իսկոյն նսրա վերայ մի տեսակ
թմբութիւն եկաւ ուշը զնաց և սանթուրը ձեռքից
վայր ընկաւ մի կէս ժամուայ շափ այդպէս մնա-
լուց Յովսէփը նրա երեսին մի քիչ ջուր ցանեց և
ականջները բաշելով ուշը բերեց, այնտեղ գանց-
ուալները այստհար կարծեցին նբան և շատ ափա-

սացին, ասում էին արդեօք սրան մի ճար չի լինի. Տիգրանն ասաւ դրա ճարն այն է, որ մի բանի կոպէկ տաք և այսաեղից դուրս անէք լաւ էր որ դրան ընաւ չ'ըերէիք, որովհետեւ մեր ուրախութիւնն էլ խանգարեց. Դու մի ասիլ Սօֆիան էլ որ դռնից Սմբատին շէր տեսել ու վերադառնել իր նաժիշտների մօտ, նա էլ այնտեղ էր Սմբատի նման ուշագնաց դարձել, և նրան էլ ազգիկներն էին ուշը բերել առանց մարդկանց յայտնելու:

Վերջապէս Սմբատը այդտեղ նստողների բոլորի կարծիրը փարատելու համար առաւ ոանթուրը իւր ձեռքը և ասաւ, ահա լսեցէք իմ այսահարութեան ցաւը, և երգեց.

Յանկարծակի ինձ երեաց,
Ահա ես նրան եմ կարօտ,
Միրտս մարաւ ուշը գնաց,
Տհոէք թէ որքան եմ կարօտ:

Եյս տունը որ երգեց ասացին, Տաստատ որ սա այստհար է, որովհետեւ մենք էլ այստեղ ենք եթէ մի բան լինէք, մենք էլ կ'տեսնէինք, երեի սրա աշրին բան է երկում: Միայն Յովսէփին ասաւ սպասեցէք վերջը կիմանաք: Եւ Սմբատը երգեց միւս տունը.

Լուսատու արեգակի պէս,
Փայլվլելով փայլակի պէս

Յանկարծ ճայթեց կայծակի պէս
Եհա կ'մեռանիմ կարօտ։

Յովսէփին ասաւ, Սմբատ մի քիչ պարզիր խոս-
քերդ որպէս դի բոլորին հառկանալի լինի։

Սմբատն եմ պարզ ասեմ բանը
Չի ներէ պ. Տիգրանը,
Դուստրն է իմ սիրելատնը,
Սօֆիի տեսութեանն եմ կարօտ։

Եյս վերջի տան խօսքերից վիրաւորուեղ Տիգ-
րանը և աշրերը դարձրաւ Սմբատի վրայ բայց հաս-
կացաւ որ պ. Յովսէփը նրան շատ է սիրում և
պաշտպանում, միայն այսքանն ասաւ թէ, գուրս
արէք գրան թող հեռանայ, ինչ էք այդ զիւահարի
խօսքերին ականջ դնում։ Յովսէփին ասաւ սպասե-
ցէք ես այս բազէիս կիմանամ ամեն ինչ, և հար-
ցրաւ Սմբատից, որդի ասաւ, գու Արմաւիրցի իսկ
Սօֆիան Զէյթունցի, նա որտեղից կարող է քիզ
սիրահար դառնալ, այն տեղից այստեղ սիրահար-
ութիւն ախ՛ը չ'հաւատալու բան է, Սմբատն ասաւ,
սահմուրին լսեցէք և երգեց։

Երազումս տեսայ մի ոռւրբ զինաւոր,
Նա ինձ ձայնեց անտառի մէջ միայնակ,
Փայլուն հանդերձներով սպիտակ ձիաւոր,
Ասաւ ես եմ քաջ սուրբ Սարգիս նահատակ։
Եյն սուրբ զինաւորը ինձ հրաւիրեց,

Ական թօլժափելի ինձ այստեղ բերեց,
Սօֆիէն ինձի, ինձ Սօֆիային ցոյց տուեց,
Եյնուհետեւ սիրտս լցուաւ վառ կըակ:

Թէ որ Աստուածանից լինի պայմանը
Մարդ չէ կարող որ աւերէ այն բանը,
Սմբատին չնորհեց սիրոյ մատեանը
Կարգալով կարգացի եղայ հաղատակ,

Եյս երգից յետոյ Յովսէֆն ասաւ Տիգրանին
Ես մի քիչ հաւատում եմ սրա ասածներին, իսկ
դուք. Տիգրանը ասաւ, դրա ասածները բոլորն էլ
սուտ բաներ են, դրանք ինչ են որ մարդ հաւատայ:
Եյդ խօսակցութեան միջոցը, կառավարութեան կող-
մից հրաման ստացան, որով կանչւում էր պ. Յով-
սէփը տեղական դատարանը ներկայանալու, ուստի
և չկարողացաւ յետանալ որսվհետեւ ինքը այդտեղի
կուսակալի օղնականն էր: Տիգրանի սիրտը շահե-
լու համար ասաւ. Տիգրան կու սրան առ այժմ
պահիր մինչ ես վերադառնամ և կ'ըննեմ, Աստուած
տայ որ սուտ լինի սրա ասածները, յետոյ ես գի-
տեմ իմ բանը: Յովսէփի իշխանը զնաց և այնակազ
գտնուողները ես գնացին: Սմբատը մի քիչ մտածեց
և քունը եկաւ և երբ Սմբատը արդէն քնիլ էր,
Տիգրանը կանշեց ծառաներին և ասաւ, այս ան-
պիտանին անկողնով վերցրեք և տարէք քաղաքից
դուրս դարբագի աջ կողմը մի խօր վիրապ կայ
բառասուն կանգնաշափ, չուանով կախ արէք, իջե-

ցրէք տակն ու եկէք։ Դէհ շուտ արէք, երբոր Յով-
ուէփը կ'զայ, մի կերպով կ'հաւատացնենք։ Ծառա-
ները կատարեցին իրանց տիրոջ հրամանը և երբ
Սմբատին զցին վիրապի մէջ։ Նոր արթնացաւ և
զգաց որ ինքը արդէն մի խոր հորի մէջն է, բայց
սանթուրն էլ հետն էին զցել, հասկացաւ որ իրան
Տիղբանն է այստեղ բերողը, սանթուրն առաւ ձեռ-
քը և ինքն իրան յոյս տալով առաւ։

Սիրտ մի տխուր մնայ, մի քիչ համբերէ
Ես քեզ մխիթարեմ երգերով սիրտս։
Տխրութեան վերջն ուրախութիւն կ'ըերէ
Ժուտ մի լցուի վիշտ ու վարդերով սիրտս։

Ժատ մի տրտում մնար, շատ մի մտածէ
Նեղութեան լոյնութիւն տվովն Աստուած է,
Որ կամի կարող է, նա ողորմած է
Մէկ օր կուրախացնէ փառքերով սիրտս։

Սիրտ իմ յուշատիր լեր, Սմբատին նայէ
Ճոյց տուած խրատս միշտ միտքդ ոլահէ,
Ստեղծողը, մեծ ու գլած արքայ է
Քեզ կազատէ երկար ձեռքերով սիրտս։

Սմբատը վերջացրեց երգը և սկսեց մտածել
իր մտսին թէ բնշպէս կարուղանայ հորից դուրս գա-
լու, որսվհետեւ հորը շատ խորն էր։ Միայն Ամենա-
կարօղն որ իւր բարի աշքով ուզում է մէկի վրա-
աշքել, իսկոյն այն մարդն գտնում է մի ելք։

Սօֆիան իսկոյն իմացաւ որ իր հայրը Սըմբատին հորն զցեց, իր հաւատարիմ նաժիշտներին կանչեց և ասաւ, քանի որ հայրս քնած է, դուք վեր առէք այս պարանը և զնացէք բաղարից դուքս արևելեան դարբագի աջ կողմը մի խոր հոր կայ, Սմբատն այնտեղ է գցուած զգուշութեամբ դուքս հանէք նրան և բերէք ՚ինձ մօտ: Աղջիկներն զնացին, հօրը գտան և կամաց ձայնով ասացին Սմբատ բռնիր այս պարանից և դուքս արի, Սմբատըն ասաւ դուք նվ էք, ասացին մենք Սօֆիայի նաժիշտներն ենք, Սմբատն բռնեց պարանը և աղջիկներն բաշելով դուքս հանեցին նրան, և տարան Սօֆիայի մօտ. Սմբատն ներս մտնելիս, Սօֆիան ասաւ, իմ ազնիւ սիրահարս, ես ուխտել եմ որ, քեզ երգելով բարենմ առաջին տեսնելում. բայց Սմբատը Սօֆիայի լուսատու պատկերն տեսնելիս լեզուն բռնուեցաւ ուրախութիւնից և չկարողացաւ պատասխանել, մի քանի բոպէից յետոյ կըկրդալով ասաւ, ե. եր. եր. երգէ. տես. տես. տեսնիմ: Եւ Սօֆիէն իր բաղմաթիւ հիւսերից մին սազ անելով սկսեց երգել: Աջամի եղանակով, զօշմայ:

Ո՞վ անգին սիրելի, ընտիր սիրահար,
Աղնիւ սիրեկանս դու բարով եկար,
Արժան է որ ցոյց տամ սէք, սիրոյդ յարմար
Կեանք ու հոգի ջանս դու բարով եկար:
Այս տունը սր ասաւ Սօֆիէն, Սմբատն ասաւ

սպասիր սիրելի հեղին իմն է, և տուա.

Տեսութիւնդ բարի լինի սիրելի,
Սիրուն աննըմանս բեզ բարով տեսայ,
Ուզիզ սէրն քակառւել չէ կարելի,
Ո՞վ իմ հոգեհանս բեզ բարով տեսայ:

Սօֆիէն

Եշքս մնաց ճանապարհունայելով,
Դիշերն անքուն, ցերեկներն հայելով,
Միեշ երբ մնամ սուդ, լեզուս լուս պահելով,
Իմ լեզու բերանս դու բարով եկար:

Սմբատն

Կարօտի բաշում եմ ամեն ժամանակ,
Գիշեր ցերեկ, օր ու ամիս շարունակ,
Համասփիւռ բարասան ծաղիկ մանուշակ
Հոտով բուրաստանս բեզ բարով տեսայ:

Սօֆիէն

Սօֆիէն եմ սիրովդ վաւսաւձ կ'մնամ.
Այս սաստիկ կրակին ես մնց դիմանամ.
Եկ մօտ իմ սիրելիս, որ չ'մահանամ,
Բժիշկ իմ մահուանս դու բարով եկար:

Սմբատն

Սմբատն եմ կշերիցդ էլ մւր հեռանամ.
Նոր պէտք է ես խնդամ, նոր ուրախանամ.
Առանց բեզ խնդութիւն ինչպէս կունենամ.
Երդ ու երդարանս քեզ բարով տեսայ:

Ըուտով երգն վերջացրին, և մտան անկողին ընելու. Նրանք իրանց փափազն յագեցրին և ընեցին, միայն աղջիկներին էլ տսացին, մի ընիր, չսկեցէք և լուսանալուն մօտ մեզ իմաց տուէք, լուսանալուն մօտ իմաց տուին, Նրանք գարթեցան, Սօֆիէն ասաւ, տարէք Սմբատին և նորից իջեցրէք նոյն հորի մէջ, աղջիկներն տարան և իջացրին, այնտեղ իջնելիս Սմբատն մտաբերեց Մանասէ թագաւորի հօրի մէջ լինելն, և նրան հետեւելով ասաւ այս երգը.

Եպաւէն իմ փրկիշ բարերար Եստուած
Մէ ծածկիր երեսդ ինձանէ փրկիշ,
Բաղցր սիրոյ ս. բազուկդ մեկնէ ցած,
Ըուտով ինձ այստեղից գուրբս հանէ փրկիշ:

Ինչպէս Մանասէին հանիր հորիցը
Ցունան մարդարէին ձկի փորիցը
Սեթրակ, Միսաք, Սրեթնագովն հրիցը,
Ինձ էլ նրանց նման պաշտպանէ փրկիշ:

Հաւատով և յուտով յիշեմ անունդ
Ցիշէ երազիս մէջ արած խոստմանդ,
Ցոյց տուր տեսնիմ անհատ ողորմութիւնդ,
Ելժէ որ Սմբատն արժան է փրկիշ...

Եյս երգն աւարտելուց արշալոյսն բացաւեցաւ,
արեգակն ծագելու մօտ էք. սիրահար սրտերը անհամբեր մի տջողակ ելը գտնել էցանկանալին.

Տեր մոռացել Սմբատին նաև Յովսէփի իշխանը՝
առաւետ կանութօ նա եկաւ Տիգրանի տունը որ
զեռ նա տեղից նոր էր վեր կացել և նստել, Յովսէփին հարցուց, պ. Տիգրան նւր է Սմբատն. Տիգրանին ասաւ, հինգ ես էլ նրա համար եմ մտածում և չգիտեմ թէ նա նւր է, կարելի է քո երկիւղից փախած լինի. Յովսէփին ասաւ ոչ, նա ինձանից ոչ մի երկիւղ չունէր, երեխ դու ես նրա գլխին մի փորձանք բերէ, այս րոպէխո ես կ'պահանջեմ քեզանից Սմբատին, հակառակ զէպքում թէ որ շրջատը առանց ուշացնելու շես կ'յայտնեմ կառավարութեան և քեզ զերդաստանով արսոր ուղարկել կ'տամ, քո բոլոր ունեցածներդ թագաւորական անելսի. Տիգրանին տեսաւ որ անհնար է սրա ձեռքից աղատուելին, ասաւ, խնդրեմ մինչի ճաշ ինձ ժամանակ տուր, զուցէ մի տեղից դուրս գայ. Յովսէփին ասաւ թող քեզ մինչ ճաշ ժամանակ լինի, եթէ շես զտէ, հաստատ հաւատացած եղիր որ, անպատիթ շես մնալու.

Տիգրանին տեսաւ որ էլ չի լինի, ժառաներին կանչեց և ասաւ, գնացէք այն անիրաւին հանէք հորից և բերէք այստեղ, և եթէ Յովսէփն ձեզ հարցնելու կ'լինի թէ նրտեղից զտար, ասացէք թէ, գնացինք քաղաքից դուրս ճանաւարհներն վնդուելու, յանկարծ մի երգի ճայն լսեցինք և գնացինք որ մի հորի միջում երգում է, հանեցինք և բերինք եմ անունս չտար. Եւ այսպէս ժառաներն գնացինք

և Սմբատին հանեցին հորից ու բերին Յովսէփի
մօտ Յովսէփին որ տեսաւ Սմբատին հարցրեց, ուր
էիր գնացէ. Սմբատն ասաւ, ես էլ չ'գիտեմ. միայն
ես այստեղ քնած էի, մին էլ զարթեցայ և տեսայ
որ, մի խորունկ հորի մէջն եմ, Յովսէփին ասաւ
ապա քեզ ով գցեց այն հորն դու չես գիտէ, Սըմ-
բատն ասաւ ոչ չ'գիտեմ, յետոյ դառնալով ծառա-
ներին ասաւ իրան ասացէք, եթէ դուք չէիք արել,
ինչպէս գիտեցար սրան հորի մէջ լինելն. ծառա-
ներն ասացին մենք ձեր հրամանին 'Համաձայն քա-
ղաքում փնտուցինք և չ'գտանք յետոյ քաղաքից
դուքս ճանապարհներն գնացինք քննելու թէ, մի
գուցէ այնտեղերով փախած լինի, միայն, երգելու
ձայնն լսեցինք և գնացինք հորումն գտանք: Յով-
սէփին ասաւ վնաս շունի, ես յետոյ կիմանամ. միայն
հիմիկուայ գործին աշենք, և դառնալով Տիգրանի
ներկայութեամբ Սմբատին ասաւ, որդի, դու որ մի
քիչ առաջ ասացիր, թէ ո. Սարգիսն ինձ ցոյց է
տուել Սօֆիան և ես նրա սիրավն վառվում եմ,
հիմայ ես քեզ պիտի փորձեմ, թէ որ սուտ դուքս
եկար, այն ժամանակ ես գիտեմ ու դու: Տիգրա-
նին ասաւ ծածուկ, զնա քառասուն աղջիկ հաւա-
քէ, և այն քառասունին էլ միանման հագուստ հաղ-
ցրու և Սօֆիային նրանց հետ միասին բերենք և
տեսնինք թէ որ ճանաշեց, իմացիր որ նրա ասած-
ներն ուղիղ են, իսկ թէ որ չ'ճանաշեց, և ես սաս-
տիկ կերպով կ'պատժեմ նրան և կ'հեռացնեմ: Տիգ-

բանն ասաւ, պ. որովհետեւ այս տղան այս քանի
օր է որ այստեղ է գուցէ մի կերպով տեսած կ'լի-
նի Սօֆիային. 'ի հարկէ նա կ'ճանաչէ, արի այս-
ովէս փորձենք, վիճակ քցենք, որովհետեւ վիճակն
արդար է. Յովսէփն ասաւ ուրեմն թող քո ասածն
լինի, գնա և վիճակն պատրաստիր. Տիգրանն գնաց
մի ոսկերչի մօտ և քառասուն հատ մատանի շի-
նել տուեց, մի նմանութեամբ և մի շափով, և տ-
մեն մի մատանու վրայ մի աղջկայ անուն զրել
տուեց, Սօֆիայի անունն էլ մի մատանու վրայ
զրել տուեց և այդ բոլորն, միասին բերին Սմբա-
տի, Յովսէփի և միւս մարդոց ներկայութեամբ լրց-
րին մի նեղաբերան ամանի մէջ, Տիգրանն ասաւ
Սմբատ ահա բոլոր մատանիներն այստեղ են, եթէ
դու մի անգամից այս ամանի միջից Սօֆիայի մա-
տանին գուրս բերիր, այն ժամանակ ևս էլ իմ աղ-
ջիկս իմ յօժար կամօք կ'տամ քեզ, իսկ եթէ ոչ,
ըս բոլոր ասածներն սուտ են. Սմբատն այդ փոր-
ձի մտախն կարծիքաւորուելով, մտածում էր և մի
քիչ մտածելուց յետոյ ասաւ, պարոններ, մի քան
պիտի խնդրեմ ձեղանից, եթէ կարելի է թոյլ տը-
ռուէք մի խօսք կայ մտքումս ձեզ յայտնեմ, և յետոյ
ձեր առաջարկած վիճակին հանեմ: Նրանք իրաւունք
տուին և Սմբատն երգեց.

Ո՞վ քարի ստեղծող և արդարադատ,
Այս վիճակս քու ձեռքովդ կ'հանեմ,

Ինչպէս որ կամենաս կնդռնեմ հաստատ,
Քու կամքիդ համաձայն ես բաւական եմ:
Ցառագրնթաց ս. Յօվհաննէս, Մկրտիչ,
Անձառ գերահրաշ ամենափրկիչ,
Հայր հայոց հայրապետ ս. Լուսաւորիչ,
Իհա պաշտպանէր պանդուխտ օտարական եմ:
Սմբատիս օգնական լեռ Աստուածածին,
Մուլը խաչը համրուրեմ որդիդ միածին,
Ճուտ հասիր օգնութեան իմ, մոլորուածին,
Եթէ չ'կամենաս ի՞նչ պէտք է անեմ:

Եյս երգն լրացնելուց յետոյ մօտ զնաց վիճակին, երեք անգամ խաչակնրեց իրան, և ձեռքն ներս տարաւ ե մի մատանի դուրս բերաւ ու տուեց պ. Յօվհիայի մատանին է. Տիգրանն ասաւ այդ յանկարծ պատահաւ, քցէք տեղն, թող մին էլ հանէ. Յօվիսէփին ասաւ մնաս չունի, թող այդպէս լինի և մէկ էլ հանեց Սմբատն, դարձեալ Յօվհիայի մատանին. Տիգրանն ասաւ, վիճակը երեք անգամ է թող մէկ էլ հանէ. Յօվիսէփին հասկացաւ որ այս գործն Աստծուցն է կարգադրուած, դարձեալ կամք տուեց ու Սմբատն երրորդ անգամին ձեռքն ներս տանելսվ հանեց որ, դարձեալ Յօվհիայի մատանին. Յօվհիսէփին ասաւ պ. Տիգրան, էլ բան ունիս ասելու, Տիգրանն ասաւ, ոչ պարոն, ես էլ հաւատացի որ, կայ Առասծոյ արգադրած գործն է, որսվհետե շատ

աշխատեցայ բանկել բայց չ'կարսղացայ, և պրա
համար իմ կամօքս տալիս եմ իմ Սօֆիային այս
տղին, բայց Սօֆիայի կամքն չեմ առել, և ահա իր
խօսրի հաստատութեան համար իմ ձեռքով կ'դնեմ
այս մատանին Սմբատի մատն։ Յովսէփին ասաւ եռ
Ել կարող եմ Սօֆիայի կամքը իմանալ, և ասաւ
ուրիմն Սօֆիային բերել տուր այստեղ։ Տիգրանը
Սօֆիային ներկայացրեց Յովսէփին, Յովսէփին ա-
սաւ, որդեակ ըս հայրը բեզ տուեց այս տղային,
եթէ ըս կամօքդ է, որդի մի ամաչիր, արի իմ ձեռ-
քըս համբուրէ որ ես իմանամ ըս կամքովդ լինելը։
Սօֆիան մօտեցաւ և համբուրեց Յովսէփի ձեռքը։
Կեցցես, շատ ապրիս, ասաւ Յովսէփը, և դառնալով
Տիգրանին ասաւ, կանչիր մի բահանայ որ սրանց
նշանադրութիւնը օրհնի, Տիգրանը կատարեց պա-
րանի հրամանը և բահանան դալով օրհնեց նրանց
նշանադրութիւնը և Յովսէփին իր կողմից մի մատա-
նի ընծայեց, որ բահանան օրհնելով դրեց Սօֆիայի
մատը, և Սօֆիայի անունով գրուած մատանին ար-
գէն Սմբատի մատումն էր։

Սօֆիան արդէն իւր սլտի ցանկացած բանը
կատարաւած տեսնելով, հագել զարդարուել էր,
իւր նոճի հասակի, աղնիւ տեսքի և վայելուշ կազ-
մուածքի յարմար հազուտներ։ Այնտեղ գտնւողնե-
րի ուշադրութիւնը գրաւեցին Սօֆիայի նազելի շար-
ժումներն և որի համար, Յովսէփին ասաւ, Սմբատ,
եթէ չես կարողացել Սօֆիայի տեսքի և դեղեցկաւ-

թեան յարմար մի գովասանք տալ, լաւ իմացիր սր,
քո վերջին օրդ է. Սմբատն տսաւ շատ բարի և
սանթուրը ձեռքը տանելսվ նուազեց և երգեց այս-
պէս: Մուկսամբազ: Տասն և չսրո վանկով:

Ո՞վ սիրելի աննըման իմ սիրահար սիրելի,
Լուր մտերիմ բարեկամ և հաւատար սիրելի,
Ըրժէք ունիս գսվելու, գովեմ յարմար սիրելի,
Պարզ ու պայծառ անունսդ ձայնեց աշխարհ սիրելի,
Հասակդ իրըն նոճի նման երկար սիրելի,
Դին քեզ նման ծնանելն է անհնար սիրելի,
Ուրեմն հրեշտակ ես տամ հոգիս տար սիրելի:

Եզգատոհմդ ընտրեալ, դուն ինքդ արդար անմնկ,
Տեսակ գեղեցկութիւնսդ ոչ քաղաք կայ ոչ մի գեղ,
Երեսյթդ հրեղէն պատկերդ յուժկու ահեղ,
Ունքերսդ կեռ ու կամար, նման երկնային աղեղ,
Թերթերունքդ սուր սասեր, աշքերդ փայլուն բիւրեդ
Հայտւածքդ ճառագայթիւ, լուսարեր լուսոյ տատեղ,
Կոպերսդ մեծ թանկազին ջահ ու դամբար սիրելի:

2ը կարծեմ հողեղէն ես, ով հրեղէն օրինակ,
Ճանկալով կ'ցանկայի տեսութեանդ յոյժ փափազ,
Պարանոցիդ կայ անդին գոհարներօվ մանեակ,
Երեսներդ գերարրի ինքնաբաւ արեգակ
Ականջներդ ձուլած ու աստուածաշէնք աշտանակ,
Թշներդ լուսեանկ, աստղ, լուսին, լուսնթակ,
Գոռնկներէդ կ'կաթէ մելք ու շաբար սիրելի:

Բերանդ մաքսւր տաճար, շունչգ հստով մեխակ է
Ետամներդ շափիշա, լեզուկ իսկ ծիծեռնակ է,
ձակատդ լայն թողարան, սիրտդ սրբոց բանակ է,
Շոցդ մարդասպանդանոց ծծերդ սուր դանակ է,
Խօսրերդ խելօը խոհեմ, իմաստնոց հեղինակ է,
Սմբատն ինչպէս քեզ գովիէ լիակատար սիրելի։

Սմբատի այս զովասանքներից յետոյ բոլորն
էլ, Աստուած ձեզ երկար կեանք տայ, բարով
վայելէք ձեր թագն ու պսակը ասացին ու գնացին
իրանց տները, մնացին Յովսէփի, Տիգրանն ու Սըմ-
բատը. Յովսէփն ասաւ Տիգրանին, պ. Տիգրան մին-
չև հիմայ ես աշխատում էի որ Սմբատին քեզ փե-
ռայացնեմ, չնորհակալ եմ որ դու իմ խօսրը կա-
տարեցիր. Հիմայ ես իմ սրտիս կարօտ առած լի-
նելով, յանձնում եմ քեզ, քո փեսին, Աստուած ձեր
մէջ յարատես սէր տայ, ասաց ու գնաց իր գործին,
Սմբատը մնաց Տիգրանի մօտ մի քանի օր, մի օր
էլ Տիգրանն ասաւ. Սմբատ ջան, ես մտածել եմ քեզ
հարսանիր անեմ. և իմ ունեցածից հոգամ բս հար-
սանեաց բոլոր ծախքերը, ապա թէ ոչ, զու մի
օտար մարդ ես, որտեղից պիտի ճարկս այն բոլո-
րը. Տիգրանը սր այդպէս ասաւ, Սմբատը մի խոր
հառաշանք քաշելով մտարերեց իւր ծնողաց, լացն
ու աղաղակը և իւր արած երդումը, որով խօստա-
ցել էր չ'մոռանալ իւր ծնողքը, ասաւ, հայր վա-
ճառական, մի քիչ սպասիր մի երկու խօսր եկաւ

միտքս, բեզ յայտնեմ, յետոյ դաւ գիտես, ինչպէս
կ'կամնաս, այնպէս արա, սանթուրն առաւ և նր-
ուազեց ամրանի եղանակով այսպէս.

Օտար աշխարհի մէջ միայնակ ընկայ
ինձ կարծում են անտէր աղքատ տննչան
թէ որ իրան ասեմ ով կ'հաւատայ,

Դարձեալ կասեն ոտախօս է այս տղան:

Չեզ մասնաւոր հասկացնեմ խօսալով

Մայրս Մարդարիտը թողել եմ լալավ,

Հայրիկո յետես աղօթք անելով

Սաղաթէլ անուանի մեծ վաճառական:

Հայրս ունի յարգի մեծ բարի անուն,

Բաղում ոսկի արծաթ ու կարսղութիւն,

Կարող է հարսանիք անէ իր որդուն,

Երդումով արել եմ նորա հետ պայման:

Միթէ այդքան ցած ստոր է անունս,

Ոչ վող կայ գրպանս, ոչ հաց կայ տռնս

Սմբատն եմ չեմ գովէ կարողութիւնս

Թէ շատ, թէ քիչ ունիմ ինձի բաւական:

Այս խօսքերն ասաւ ու տրտում սանթուրը
ձեռքից վայր գրաւ: Տիգրանն տեսաւ որ Սմբատը
իր խօսքերից առնուաւ ասաւ Սմբատ, երեի դու
խօսքիս միտքը չ'հասկացար, որ նեղացար իմ
իմ խօսքից, գուցէ քեզ թուաց թէ ես հարսանիք
անեմ ու չեմ թողնի բեզ քս հայրենիքը գնա-

լու, իմ ասելս այն է որ, այստեղից մինչ ըս հօր քաղաքը գնաս, պատրաստութիւն տեսնիս և դաս մի տարի կ'տեէ, քեզ այդքան երկար չշարչարելուս համար ասի, որ ըս հարսանիք այստեղ անեմ։ Սմբատն ասաւ, ես այդ բանին համաձայն չեմ։ Եյս աշխարհում մարդի գլխից շատ գործեր և փորձանքներ կանցնին, եթէ ես այդպէս մի բան անեմ, վաղը մէկի հետ որ մի քիչ խօսքով հակառակուեցի ինձ կասէ, դու այն մարդը չես որ այլոց վորդով հարսանիք արիր, այդ բանը ինձ և իմ հօր անուան համար մեծ ցածութիւն է։ Տիգրանն ասաւ թող քու կամքդ լինի սիրելի։ Իմ կամքս այս է որ, հինց այսօրուանից կ'պատրաստուիմ գնալու։ Տիգրանը հառկացաւ որ Սմբատը պիտի գնայ, Սօֆիային աշբով արաւ որ գինու շիշը բերէ և մի քիչ գինի խմացնէ նրան, որով գուցէ սիրտը հանգարտուի։ Սօֆիան բերաւ գինին և բաժակը լցնելով դէմ արեց Սմբատին բայց Սմբատը ասաւ, իմ ազնիւ սիրահար, որովհետեւ գուք կամենում էք իմ սիրտը դրանով հանդարտեցնել, սպասեցէք մի բանի խօսք կայ մտքումս ձեզ հասկացնեմ, և սանթուրը ձեռքն առնելով աջամի դուքէրթի եղանակով ասաւ։

Խմեմ բաժանման բաժակը.

Գնալու եմ մնաս բարով,

Դեռ չեմ առել իմ փափազը

Գնալու եմ մնաս բարով։

Եմ տունը սր ասաւ, Սօֆիան իրկմտեցաւ և
ասաւ, գուցէ սա պիտի զնայ և կարող է չ'զալ
ուստի ասաւ, սպասիր Սմբատ, հերթով ասենք և
սկսեց.

Սօֆիան

Ո՞վ դու իմ անգին սիրելի,
Թէ գալու ես, գնաս բարով,
Ուշանալդ շէ կարելի,
Ճուտ գալու ես գնաս բարով։

Սմբատն

Բաւական է այստեղ մնամ,
Հայր ու սրդի արէք խնամ,
Ինձ ճանապարհ տուէր դնամ,
Դնալու եմ մնաք բարով։

Սօֆիան

2եմ ուզում մօտէս հեռանառ
Գուցէ թէ ինձ կ'մոռանաս
Մնուշս ինչպէս դառնանաս,
Դնալու ես գնաս բարով։

Սմբատն

Մի տրտմիր իմ սիրելանս,
2է բռ մտան է իմ նշանս,
2եմ աւրեր ուխտ ու պայմանս,
Դնալու եմ մնաս բարով։

Սօֆիան

Եռ ձեռքիցս խմէ գինի,
Աը եռ ասեմ անսւշ լինի,

Քէ ոչ, շեմ մնար կենդանի,
Դնալու եռ գնաս բարով:

Սմբատն

Քեզանից ջսկուել շեմ ուզում,
Ոււրբ սէրից բակուել շեմ ուզում,
Եյստեղ պսակուել շեմ ուզում,
Դնալու եմ մնաս բարսվ:

Սօֆիան

Միբելի մենակ մի գնար,
Դնալու ես լնձ հետգ տար,
Եռանց քեզ մէկ օր շեմ մնար,
Բնշպէս տօեմ գնաս բարով:

Սմբատն

Սմբատն եմ գնալ եմ ուզում,
Պատրաստուել ե դալ եմ ուզում,
Քեզ տռնել դառնալ եմ ուզում,
Դնալու եմ մնաս բարով:

Սօֆիան

Պատառով պահիր Տիգրանեանիս
Իմ կեսուր Մարգարիտ նանիս
Սօֆիայից բարե կ'տանիս,
Դնա հոգիս դառնաս բարով:

Երգեցողութիւնը լիբջացաւ, նրանք յօժարու-
թիւն տուին գնալու, Սօֆիայի ձեռքից տառ զի-
նով լի բաժակը լիբջին մնար բարովն առաւ ու

խմեց, և նորից լցնելով տուաւ Սօֆիային, որ նա
էլ գնար բարով ասաւ, Աստուած քեզ հետ, ինձա-
նից բարեւ յիշիր քո ծնողաց, և խմեց. Սմբատն
ասաւ, որովհետեւ դուք իմացար իմ տեղի հեռաւս-
րութիւնն դրա համար, ինձ մի տարի կ'սպասէք.
Սօֆիան ասաւ, քեզ ոչ վժէ մի տարի, այլ եօթն
տարի կ'սպասեմ, միայն աշխատիր մեզ չ'մոռանաս.
Սմբատն ասաւ քանի որ աշխարհումս կամ և կապ-
րիմ, անհոգ եղէք, ես ձեզ մոռացող չեմ, և իւր
ճանապարհի պիտոյքներն շալկելով ընկաւ ճանա-
պարհ, և երկու ամիս չարունակ գնալով հասաւ
Սասուն. բայց Սմբատն հետեակ լինելու համար,
ոտքերից շատ խեղճացաւ, և համարեայ չէր կարո-
դանում քայլէ, և մի օր էլ այդ քանի (ոտքերի)
համար շատ նեղութիւն կրելով, նստեց մի քարի
վրայ և իւր ոտքերի վրայ մի քանի խօսք տվեց
այսպէս.

Աւաղ ինչ շատ տկարացար
Ինչպէս անեմ ոտքեր ձեղի,
Մինչի այսօր լաւ դիմացար,
Եյժմ ինչ անեմ, ոտքեր ձեղի:

Դեռ շատ կայ իմ ճանապարհն
Չեմ կարող համնի աշխարհո
Այսօր սաստիկ կտրաւ ճարո,
Ինչպէս անեմ ոտքեր ձեղի:

25 դուք լաւ էիր ամեն հեղ

շիմայ ինձ թողնում էր այստեղ.

2եք քելում որ զնանք մի զեզ

եռ ինչ անեմ ոտքեր ձեղի.

Ոտքեր գուք ինձի խղճացէք,

Կամաց, կամացուք գնացէք,

Գնանք մի դիւղ հանգստացէք,

Եռ ինչ անեմ ոտքեր ձեղի:

Զուք գիտէք Սմբատիս ցաւը,

Եմնե գործիս վատն ու լաւը,

Մի ծաղր անէք իմ համբաւք,

Կկարեմ ոտքեր ձեղի:

Եյդանդ մի քիչ հանգստացաւ և վերկացաւ
կամաց կամաց տուաջ զնաց և երեկոյեան հառաւ
մի դիւղ. մի աստուածասէք մարդ նրան հիւր ըն-
գունեց և նրա ոտքերը ցաւալու համար, մի շարախ
պաշտպանեց: Սմբատի ոտքերը լաւացան, և այդ
տանտիրոջմէն շնորհակալութիւն առնելով ընկաւ
ճանապարհ. տասն օրից յետոյ, հասաւ Արմաւիր,
իւր հայրենի բաղարը, իրանց տանից դուրս եկած
օրէն մինչ այդ օրը, լրացաւ մի տարի և երեք ա-
միս: Սմբատը զնաց իրանց տուն, նորա ծնողները
որդու գալը տեսնելով, չափազանց ուրախացան, և
Սոտեոյ գոյութիւն և փառք տալով համբուրում և
փաթաթւում էին Սմբատին, սկսեցին նորա զործի
մասին հարցնել, Սմբատը իւր տեսածները մի առ
մի պատմեց, ցոյց տուեց Սօֆիայի մատանին և

երբ մատանու վրայի գրերը կարդացին հաւաաացին որ ուղիղ է Սմբատի ասածները։ Սաղաթէլիք բարեկամները լսելով Սմբատի գալուստը, եկան և Սաղաթէլին չնորհաւորում էին իւր որդու գալուստը և այդ օրը մեծ ուրախութիւն արին. միւս օրը, Սմբատը և իւր ծնողները խորհուրդ արին որ պատրաստութիւն տեսնին և գնան իրանց հարոը հօր տանից բերեն։ Սմբատի միտքը ընկաւ իւր որսորդութեան ժամերը և ասաւ, հայրիկ, իմ զէնքերը և ձիս լաւ պահպանուած են, հայրն ասաւ, ինչպէս թէ շեմ պահպանէ, կամինում եռ դնա տես և հեծիր ու պտտուիր, Սմբատը ուզեց իւր զէնքերը, զինաւորուեց և ծառաներին ասաւ ձիս դուրս բերէր որ տեսնիմ և հեծնիմ քիչ, ծառաները թամբեցին նորա նժոյգը և դուրս բերին նրա մօտ, ձին Սմբատին տեսնելու պէս, ճանաչեց նրան, կանզնեց և ուրախութիւնից վընջաց և սկսեց ոտքերով զետինը թակել. Սմբատը մօտեցաւ, փաթաթուեց ձիու վզովն ու համբուրեց նրա աշքերը, մի քիչ շոյեց նրա երկու ականջների միջով կախուած մտզի փունջը և հեծաւ, փողոցներով ուրախ, ուրախ անցաւ և քաղաքից մի քիչ հեռանալիս, տեսաւ որ իւր եկած ճանապարհով մի մարդ գալիս է զէպի իրան. Սմբատն էլ առաջ գնաց և մօտենալիս տեսաւ որ եկող մարդը Զէյթունի հագուստով և սուրհանդակ է ասաւ, սրանից կարելի է մի բան իմանալ ու ասաւ ձիու սանձը բաշելով, եղբայր, նր-

տեղացի և ինչ մարդ ես. Սուբհանդակը ասաւ, ես
Զէյթունցի և սուբհանդակ եմ, Սմբատը երբ հաս-
տառ իմացաւ նրա Զէյթունցի լինելը, իւր գաշու-
նը սագ անելով, սկսաւ հարցնել նորեկից:

Եղբայր Շատուածդ կ'սիրես,
Մի լուր տնւր իմ սիրեկանէս,
Ուղիղն ասա ինչ որ զիտես,
Մի լուր տնւր իմ սիրեկանէս.

Սուբհանդակն ասաւ, քո սիրեկանդ նվ է. կատ
յիշ է անունը, Սմբատն ասաւ, ականջ դիր:

Սիրելիս Սօֆիայ անունով,
Աննման զեղեցկութիւնով,
Եյդ քո մաքուր, սուբր բերանով,
Մի լուր տնւր իմ սիրեկանէս:

Նորեկն ասաւ, Սօֆիաներ շատ կան. աղջա-
նունով ասա, որ ես զիտենամ և պատմեմ նրա
մասին:

Սմբատը մօր մի հատիկն է,
Սօֆիան լուսինի մահիկն է,
Տիգրան կուրեցի աղջիկն է,
Մի լուր տնւր իմ սիրեկանէս.

Երբոր Սմբատը տեղով պատմեց, սուբհանդակն
ասաւ, չլինի Սաղաթէլի որդի Սմբատը դու ես,
ասաւ այս, ես եմ, ուրեմն սպասիր քո սիրելուց
լուր ունիմ. մաղախից մի թուղթ հանեց և տուեց

Սմբատին. Սմբատը նամակը բաց արաւ, որ գրրուած էր այսպէս.

Յարգելի Սմբատ . Սաղաթէլեան քո Արմաւիր գնալուց յետոյ, Աստուածային պատիժ հասաւ մեղ վրայ, Պարսից Սուլէյման շահազատի հրամանով վախուուն հազար զօրք լցուաւ մեր քաղաքը, կողոպահեցին թալանեցին ամբողջ քաղաքը, Տիգրան վաճառականին սպանեցին և նրա աղջիկ Սօֆիային, ուրիշ շատերի հետ գերի տարան, եթէ քաջութիւն ունիս գրա հնարը գտիր և գլխիդ ճարը տես: Այս նամակը գրուած էր Սօֆիայի մօր Վառվառէի և Յովսէփի իշխանի կողմից: Սմբատը մինչև աւարտեց նամակը, նորա գոյնը և աշքերը սեացան, բարկութիւնից քաշեց գաշոյնը և կամնուում էր ինքն իրան սպանել. ուրեմն սրանից յետոյ ինձ ողջ մնալը հարամ է, ասաւ և նամակը ձեռքից վայր դցեց: Սուրհանդակակը վրայ հասաւ դաշոյնը խլեց ձեռքից և դրաւ իրան տեղը և ասաւ, մի յուսահատութիր Սլմբատ, Աստուած ողորմած է, դրան էլ կարելի է մի հնար գտնել. իսկ Սմբատը սրտով վրդոված լաց էր լինում անհամբեր: Վերջապէս սուրհանդակի համոզմունքով մի քիչ հանդարակեցաւ Սմբատի սիրտը, քաշեց դաշոյնը, սազ արաւ ու սկսեց հիջրանի եղանակով այս երգը ասել.

Այդ ինչ լուր էր սր ինձ տուիր ով անգութ, Հանդարաբուած սրտումս մեծ կասկած ընկաւ,

Երես խաւարեց, լոյսս դառաւ մութ,
Ըստեղս երկնքից այսօր ցած ընկաւ:

Երանի թէ չ'տայիր այդ նամակը
Չ'մարէիր կեանքիս վառ աշտանակը
ՄՇէկէնիմէկ անանցնելի կրակը
Սրտիո մէջն վառուած, վրդոված ընկաւ:

Առակ դառաւ Սմբատի խաղ ու խնդախ,
Լաւ է մահանախն քան ողջ մեախն,
Ինձի կ'պատկանի մահու դեղ տախն
Որովհեան գործո թնջուկված ընկաւ:

Երգեցողութիւնն աւարտելուց յետոյ, սուրհան-
դակին ասաւ, սիրելի բաւական է լաց ու կոծ անես,
Կտ դառի զնանք. Սմբատն ասաւ, ոչ եղրայր իմ
Կտ դառնալո անկարելի է, սպառէ ու նորից եր-
գեց մի դաւրէլիթ:

Կրկին կրակ լցուաւ սիրտս,
Միսաց վառուելով վառուելով
Մէջ բոցերուն գոցուաւ սիրտս
Սպաց վառուելով վառուելով:

Սօֆիէն էք կենաց պարձանքս
Զուր կորուցի աշխատանքս
Աւաղ իմ երջանիկ կեանքո
Մնաց վառուելով վառուելով:

Սմբատն եմ դրեմ նամակով,
Տնը հայրիկո նպատակով,

Ըսա Սօֆիայի կրակով,

Քնաց վառուելով վառուելով:

Եյս երգը աւարտելուց յետոյ Մմբատը մատիտը հանեց գրապանից, այս երգը զրեց և նոր եկած Զէյթունի նամակի հետ առւեց սուրհանդակին ու մի քանի էլ ոսկի տուեց, որ այդ թղթերը անկորուոտ տանի Արմաւիր և յանձնէ իրան հօրը, յետոյ ինքը ձին շիտկից գէսլի Զէյթուն, որ գնայ և տեսնի թէ այդ ստացած լուրը ուզիղ է, թէ ոչ. բայց այնպէս էր գնում ինչպէս արծիւը երկնքում: Որովհետեւ ուար ու ձոր, քար ու թուփի նրա աշքին շէր երեւում: Երբոր այն զրեր տանող սուրհանդակը գնաց Արմաւիր և գրերը տուեց Սաղաթէլին, Սաղաթէլը այդ գրերը կարդալուց յետոյ մեծ սուգ ու կոծ արեց, բարեկամներով միասին և ասում էին, Մմբատը նորից կենդանի վերադառնալ անկարելի է. վասն զի, նրանք հասկացան որ, նա անպատճառ Սօֆիայի համար Պարսկաստան սլիտի գնայ:

Այնպէս անյոյս ու անմխիթար լաց էին լինում ու սգում ինչպէս Յակովի նահապետը Յովսէփի համար: Բայց 'իզուր, Թող, նրանք մնան այդ տիսուր դրութեան մէջ, մենք խօսինք Մմբատի մասին: Մըբատը, այդ տեղից շարունակ գնալով քան և հինգ օրում հասաւ Զէյթուն, գնաց իւր աներ Տիգրանի դուռը, ձիուց իջաւ, ձին ուղարկեց ախոռը և ինքը մտաւ տուն, տեսաւ որ, ոչ Սօֆիան կայ և ոչ Տիգրանը, Վառվառէն է, որ մենակ ու տրտում նստած

է տունը, գլուխը կախ զցած. սպում ու լալում։
Սմբատը բարեեց նրան ու նստեց մօտը և հարցրաւ
ինչն ես այդպէս տխուր։ Վառվառէն գլուխը բար-
ձրացրաւ և տեսաւ որ եկտղը Սմբատն է, ուն իմ
որդեակ Սմբատ, դժու ես. ես եմ մայրիկ. Վառվա-
ռը Սմբատին որ տեսաւ, նորից բորբոքուեց նրա
սիրութ, և լալիս էր անընդհատ. Սմբատը որքան
որ հարցնում էր, որ տեղականար դործից. նա չէր
կարողանում պատասխանել, և վերջ ՚ի վերջոյ Սըմ-
բատը հանդարտացրեց նրա լացը. Վառվառէն պա-
տասխան չտալիս Սմբատը մտածեց, երեխ ասաւ
նա, ստ իւր աղջիկը մի ուրիշի է տուել, նրա հա-
մար չի պատասխանում, իրան զաշոյնը արաւ սաղ
ու երդեց այսպէս, որովհետեւ սանթուրը հետը չէր։

Մայրիկ, ինչու ինձ կ'խարես,
Ուր է սիրահարս մւր է,
Լալով արտասունք կ'թափիս
Խելամուտ հանճարս մւր է։

Այս տունը որ ասաւ, Վառվառէն ասաւ, Սըմ-
բատ համբերէ, որ ես էլ եղելութիւնը բեղ նման
երդելսվ պատմեմ, ու ասաւ.

Չիմ ուզում բերանս բանամ
Խօսիմ դու իմ ցաւն իմանաս
Չգիտեմ ինչ պատասխան տամ.
Ճոյց տամ սրտիս սեաւն իմանաս։

Սմբատն

Ուր է իմ մեղմ ու անուշս
Եղւոր աղանի քնըուշս,
Խելք ու միտքս, կեանք ու ուշս,
Դենաց միսիթարս ուր է:

Վառվառն

Ջանզատէն քաղաքն աւիրեց
Տիգրան կուրեցն մեռցրեց,
Սօֆիային գերի վերցրեց,
Թէհրան տարաւ լաւն իմանաս:

Սմբատն

Սմբատն մէկ, մինու ճարէ,
Տիւ և գիշեր անդադար է.
Միրով հարուստ ու թան զարէ,
Ազնիւ ոսկի քարս ուր է:

Վառվառն

Վառվառէն եմ ասեմ հատատ
Վշտով լի եմ, վէրքով առատ,
Երկինք երկիր երդում հաւար
Ուղիղ և իրան իմանաս:

Վառվառէի ասած երգերից Սմբատն հաւատաց
որ, ուղիղ է Տիգրանի սպանուելն և Սօֆիայի գե-
րի տարուելն: Վառվառէին ասաւ մայրիկ, ես մինչե
հիմայ չէի հաւատում թէ այդ բանը ուղիղ է իսկ
այժմ հաւատացի և անպատճառ պէտք է զնամ նո-

րա ետեից. Վառվառէն ասաւ, որդի Թէհրանն Պարսկաստանի քաղաքներիցն է, նա շատ հեռու է, մեզանից, երեք ամիս պիտի ճանապարհ գնած, որ այստեղ հասնիս, մանաւանդ որ նրաներ բոլորն էլ արինարրու մարդիք են, ինչպէս կ'վստահանած նրանց մէջ ոտք կոխել, կամենում ես որ, Սօֆիայի պատճառով քո անձն էլ վտանգի հեթարկել. ինձ կ'լսես չես գնար սիրելի, որովհետի ամեն բան Աստծուց է կախուած եթէ Աստուած քեզ տալու լինէր, այս բանն մեր գլխին շեր գալ, և դու այս տեղից հեռացած չէիր լինի. Սմբատն ասաւ, անհոգ եղիք դու մայրիկ, ես յօյս ունիմ առ Աստուած, որ գնամ և իմ սիրելիս բերեմ, քո տիրութիւնն ուրախութեան փօխարկեմ, ես լաւ դիտեմ որ Աստուած իր խոստացածն երբէք անկատար չի լիոդնի. վերջապէս Վառվառէն որբան աշխատեց շկարսզացաւ Սմբատին համոզել:

Սմբատն իր վերջին հրաժարականն տալով ձին բերել տուեց, հեծաւ և քաղաքից դուրս գնալով ընկաւ Պարսկաստան տանող ճանապարհն և շտապում էր առաջ. ճանապարհին նա մտածեց որ, ինքն շատ անպատրաստ է որովհետի ոչ փող ունի և ոչ պաշար ճանապարհին, ասաւ որ այսպիսով ես ոչ մի բան չեմ կարող անել որովհետե մարդիկ ինձ այսպէս զինուած տեսնելիո աւազակ կարծելով կարսղ են ինձ ամեն տեսակ շարիք հաօցնել, աւելի լաւ կ'լինի, որ քանի քաղաքից չեմ

հեռացել, դառնամ զէնքերս և ձիս ծախսեմ. ինձ
բաւական ճանապարհածախս կ'պատրաստեմ և ինքս
մի աղքատի հագուստով կ'ճանապարհորդեմ, որպէս
զի մարդիկ ինձ տեսնելիս, ոչինչ կարծիք շունե-
նան ինձ վրայ, այլ աւելի կարօղ են խղճահարվել և
ողորմութիւն տալ. Սմբատն մտածեց և այնպէս էլ
արաւ, որովհետեւ իր սանթուրն մօտն չէր, գնաց
սանթուր շինողների մօտ և մի լաւ սանթուր գնեց
և Սստծոյ անունն յիշելով, ընկաւ ճանապարհ. քա-
ղաքից դուրս ելաւ և շարունակ գնում էր. Եսկ
Վառվառէն տեսաւ որ ինքն չ'կարողացաւ Սմբատին
արգելել ճանապարհց, գնաց Յովսէփի մօտ և ա-
սաւ այն նամակն որ մենք ուղարկեցինք Արմաւիր
Սմբատն ստացել էր և եկաւ այստեղ, հաստատն
իմացաւ և գնաց Թէհրան, եթէ կարող ես, մի հը-
նար գտիր ՚Ն նրան յետ գարձուր. որովհետեւ նա
տակաւին անփարձ մի երիտասարդ է, գուցէ գնայ
և չ'կարողանայ ողջ յետ դառնալ. Յովսէփն երբ
լսեց գործի էսութիւնն շտապեց, հեծաւ ձին և մի
քանի հատ էլ տէրութեան ծառայողներից առնելով
հետն գնաց Սմբատի յետեից, բայց իզուր, որով-
հետեւ արեգակն մայր էր մտել, թէն Յովսէփն մի
քիչ աստին անդին ընկաւ, սակայն շուտով զիշե-
րային մթութիւնն ծածկեց ամեն բան. Յովսէփն
տեսաւ որ էլ ոչինչ չի երեսում տիսուր, տրտում
վերադարձաւ քաղաք, և մտածում էր Սմբատի վր-
րայ: Հիմայ պատմենք Սմբատի դէպի Թէհրան ճա-

նապարհորդութիւնը. Նա քսան օր և այնքան էլ
զիշեր ճանապարհ գնաց շարունակ. և մի օր էլ
Սօֆիայի սիրով մտատանջուած գնալով կորցրեց
ճանապարհն և հեռացաւ գէպի բարձր սարերն, ո-
րովհետեւ Սօֆիայի սիրով վառուելով նրա աչքին
ոչ սար էր երեսում և ոչ ձոր. երեք օր շարունակ
գնում էր առանց ճանապարհ երեսցող դաշտերի և
սարերի միջով, երբորդ օրն մի քիչ ուշքի եկաւ և
մտածեց տեսաւ որ ինքն զտնվում է բոլորովին
անմարդարնակ անապատներում . և մացառների ու
բարայրերի մէջ. Օրն մթնել էր մէկ ու մառախուզով
և անձրեն հոսում էր առատ կերպով. Սմբատն ան-
ձրեից պաշտօնանուելու համար, մտաւ բարերի խո-
ռոջներն, զիշերային մութն պատեց նրան. էլ ոչ
սար էր երեսում ոչ ձոր. և ոչ մարդ միայն վայրե-
նի գաղանների հոտն էր որ սարսափեցնում էր
Սմբատի սիրոն. Սմբատն յուսահատուած մնացել
անձայն հոտած մի բարափի ծերպում. Վերջն տե-
սաւ որ էլ ուրիշ հնար չ'կայ, բացի ամենակարողի
սղորմութիւնն ինսկրելուց, վեր առաւ սանթուրն և
նուազեց մի աշամի բեարամի եղանակ. և երգի
ձեռվ խնդրեց Աստծոյ ողորմութիւնն:

Երարիշ և հղոր անմահ թագաւոր,
Հասիր ոչ որ շունիմ օգնական Աստուած
Անյոլս թափառական յոգնած ու մոլոր.
Խելքէ, դուրս շուռ կուզամ սար ու բար, Աստուած:

Իմ շորս կողմու պատեց մէդ ու մառախուղ,
Մարդ, անասուն, թռչուն վրէս եղաւ սուր.
Օգնէ Տէր, մի թողնի կորչիմ կանուխ,
Ցոյց տուր այցելութեան ճանապարհ, Աստուած:

Երեք մանկունքն ազատ պահող կրակէն,
Դանիէլին առիւծների ընակէն,
Սմբատին էլ փրկէ այս նեղ վիճակէն,
Հմեայ բաղձանքս կիս կատար, Աստուած:

Ես երգն աւարտելուց յետոյ, արշալոյմն բայց-
ուեց, Աստծոյ ողորմութեան մէդ ու մառախօղն
բաշուեց, արեգակի ճառագայթներն փայլեցրին օտ-
րերի կատարներն. Սմբատն ուրախութեան ժպիտն
երեսին փառք տուաւ աստծոն և դուրս ելաւ տե-
ղից. շորս կողմն նայեց, և տեսաւ որ դիմացէն մի
մարդ դէպի իրան է գալիս ինքն էլ մի քանի քայլ
առաջ գնաց. մօտեցաւ և տեսաւ որ որսորդ է, ո-
րովհետև նրա աղեղից ճանաշեց նրա որսորդութիւ-
նը, մարդն մօտեցաւ և Սմբատին հայերէն լեզուով
բարեկ տուաւ ու ասաւ, ինչ մարդ ես և ինչ ման
կ'կաս, այս անմարդաբնակ սարերը. Սմբատն ա-
սաւ, սիրելի, ես բերանացի խօսելով չեմ կարսդ
քեզ ոչ մի քան հասկացնէ, եթէ կ'բարեհաճես եր-
դելով ու նուագելով կասեմ. Որսորդը տեսաւ որ.
սա մի երգող անձնաւորութիւն է, ասաւ, ես շատ
կ'սիրեմ երգեցողութիւն լաւ կ'լինի որ մի քիչ եր-

գես. Սմբատն լարից ոտնթուրը և նուտգեց դռւ-
րէիթ եղանակով այս երդն.

Զէլթուն քաղաքից է, զալս,
Դէպի Պարսկաստան եմ գնում,
Կորուցել եմ ճանապարհս,
Չեմ գիտէ որման եմ գնում:

Որսորդն տեսաւ որ այդ պատանին ճանտ-
պարհը կօրցրել է, ասաւ. ոպասիր որ ես էլ երգե-
լով քեզ ցոյց տամ ճանապարհը.

Որսորդը

Եղբայր, այս ամայի սար է.
Դու սխալական ես գնում.
Մտածէ շուտով խելք ճարէ,
Խինդ ու խելքէ հան ես գնում:

Սմբատը

Ես գիտեմ որ մոլորուել եմ.
Աշխարհից ելեր կորել եմ,
Անմիսիթար ցնորուել եմ
Մտրով Թէհրան եմ գնում:

Որսորդը

Պարկեշտ նուահաս պատանի
Խօսուացրդ խելքս կ'տանի,
Ընտեղ վնալդ է ինչ քանի.
Կարծեմ դու զեսպան ես գնում:

Սմբատն տեսաւ որ այս մարդն իրան զեսպան

կարծեց ասաւ, ոչ, սիրելի, ես դեսպան շեմ, հիմա լսիր որ ես քեզ ուղիղն ասեմ ու երգեց.

Սմբատն եմ պարզ ասեմ բանս,
Յայտնեմ խորհուրդ ու պայմանս,
Գերի է իմ սիրեկանս,
Ես դէպի նրան եմ գնում.

Ուսորդը

Անունս որսորդ Վահան է,
Հասկացող եմ ամէն բանէ,
Միթէ սիրուհիդ Թէհրան է,
Այդպէս վառվառման ես գնում.

Երգը վերջացնելիս որսորդը առաւ եղայր,
ես հասկացայ որ քո սիրուհիդ Թէհրան գերի են
տարել, բայց ես ինչ կարող եմ անել։ Սմբատն
ասաւ, քո լաւութիւնը թող միայն այսրանը լինի
որ ինձ այդ բաղարի ճանապարհը ցոյց տաս, որ-
սորդն շատ բարի ասաւ. քեզ կ'տանիմ և ցոյց կը-
տամ ուղիղ ճանապարհ. որսորդն կատարեց իր
խոստումը, առաւ Սմբատին և տարաւ ուղիղ Պարս-
կաստան գնացող ճանապարհի վերայ և ասաւ. Սըմ-
բատ ահա այդ երեացող ուարերն, պարսից սահ-
մաններն են. գնահ Աստուած քեզ հետ լինի, և գոր-
ծիդ աջողութիւն տայ։ Սմբատն մնաս բարով ա-
սաւ և գնաց. երեք օրից յետոյ մտաւ պարսից
սահմանը, բայց անդութ պարսիկներից թէ որքան
նեղութիւն քաշեց, Աստուած գիտէ, որովհետեւ դը-

բանքը հային շէին թաղնի իրանց տունն ոտք կսխէլու. դրա համար Սմբատն գիշեր ցերեկ դուրսն էր մնում, բարերի տակ և փոսերի մէջ բաղցած և ծարաւ շատ անդամ. Սմբատն որ մանկութիւնից ընքուչութեամբ էր մեծացել, այդ նեղութեանց մէջ, այնպէս էր, եղել, որ, տեսնողն չէր ճանաշի թէ, ոտ Սմբատն է, Վերջապէս նա, անվնաս զնաց և հասաւ Թէհրան. Առածոյ աջակցութեամբ նրան ոչ մի վնաս չ'պատահեց, նա մտաւ քաղաքն և մտածում էր ու առում ով բարեխնամ ու արարիշ Աստուած, քո ոռորք հրեշտակն ուղարկիր, որ գայ և ինձ առաջնօրդէ մի բարի և աստուածասէր մարդու մօտ. որպէս զի հս այդ մարդու չնորհիւ կարսդանամ իմ նսլատակն առաջ տանել. Մտածում էր ու զնում, և յանկաբծ նրա առաջ երեաց մի գեղեցկաշէնք տուն. Սմբատն առաւ ես իմ բաղդն այս տան մէջ պիտի որոնեմ, կ'զիամ այս տունը առաւ, և ինչ որ Աստուած կամեցել է ինձ թող այդ տեղ ցոյց տայ, զնաց և շիտակ մտաւ ներս. տանից մի երիտասարդ նորա առաջ եկաւ և ասաւ, բարով դու եկար, սիրելի երգիշ, արի գնանք մեր պարոնի մօտ, նա շատ է սիրում երգեցողութիւն. Սմբատն առաւ ձեր պարոնը ով է, հայ է թէ պարուի. հայ է, հայ, ասաւ երիտասարդն, հայ է և անունը Ղեննդ է, նա շահի խորհրդականն է և շատ բարի մարդ է, արի զնովնք. երիտասարդն տարաւ Սմբատին և ներկայացնելով Ղեննդին ասաւ, պա-

բոն, ահա քեզ մի լաւ երգիշ եմ քերել, Ղետնդն
Սմբատիկ տեսնելիս ասաւ, ուրախ եմ, որ դու մեր
տուն եկար, արի նստի և ինձ համար մի քանի
երգ ասա, որովհետև ևս շատ եմ սիրում երգեցո-
ղութիւնը։ Սմբատն ուրախութեամբ գոհացաւ առ-
տծմէն իր մտքի մէջ փառք տալով, նրանց բարեեց
և նստեց, սանթուրն մի լաւ լարեց և նուագեց
դուբէյիթի եղանակով այս երգը.

Գլխիդ մատաղ տէր իմ իշխան,
Լոէ դու իմ երգս իմացի,
Խնդրեմ եղիր դու ինձ պաշտպան
Իմ տօած խօսքերքս իմացի։

Ես մին ու ճար միամօր եմ,
Սրտով սուգ և սիաւոր եմ,
Մանկութիւնից վիրաւոր եմ,
Թէ բժիշկ ես վէրքս իմացի։

Մնացել եմ մորմոքալով.
Քաղաքէ քաղաք ման գալով.
Ես Սմբատն եմ Մաղաթէլով,
Ծրմաւիր աշխարհքս իմացի։

Այս երգն որ ասաւ, Ղետնդն իմացաւ որ այս
մարդն մի ցաւ ունի, բայց լինչպէս անէ, որ սասյ-
ղըն իմանայ, ասաւ Սմբատ ջան, ես այդ Արմաւիր
քաղաքն լաւ գիտեմ, հիմայ այդ քաղաքին Երեան
են ասում. Սմբատն առաւ այն ուղիղ է առածդ

պարոն։ Ղեռնդին ասաւ Սմբատ զիտեմ մի բան կայ
սրտումդ ծածկուած, ուղիղն ասա տեսնիմ ինչ է
քո ման դալածդ. Սմբատն ասաւ, լսիր երգելով
յայտնեմ իմ ցաւս, որի համար է իմ ման գալս, ու
երդեց, մի դօշամայ երդ։

Եթէ կուղես լաւս, փարատես ցաւս,
Պարտիզից կարաւս տարան շուռ կուղամ,
Խոհական խոննաւս սիրամարդ հաւս,
Թաւրէզ, Թօխատ, Սավլ ու Իրան շուռ կուղամ։

Եյս տունը որ ասաւ, Ղեռնդին ասաւ այդ ինչ
բան ես ասում, եթէ մի բան ունիս, պարզապէս
ասա, մի վախենայ ես էլ քեզ պէս քրիստոնեայ եմ
անպատճառ կաշխատինք բս գործի մասին մի հնար
գանելու, որովհետեւ ես շահի խորհրդականն եմ, և
կարող եմ քեզ ամեն կերպ պաշտպանել գու ուղիղ
ինչ որ պազանիր ունիս ինձ խոստովանի։ Սմբատն
ասաւ մտքումը, օրհնեալ է Աստուած գործս պիտի
աջողութի, որովհետեւ ես Աստծմէն խնդրեցի, թէ
այս քաղաքում ծանօթ և պաշտպան շունիմ, ով
ուեր, զու ինձ մի բարի մարդու տուն առաջնորդիր,
որ նա ինձ պաշտպանէ, և ահա ինչպէս երևում է,
Աստծմէն է, որ այս մարդին ինձ պիտի պաշտպան
հանդիսանայ։ Այսպէս մտածեց և վերջն պարզապէս
տոսաւ խնամածու պաշտպան լսիր խնդրեմ, քեզ ու-
ղիղն ասեմ, նրանից յետոյ ինչպէս որ բո կամքն
է, այնպէս արա որովհետեւ այստեղ միայն ինձ խը-

Նամածու և պաշտպան քեզ ես ճանաչել. ինչ որ
ինձ արժանն է, այնպէս արէք, և ասաւ միւս տունը.

Ճուռ եկայ գիւղանը ամեն սահմանը
Շիրազ Խսպահանը, Խոյ Նախչիվանը,
Չը գտա նշանը ողջ Պարսկաստանը
Ես իմ սիրեկանն Թէհրան շուռ կուղամ:

Տեսար, ապրիս որդի ասաւ Ղեռնդն, հիմայ
հասկացայ որ սիրահար ունիս և նրան կ'փնդրես,
բայց անունն ասա տեսնիմ թէ այստեղ է այդ
անուան տէրն թէ ոչ. Սմբատն ասաւ երրորդ տունը.

Սմբատն ինչ անի, որ ճար կանի
Ոք չունիմ հոգ տանի, հնար գտանի,
Սօֆիէն Սուլէյմանի ձեռքիցն հանի,
Որ աչքս տեսանի նորան շուռ կուղամ:

Եյս երգն աւարտելուց յետոյ Ղեռնդն ասաւ,
այդ քո ասածդ Սօֆիէն այստեղ շահզատի ձեռքն
է, բայց ինչպէս հաւատամ թէ. նա բո սիրահարն
է: Սմբատն Սօֆիայի մատանին ցոյց տալով ասաւ
պարոն խորհրդական, ահա այս է նրա նշանը, Ղե-
ռնդն կարդաց մատանու գիրն և նրանով հաւա-
տաց, որ ուղիղ է Սմբատի ասածներն: Միայն շատ
դժուար է հաւատալ որ, Սօֆիան շահզատին թող-
նի և քեզ հետ դայ, ուրեմն սպասիր Սմբատ, տես-
նենք ինչ միջոցաւ կարողանանք Սօֆիայի միտքն
իմանալ: Այդ գիշեր Սմբատին իրան տունն պահեց.

առաւօտ սր լուսացաւ ասաւ Սմբատ, ևս մի բան
 եմ մտածել. շահզատա Սուլեյմանին մնդ մօտիկ. մի
 ժաղկաւէտ պարտէզ կայ, ամեն մի ուրբաթ օր
 Սօֆիին գալիս է այդ պարտէզն զրօննելու, որով-
 հետե այդ օրն նրանց կիւրակին է, որ «Ճռւմայ» են
 ասում. ուրեմն վագն էլ չէ միւս օրն ուրբաթ է,
 նա անպատճառ կ'զայ պարտէզ, և նա սովորութիւն
 ունի ամեն մի գալիս իմ կին Շուշանիկի հետ խօ-
 սակցում է և մխիթարյանում, այս անգամ որ եկաւ,
 դու էլ Շուշանիկի հետ զնայ և այնտեղ մի կերպ,
 մի սրեւ բան կիսանաս նըտ կամքից. Վերջապէս
 եկաւ ուրբաթ օրն և առաւօտեան երբ նրանք Ղետն-
 դի հետ խօսակցում էին, մին էլ մի աղջիկ ներս
 մտաւ և Շուշանիկին ասաւ, Սօֆիան ասաւ որ թող
 ինքն զնայ մեր պարտէզն ևս էլ հիմայ կ'զամ. այդ
 աղջիկին Սօֆիայի նաժիշտներիցն էր, երբ աղջիկն
 զեաց Շուշանիկի մօտից, Ղետնդն ասաւ Շուշանիկ,
 Սմբատին հետդ տար պարտէզ. երբ այնտեղ Սօ-
 ֆիան Սմբատին տեսաւ և ուրախացաւ, իմացիր որ,
 նա կամենաւմ է Սմբատին զալ. իսկ երբ տեսար
 որ, տեսաւ և ոչինչ նշանակութիւն չ'տվեց իմացիր
 որ, նա շի ուզում շահզատից հեռանալ, այն ժա-
 մանակ թող Սմբատն հեռանայ ձեր մօտից. վասնդի
 նա կարող է շահզատին իմաց տալ և Սմբատին
 վնասել. Շուշանիկին և Սմբատն զնացին պարտէզ և
 Սմբատն սանթուրը հետն տարաւ, նրանք զնացին
 և տեսան որ, գեռ Սօֆիան շի եկել. նստան մի

ծառի շուագի տակ, նրանք ոպասեցին մի կէս ժամաշափի, երբ տեսան Սօֆիան ուշանում է, Սմբատն չկարողացաւ լուռ համբերել վեր առաւ սանթուրն և երգեց դուբէյիդ եղանակով այս երգը.

Քանի մէկ քանի համբերեմ,
Ուր է Սօֆիէս ինչու չի դայ,
Ո՞նց դիմանամ, ինչպէս ներեմ.
Վառվում եմ ես ինչու չի դայ:

Եյս տունն որ ասաւ, Ծուշանիկն ասաւ, ուն
այդ ինչ ես ասում, 'ի սէր Ըստծոյ, այստեղ Սօ-
ֆիայի անունն մի տայ, շահզատին մինչև հիմայ,
մեզանից յաւ բարեկամ չի ունեցել, եթէ այդպէս
մի բան մեր կողմից իմացաւ, մեզ ամբողջ գերդաս-
տանով կ'արսորէ այստեղից: Սմբատն ասաւ, ուղիղ
որ տիրուհի, ես յիմարութիւն արի միայն՝ ներեցէր
այս անզամին, և մի րիշ ծխախոտ ծխացնելուց
յետոյ երգեց երկրորդ տունը.

Հերիք մնամ վախվխելով
Եյսպէս ծխախոտ ծխելով
Սուրբ ոտքն երեսիս կոխելով
Մէկ դիպի տես ինչու չի դայ:

Եյս տան համար Ծուշանիկն սշինչ չասաւ, և
Սմբատն երգեց երրորդ տունը.

Երբ պիտի զայ հոգւոյս գտւան,
Զավանայ օրտիո մոմուան,

Եալերախսդ երտիստամոռը
Սմբատին տես ինչնւ չի դայ,

Եյս երգը գեռ չ'աւարտած Սօֆիան իւր տաս-
ներկու նաժիշտներով ներս մտաւ, բայց երբ Շուշ-
անիկին և Սմբատին տեսաւ, լեզուն կծեց. և իս-
կոյն նաժիշտներից ծածկելու համար մի խոժոռ
հայեացը ձգելով Շուշանիկի և Սմբատի վերայ յետ
դարձաւ, որպէս թէ շահզատին իմաց տալու ձե-
տկանութեամբ։ Եյս որ տեսան Շուշանիկը և Սըմ-
բատը միմեանց երեսի մտիկ արին և Սմբատը մի
խոր հառաշանք քաշելով, սանթուրը առաւ և բո-
կսեց երգել, իր դլխից ձեռք վեր առած։

Սոսկալի երեաց դիմացէ դիմաց.
Կրակ լցրեց վրէս, լաթերս վառուաւ,
Միս ու իւզս հալուեց, ոսկորս գողաց,
Գլխէս մինչև ոտաց թաթերս վառուաւ։

Շուշանիկին ասաւ, վեր ել այստեղից կորինք,
քանի որ մեզ չեն տեսել. Սմբատն ասաւ մի քիչ
սպասէ, Տիրուհի։

Այնժամ որ նազելիս ծուռ նայեց գնաց
Դետինը թունդ առաւ երկինքն որոտաց,
Ամրոց ճայթումիցը կայծեր թափաւ ցած.
Թաշտ, լերինք բռնկուած խաթերս վառուաւ։

Շուշանիկին ասաւ, Սմբատ բաւական է յիմարու-
թիւն անես, ելի գնանք. շահզատէն որ իմացաւ մեզ

բոլոր ազգով ընացինց կանէ. Սմբատը ասաւ
մայր Տիրուհի կ'լնդրեմ, մի էլ երկու րոպէւպասիր,
երբորդ տունն էլ ասեմ, նրանից յիտոյ ինչ լինում
է թող լինի, և սկսեց երրորդ տունը:

Սմբատն եմ ինչ կանեմ, երկիւղն ու ահը,
Այսուհետեւ ինձ կ'պատկանէ մահը,
Սրտիս մէջը մտաւ հուր վառուած ջահը
Բոլոր սիրտ ու թոքս լեարդերս վառուաւ:

Եյս երգը աւարտելուց յետոյ Ճուշանիկը Սըմ-
բատի վերայ նեղանալով, առաւ նրան ու զնաց ի-
րանց տուն, և բոլոր եղելութիւնը սկսեց պատմել
իւր այր Ղեռնդին. խօսրը դեռ չէր վերջացրել, Սօ-
ֆիայի նաժիշաներից մէկը ներս մտաւ նրանց մօտ
և ասաւ, միք վախենայ Սօֆիայի արարքից, նա մի
ձեականութիւն էր որ ցոյց տուաւ, նաժիշտները
չկարծիքաւորուելու համար. նա ինձ ուղարկեց ձեզ
մօտ, որ միամիտ ու հանգիստ լինիք:

Նա ասում է, թող ինձանից ապահով լինին,
եթէ շահզատէն ինձ բառասուն կտոր անէ զար-
ձեալ մի կտորս նրան չեմ հասցնէ, միայն թող պ.
Ղեռնդն և Ճուշանիկ Տիրուհին իմ մասին թող մը-
տածեն, և Սմբատի հետ ինձ ազատելու ճանապարհը
կտնեն: Սօֆիէն ինձ ուղարկեց որ դուք չ'կարծէք
թէ Սօֆիէն շահզատին իմաց կ'տայ:

Սօֆիայի ուղարկած տեղեկութիւնը որ ստա-
ցան Ղեռնդն ու Ճուշանիկը ասացին Սմբատին. սո-

բանից յետոյ անհոգ եղիք, մենք ամեն ջանք պիտի գործ դնենք Սօֆիային այդ հրեշի ձեռքից աղատելու և թեզ յանձնելու, նա արդէն լաւ է պարաստել իւր ծրագիրը և ահա իննը ամիս է որ, Սօֆիան այստեղ է. իւր խմաստուն հանճարով նրանց համոզել և իրանից հեռու պահել, և ինքը առանձին մաքուր սենակում ապրում է փառաւորապէս. մենք արդէն նորանց տան խորհրդականն ենք, ամեն բան մեզ յայտնի է Սօֆիայի թելագրութեամբ արդին նրա բոլոր ծառայողները հայեր են. Ղեռնդն առան, Սմբատ շահզատէն շատ է սիրում երգեցողութիւն, մանաւանդ որ դու հայ ես և Սօֆիան ըստ երգերդ համկանալու համար, ես թեզ կներկայացնեմ շահզատին, և նա Սօֆիայից թելատրուած կը ընդունէ թեզ իւր տան մէջ, երգելու համար, դրանով կ'կարողանանք մեր նպատակին համնել, բայց ի հարկէ դու պիտի մի առ ժամանակ նրան հաւտարմութիւն ցոյց տաս, որպէս զի նա թեզ վրայ ոչ մի կարծիք չունենայ և աշխատիր այնտեղ երգերիդ մէջ ոչ մի դիպչող խօսք, առաջ չ'ըերես, և այդպէս ամեն մի կողմից զգուշանալով առաւ Սըմբատին և գնացին միասին շահզատի պալատը:

Ներս մտան բարեկեցին նրանց և նստան, Ղեռնդն առան, Շահզատան ահա թեզ մի լաւ իրգիշ եմ թերել, եթէ կ'հաւանես, սորան միշտ պալատումդ պահիր և նա թող թեզ համար երգէ որքան որ կամենաս. Շահզատէն Սմբատի գեղեցիկ տեսքը և շարժու-

մը տեսնելիս աւանեցաւ նրան։ Որովհետեւ այն թանկագին ակու մատանին որ Սմբատի մատումն էր, այնպէս զօրութիւն ունէր որ, ամեն մարդ Սմբատին-տեսնելիս, նորան կարեկցութիւն էր յայտնում և նրա բարին կամենալ էր ուզում, Հանգատէն հարցրաւ անունդ ի՞նչ է աշըդ։ Սմբատն ասաւ Զեր Տէրսւթեան ծառայ Սմբատ է անունս. շահզատէն ապսաւ զեալ եանմդա օլժուր, շալ տեսնիմ, որովհետեւ հայոց լեզուին քիչ ծանօթ լինելով այսպէս քեարտիկայ խօսեցաւ Սմբատն յարգանք ցոյց տալով էլ չնստեց նորա մօտ, այլ ոտքի վրայ կանգնած նուազեց մի բադալի քէշիչ օղլի, և երգեց,

Ի՞նչպէս համարձակուեմ կուշտըդ նստելու
Պէտքէ կանգնիմ դէմդ ծառայ շահզադա,
Միտք ունէի օտար երկիր գնալու
Հանբաւդ լսեցի դառայ շահզադա։

Երբ որ Սմբատը այս տունը երգեց, շահզատէն ասաւ ջան դարտաշ, շիրին լեզուիդ դուրլան օլիմ, ասաւ զէօրիմ եախշիլարդան։

Ես քո սիրոյդ բոլոր աշխարհ պտըտայ
Պտուտելով եկայ Թէհրան ներդ մտայ
Գոհանամ Սստուծմէ որ այստեղ դտայ
Երբսը տեսայ փափազս առա շահզատայ։
Հանգատէն զարմացել էր Սմբատի բաղցր ձայնի և լեզուի վերայ.

Սմբատն եմ չկարծեմ հոգեղին ես զուն
Հրեշտակ ես կ'ըսլես վերա ամպերուն,
Քո մօտդ շի լինի համարձակութիւն,
Մոմի նման հալուայ, վառայ շահզատայ:

Երդը աւարտելուց յետոյ, շահզատէն Սմբատի
ձեռքից բռնեց իւր մօտ նստացրեց մի քանի թէյ
խմացրեց և առաւ. աշրդ ես մի սաւզիւլ ունիմ, որը
շատ ուզագ տեղից եմ բերէ, ազեարքի իմ սաւ-
զիւլիս երգով ուրախացուցիր ես քեզ չօզ քան
Փէշրեաշ կուտամ, և Դեռնդից շատ շնորհակալ կ'լի-
նիմ, վեր կաց գնանք որ իմ Սօֆիայիս մօտ երդ
ասես, ելան և գնացին դէպի Սօֆիայի բնակավայ-
րը. սենեակի դրան որ մօտեցան շահզատէն դռնա-
պանին ասաւ, դէթ իջարի, խանումին ասա քի,
շահզատէն քեզ մի լաւ աշուկ է բերել, ամըր վար
իշարի գալու թէ ոչ: Դռնապանն ներս գնաց, Սօ-
ֆիային որ յայտնեց, նա իսկոյն հասկացաւ որ
աշրդի Սմբատն կ'լինի անպատճառ: Իրաւոնք է
թռող գան ասաւ, նրանք ներս մտան Սօֆիայի ոհ-
նեակն, Բայց սենեակի դարդն ու դարդարանքն ան-
պատճելի է, որովհետեւ նօրա պատերն կազմուած
էին ապակուց, ներս մտնողն հիանում էր և որ
կողմն որ նայում էր, իւր պատկերն էր տեսնում,
Նօրա միջի դարդարանքներն պարսկական ճաշակով
էին դասապ որուած և սենեակին լի էր անուշահոտ
քուրմունքներով, վերջապէս ոչ մի պակասութիւն
չէիր գոնի այդ ոհնեակում. նրանք նոտեցան, շահ-

զատէն առաւ. աշըգ, գէօրիբառն իմ սաւդիւլիս
նաօրլ գիւզայդր. պէտք է նրան գէօրայ գովասանիք
տաս. Սմբատն ասաւ բաշիւստայ, և սանթուրն լա-
րելսկ նուագեց մի տջամի մուխամբագ և Սօֆիա-
յին գովեց այսպէս.

Սմբատն

Ով լուսոյ աստըղ լուսաբեր. լոյս առաւթեան նա-
զելի,
Պայծառ անունդ խօսւում է բոլոր Պարսկաստան
նազելի,
Ճիշտ մի հրեղէն հիւրի ևս դու եղեմական նազելի
Երկնային հրեշտակներից ունիս պահապան նազելի.
Ամեն ժամ քեզ հետ միտսին կուրախնան ցնծան
նազելի.

Զը կարծեմ թէ մի հողնդէն գանուի քո նմանակդ,
Ճառ ու շատ տեղեր ման եկայ, մի տեղ չ'տեսայ
տեսակդ,
Իրան, Թսւրան, Ճամ, Մլեվան երրէք չ'կայ օրինակդ,
Հին, Դարրանդ, Հինդ ու Երևան քաշում են սիրոյ
փափազդ
Ոչ չայառտան կայ քեզի պէս, ոչ էլ Վրաստան,
նազելի:

Ֆեղեցկութեան կողմանից ոչ ոք քեզ նման չի լինի.
Քոյ երեսիդ պէտ լուստառ լուսինն էլ այնքան չի
լինի

Միմիայն արեն է քեզ պէս, քեզնից դովական չի
լինի, ուր որ քեզ տեսնի ողջ մնայ, նա հոգի կենդան չի
լինի, Ուրեմն դու ևս մարդկային հոգւոց հոգեհան նազելի:
Տէ լսուած, չէ իմացուած և չէ տեսնուած քեզի պէս
Մինչ այսօր մի մահկանացու դեռ չի ստեղծուած
քեզի պէս,
Որ ոչ նոր աշխարհ է գալու ոչ էլ է եկած քեզի
պէս.
Վերջապէս Էլ ինչ ասեմ չկայ արարած քեզի պէս,
Բա Սմբատն ինչպէս կարենայ տա քեզ գոգասանը
նազելի:

Ճահղատէն այս գովասանրին շատ հաւանեց և
իր միջքի ոսկէ գօտին արձակելով կապեց Սմբատի
մէջքն, և ասաւ շատ սաղ էղնիս աշրդ, 'Ես էլ քեզ
ձեռնախթող չեմ անի, քանի որ կենդանի եմ. Սօ-
ֆիէն էլ իւր կողմից մի ոսկի ընծայեց Սմբատին.
Իրեն նա աշրդ և ինքն թափուհի և ասաւ, շահղա-
տէ, բաւական ժամանակ է որ ես այստեղ եմ, ոչ
մի երգիշ ինձ այսպէս չէր կարողացել ուրախացնել
ինչպէս այս երգիշն, շահղատէն ասաւ, անհոգ եղիր
Սօֆիտ, այդ աշըզն կ'յանձնեմ բո իրաւասութեան
ինչքան որ կամենաս մօտդ պահիր, բայց երբեմն
ինձ մօտ էլ ուղարկիր երգելու, շատ լաւ ասաւ
Սօֆիան, որովհետեւ մեր պայմանաժամն էլ արդէն

մօտ է որ մենք մեր նպատակին հասնինք, հարսա-
նիրի համար, էլ սրանից լաւ երգիշ որ տեղից պի-
տի ճարենք: Ճահզատէն հաջութիւն տուեց Սօֆիա-
յի կամրին: Սմբատին թողեց նորա մօտ և ինքն
գնաց իւր պալատն, երբոր շահզատէն հեռացաւ
նրանց մօտից, Սօֆիէն իր նաժիշտներին ասաւ, աղ-
ջիկներ, չէ որ իմ բոլոր գաղտնիքներն ձեզ յայտնի
է, եկէք ինձ ուղիղն խոստովանէք, թէ ամեն մի
բանի մէջ, մինչի վերջն ինձ հաւատարիմ պիտի
մնաք, նրանք երդումով հաստատեցին իրանց խոս-
տումն. Սօֆիէն ասաւ, աշխարհ որ իրարանցում
լինի և շահզատէն ինձ հազար կտոր անէ թէ արի
հաւատդ ուրացիր, ես մինչև իմ վերջին շունչն պի-
տի դիմադրեմ և իմ հաւատիս համար զոհուելով
Սմբատից չպիտի ձեռք քաշեմ. 'ի վերջոյ նաժիշտ-
ներին խրատել և համոզելուց յետոյ նրանց ասաւ,
մի քիշ առանձնացէք. նրանք գնացին և Սմբատն
ու Սօֆիէն երկար ժամանակ առանձնութեան մէջ
լալով համբուրվում էին. երկու միմեանց սիրով
վառուած սրտերն էլ չէին կամենում յետ քաշուել
միմեանց փաթաթուել և համբուրուելուց, վերջա-
պէս նրանք իրանց սիրոյ կարօտն յադեցնելուց յե-
տոյ, նստան իրար մօտ և սկսեցին իրանց ազա-
տութեան ճանապարհի վերայ մատածել. նրանք իրա-
բու յոյս տալով և իրանց յոյսն Աստծոյ վերայ դը-
նելով ամենակարողի ողորմութիւնն էին խնդրում:
Յանկարծ Սմբատի միտքն եկաւ այն խօսքն, ոք

Սօֆիան ասաւ շահզատին թէ, արդէն երեք ամիս
է մնացել որ մեր պայմանաժամն լրանայ. Հարցրաւ
Ոմբառն թէ Բնէ պայման կայ ձեր մէջ, Սօֆիան
ասաւ իմ սիրելի Սմբատ, որովհետեւ Աստուած գի-
տէր որ իմ միտքս իւր վերայ հաստատ է, նրա հա-
մար ինձ կարողութիւնն ապաւու, որ ես այս պայմա-
նաւ նրան խարել եմ մինչեւ հիմա. Ինձ որ նոր
րերին այստեղ, արդէն յանձնուեցայ շահզատին, նա
կամնեում էր ինձ կին գարձնել, բայց ես տիրոջ-
մին սովորած ասի նրան, շահզատա, դիտես ինչ
կայ, ասաւ ինչ է, ես ասի որ, իմ ծնողներն եր-
կար ժամանակ անզաւակ են եղել և միշտ աղօթել
են Աստծուն որ իրանց զաւակ տայ և Աստուած
լսել է իմ ծնողաց աղօթը և նրանց տուել է մի
ազգիկ զաւակ, որ ես եմ. բայց իւր հրեշտակի մի-
ջոցաւ նա յայտնել է իմ ծնողներիո հետեւալ զայ-
տնիքը, այն է որ, պէտք է տսելէ. եբբ ձեր զա-
ւակը կ'մեծանայ և նրան կամուսնացնէք, պէտք է
նա իւր նշանուած օրից մինչ մի տարի լրանալը
աներատ կոյս մնայ, որպէս զի նորա կեանքը եր-
կար լինի. եթէ չէք պահի այս պատուէրը, նա շու-
տով կ'մահանայ և զուք զարձեալ անզաւակ կ'մնաք:

Ես շահզատին խարել եմ դրանով այս իննը ամիս
է և մի տարին լրանալու համար երեք ամիս է մնա-
ցել. որովհետեւ ես դիտէի որ, դու իմ յետեից կ'զաս-
ուրեմն եթէ մի ննար ունիս արա, եթէ ոչ, պայ-
մանաժամը ոք լրացաւ, եւ անկարող կ'լինենք նրա

ձեռքից ազատուել, Սմբատը սրտից մի խօր հառա-
շանք հանելով առաջ՝ մի յուսահատուիր սիրելի, թէկ
հիմայ այս բանը մեր մտքով անկարելի է թւում,
բայց Աստուծոյ կողմից հնարաւոր է, ուրեմն գործը
այնպէս ընելու է, ոչոր չ'կարծիքաւորի. դուցէ պա-
հապանները կ'նկատեն մեր արարքը և գործը կըվա-
տանայ: Սմբատն ելաւ և գնաց շահզատի մօտ. այն-
տեղ էլ մի քիչ երգեց. գիշերը մնաց նրա մօտ և
առաւոտը շահզատէն նորից զրկեց Սօֆիայի մօտ,
վերջապէս մի բանի օրում Սմբատը իւր իմաստու-
թեամբ բոլոր պալատականների ուշը գրաւեց, նը-
րանց մէջիտները գնում և զուռանից բարողներ էր
խօսում. երբ Սօֆիայի մօտն էր գալիս, աւետարա-
նի խօսքերով նրան խրախուսում ու սիրտ էր տա-
լիս, և շարունակ Աստծուն աղօթում էին իրանց
ազատութեան համար: Շահզատէն Սօֆիայից զատ
իննը հատ կին ես ունէր. շահզատէն մի սովորու-
թիւն էլ ունէր, գիշերները որ կնոջ մօտ որ ընած
լինէր, պիտի առաւոտը լողանար և այն կնոջ հետ
ձի նստած պտտէր բաղաքում. Սմբատին էր յաձ-
նուած ամբողջ ձիապանների իրաւունքը նրա իրա-
ւամբ կ'ըերէին և կ'տանէին ձիանները:

Սմբատի այդաեղ դալուց անցաւ երկու ամիս
ու կէո, բայց այնքան ժամանակում չէր կարողա-
նում մի յարմար միջոց ձեռք դցել, որ Սօֆիային
տանէր: Մի օր էլ երբ շահզատէն որսից վերադար-
ձաւ տուն, ձին տուաւ Սմբատին ձիապաններին

յանձնելու և ասաւ զնաց Սօֆիային երգով ուրա-
խացրու որ այս գիշեր յոպնած եմ և կամենում եմ
հանդստանալ. Մմրատը ձին տուաւ ձիապանին. և
ինքը սանթուրը առաւ զնաց Սօֆիայի մօտ մի բիշ
երդեց, Սօֆիան իր նաժիշտներին աշքով արաւ և
նրանք հեռացան. առանձին մնալով Սօֆիան լալով
տուաւ, ինչ ես անում Մմրատ ահա մօտեցաւ և տաս-
նուհինգ օր մնաց որ պայմաններս լրանայ, իոկ դու
ոշինչ շես կարացէ անել, Մմրատն ասաւ, ամեն
բան Առտուծմէ է կախուած, արի աղօթենք, թեր-
ես մի բան ցոյց տայ մեղ, Նրանք ծնկաչօք երկու
ժամուայ շափ աղօթեցին. Մմրատն ասաւ, մի բիշ
սպասիր ես դուրս գնամ տեսնեմ ինչ կայ. դուրս
գնաց և տեսաւ որ դռան պահապանները քնել են,
յիտ դարձաւ Սօֆիայի մօտ և ասաւ, Սօֆիա, Աս-
տուած մեղ աղատելու պատրաստութիւն տեսել է,
դրան պահապանների շորսն էլ քնել են ինչպէս.
անենք. Սօֆիան ասաւ, որովհետեւ ձի բերելում քեզ
վրայ կարծիք շ'կայ, զնայ ախոռը և երկու ձի
պատրաստիր. իսկ ինձ մօտ շահզատէն երկու ձեռք
լաւ հագուստ ունի պահ տուած, և երկու ձեռք
զենք, կ'հազնենք այդ հազուստները և կ'զինորուենք
զէնքերով, Աստծու անունը կ'յիշենք և կ'հեռանանք
այս տեղից. Սօֆիայի տուած հրահանզր լսեց Մըմ-
րատը, շտապեց ախոռից երկու լաւ նժոյդ դուրս
բերեց, և երկուսն էլ լաւ զինուած երեսները աղօ-
թտրան դարձրած խաչակիքեցին իրանց, հեծան

Նժոյզերը և հեռացան ատնից, բայց սրովհեակ քաղաքին անծանօթ էին, որքան պտըտուեցան եկան դարձեալ շահղատի դրան առաջ, երեք անգամ այդպէս գնացին չուռ գալով չ'կարողացան ճանապարհ գտնել որովհետեւ ձիերը այդ դուռը գալու ոովոր էին և եկան այդ դուռը հաւախօս եղաւ. դրանք մոլորուած չ'գիտէին ինչ անէին, լաց եղան և Ըստուած ապաւինելով վերջին անգամ գնացին, Տիրոջ աջակցութեամբ մի ճանապարհ բացուեց նրանց առաջ և այդ ճանապարով դուրս եկան քաղաքից և հեռացան. մինչև լոյսը բացուելը բաւական ճանապարհ գնացին. երբոր արեգակը դիպաւ Սմբատն ասաւ, արի իջնինք ձիերիցս և մենք էլ հանգստանանք, որովհետեւ ամբողջ գիշերը չէին ընել. Սօֆիան ասաւ, սիրելի շտապիր առաջ գնանք. որ հիմայ պարսից որդիքը ամբողջ զօրախմբով մեր յետեից կ'գան, Սմբատն ասաւ, անհոգ եղիր Սօֆիա, թէկուզ աշխարհ թափի էլ քեզ իմ ձեռքից խլել անկարելի է: Թող դրանք այդտեղ մի քիչ հանգստանան, մենք ընթերցողին առնենք թէհրան շահղատի պալատը: Երբ որ լուսացաւ շահղատնն զարթնեց քնից և ուրախանում էր մաքով թէ հարսանիքիս օրերը մտեցան յանկարծ Սմբատը միտքն եկաւ և մարդ ուղարկեց որ նրան բերեն և երգել առն, գնացին և տեսան որ, ոչ Սմբատ կայ և ոչ Սօֆիէն, պահպաններն էլ մնացել են չուարած, գնացին և շահղատին ոլատմեցին անցրը. նրա ուրախութիւնը

տրտմաւթեան փոխուեց. ՚Նրա խելքը գլխից թռաւ և չէր իմանում ի՞նչ անէր, վերջապէս հրամայեց հազար ձիաւոր զօրք պատրաստելու, ինքը հեծաւ ձին և զօրքը առած ելաւ բաղաքից դուրս, բայց չ'զիտէր որ ճանապարհ գնալը:

Մի առ ժամանակ շուռ գալով մի ճանապարհի վրայ ձիու հետք գտան և այդ հետքով առաջ գընացին, մինչի կէս օր ճառան Սմբատի յետեից: Նրը Սմբատը աեսաւ որ ՚Նրանք եկան Սօֆիային տսաւ, Սօֆիա, ահա անհաւատ զաղանը եկաւ, պէտքէ պատրաստուել, բայց չ'վախենաս. Ասաւ և հեծաւ ձին զինուած ելաւ շահզատի դիմաց և ըսկսեց ձի խաղացնել, զահզատէն որ տեսաւ Սըմբատին կէսը ճայերէն կէսը պարսկերէն խօսելով առում էր. «Բիճ քէօփէյ օղլի բիճ. դիւնեա մանմ աշըմնան զարա գեալպդր, դու ի՞նչ ջօւռիաթ ունիս, որ իմ սաւկիւս տանիս» այսպէս վրդովուած խօսում ու անեարգում էր Սմբատին: Սմբատն առաւ ներիր թաղաւորի որդի. որովհետե քո աղ ու ճացդ կերել եմ. դրա ճամար քեզ կ'խնայեմ, մի բիշ ճամբերէ, քեզ մի քանի խօսք ունիմ ասելու, ասեմ, յետոյ կամբը քոնն է, ինչպէս կ'կամնեաս այնպէս կ'վարուեմ: Զահզատէն ձիու սանձը քաշելով ասաւ, այ մուխանաթ ուշաղի, ՚Նա բիդիաջարսան թէշիկինան գէ բի, այսօր սանըն վերջի գիւնն դըր: Սմբատն սանթուրն առաւ և մի լաւ քէօփ օղլու եղանակ նուագեց, և առաւ, թէ ճայերէն տսեմ սա չի

կարող հասկանալ, ուրեմն լաւ է տաճկերէն ասել
որ նա բոլորն էլ հասկանայ: Հիմայ տեսնենք Մմբատը
ինչ կասէ և շահզատէն ինչ կ'պատասխանէ:

Ս մ ք ա տ ն

Ճահմ մուրվաթ էյլայ էօլդիւրմէ հաբաս,
Ըմանդր շավքեաթլմ, աման գիւնի դըր,
Իմտադրմա գիալսըն չէր շարիֆ էլլագ,
Մատաթ երըշմայ գիւմէն գիւնի դըր:

Եյս տունը ասելիս, շահզատէն բարկանալով
առաւ, էրմանի օղի էրմանի, սան էլա բիւրիւրսանրի
սան դալաջաղսըն. այշէն սրա բէնըմդըր, և նա էլ
սկսեց ասել այսպէս.

Շ ա հ զ ա տ է ն

Հալա բիրջա սարրէթ շիմմի փարզասի.
Եազն բիլըի բէօգիւն եաման գիւնի դըր,
Վախթիքեան բուլ գինան բաշն շարասի,
Ղոյին թէր բեասարամ դուրբան գիւնի դըր:

Ս մ ք ա տ ն

Նէյ հայ հայ դըր բիլմէմ. Նէյ հալլա հալլան,
Մէնէ բէօմէկ օլսուն օլ աղիմ դւլան,
Զեաքարամ դլրջի բեասարամ բեալան.
Ղարբուզայ տէօնդարիմ բոստան գիւնի դըր:

Շ ա հ զ ա տ է ն

Թալատըմ օլքեալար շափում ալասի,
Երխալըմ շհարլարըն բուռջու դալասի

Դէօ գիւշտա նէյ գեազար աաւշան բալասի
Դաւդա ազըլանդայ տուան գիւնի դրբ:

Ս մ բ ա տ ն

Բալայ Սմբատ ագեար գիրսայ Մէյտանայ,
Տաղըդըր ասքեաբն հարի բիրեանայ,
Վալվալա սալարըմ արադիստանայ,
Ելամայ սէօյնսըն դէստէն գիւնիտրբ:

Շ ա ն գ ա տ է ն

Իւֆիւրէսամ չբա բիմին սէօնէր սան.
Բիր սիլէ վուրաննդայ բիւլէ դէօնէսն,
Ըահղատէյի ար մէյտանտա թանարսըն.
Գէօրտէթ մայա տափլէ, շան գէնինի դրբ:

Երգեցովութիւնը որ վերջացաւ, Սմբատն իմացաւ, որ այդ արիւնարբուն իրանից ձեռք բաշելու չէ. ձիու վրայից կուացաւ և գետնից մի քիշ հող տուաւ գցեց բնրանը և առաւ, ով Տէր, դու այս հողը ինձ համար հաղորդութիւն համարես և ինձ օղնական լինիս, ասաւ և սուրբ մերկացնելով ընկաւ պարսից զօրքի մէջ, աջ ու ձախ հարուածելով անցաւ զօրքի միւս կողմը, և այնտեղից դարձեալ նմանապէս սրբան որ ինքն էր ջարդում համարեայ մի այնքան էլ ձին էր իր ստքերի տակ տրորում: Եթէ յանկարծ Սմբատին շրջապատած կամենում էին սրախովող անել նրան իմաստուն նժոյգը այնպէս էր տակից դուրս թռչում, որ նրանց սրերը միմեանց էին սպանում: Թէ ձին և թէ Սմբատը

պատերազմական ուսումնով կատարելակործուած լինելով, ամբողջ վեց ժամ պատերազմեց. Հաղարից աւելի մարդ կոտորեց, միայն ողջ էր շահզատէն, որ իրան պաշտպանում էր վահանով, և մի ժամուայ չափ էլ նրա հետ կուռելուց յետոյ վերջապէս մի թունդ հարուածով էլ նրան գլորեց ձիուց ցած, և ինքն էլ ձիուց իջաւ դաշոյնը նորա սիրաը խրելով ուղարկեց իրանց Ալիի և Արբասի մօտ. Փառք տուեց Սստծուն. իւր սուրբ սրբեց, հեծաւ ձին և զընաց դէպի Սօֆիային. Տեսաւ որ Սօֆիան այնքան է լաց եղել որ աշքերից արտասուրի տեղ արիւն է եկել. Սմբատն ասաւ ինչն ես այդշափ լացել Սօֆիա, նա ասաւ ինչպէս շլայի, որովհետեւ դօրքի բազմութիւնը որ տեսայ, յոյսըս կտրուեց. Հիմայ փառք Սստծու որ ողջ եկար ինձ մօտ.

Այսպէս Տիրոջը փառք և գոհութիւն տալով, հեծան ձիերը և շարունակեցին իրանց ճանապարհը. Վերջապէս միջնեց օրը, արեգակը մայր մտաւ. Նրանը դարձեալ գնում էին, մի լուսնեակ գիշեր էր, մօտեցան մի քարայրի և մտածեցին որ այդ այրում գիշերեն. ձիանը բշեցին այրի ուուռը. Երբ կամենում էին իջնել, յանկարծ մի դղրդոց լսեցին, Սըմբատն ասաւ, Սօֆիա, զու այստեղ մի բիշ սպասիր, ես առաջ գնամ և տե՛ նմ ինչ դպրդիւն է Սըմբատը պատրաստ առս ննցաւ և տեսաւ որ մի ահազին բանակ. զու մի ասիլ միւս կողմից էլ շահզատի հայրը Խորեանդար Շահը ահազին թուով զօրք

առած Սմբատի յետեիցն է եկել, ամբողջ օրը
վետքել և չեն կարողացել նրան դտնել, եկել են և
այստեղ բանակ դրել:

Նրանց պահապանները խոկոյն տեսան Սմբատին
և ձիուց ճանաշեցին որ նա Սմբատն է, զնացին և
շահին յայտնեցին թէ, Սմբատն այստեղ երեաց-
իսրեանդար շահն հրաման տուեց ամբողջ զօրքը
պատրաստուելու և ինքը զինուած գուրս եկաւ Սլմ-
րատի զէմ. նա որ Սմբատին տեսաւ դոյնը թռաւ
և կատաղի զայլի նման կարմրած աշքերով տեսաւ
որ Սօֆիան շ'կայ Սմբատը մնիակ է, նա կարծեց
թէ, շահպատէն անպատճառ Սօֆիային տարած և
սրան արձակած կ'լինի գաղանի նման զոռայով ա-
սաւ, իդան բարասի, մազեպմ շահպատէ, ունի սաղ
մի բրախմիշ, հալահավաշ, բիր ալբմայ դիւշերսէն,
քեալին զէօլժիորիս բէզէննէն տսիմ, վէ ջէմդէյն
զուրդ ու զուշա ետքրիմ: Սմբատը տաճկերէն հաս-
կանալի լիզուավ ասաւ, շարիֆ շէքէթլըմ, զաղա-
քննոն սախլաքի, երի քեաշմայ, զավապ դիշբմայ
գեալտի, զէիմ, օնդան սօզրա ամըր սաննզըր: Հահ
իսրեանդարը ձիու սանձը բաշեց, և ասաւ, իսթէր
զէ, իսթէր զէմայ, սալզն բիր իբի զախիսէ դալմիշ,
զէ զէօրիմ, բի, նէ դիաջադսն: Սմբատն սանթուրը
առաւ և նուազեց պարսից ջանդի քոռ օվլու եղա-
նակով այսպէս.

Ս մ' բ ա տ ն

Նա բառիսի բառրբսան տարլմնան բիլմամ,

Զարբ էյլամայ ինդի զարբն ագելէր,
Քէօյլանի մինանդա դահի զավթ օլմամ.

Սէար քեալլալար սօղան քիմի թէօրիւլիւր:

Եյս տունը որ ասաւ, շահն ասաւ, մուսաւ
Էրմանի օ դատար արքիչի օլուպ սան հա. սագըն
քի սրա մանըմ դր:

Շ ա հ ը

Ստըմ քիլմիանայ գեարակ քիլտրիմ,
Ղարդի թափրատանտա թէն քիւրիւլիւր
Ղրլրճ տալի ինտն ունի ոյլդիւրիմ.
Զամդաքն այաղ ալթընդա խեաք օլուր:

Ս մ ք ա տ ն

Սարբ էթ սանն ու ջալզն ենտրիմ,
Սուր քաղլէիփ օջազնդի սէօնդիւրիմ,
Աթաշ սալիմ մէմլէքեաթն եանդրիմ:
Բէտէնն տաղդիմ քուրջըն սէօքիւլիւր:

Շ ա հ ը

Թիլքինն փէշասի թեզմէքդր դաթի,
Սարէին դէօրթ եանի զաշմասն դաթի,
Ցըղարամ Թէհրանի Թաւրիգ Թօղաթի
Օնդա գիւղէլ օլուր՝ իչն թիրելլր:

Ս մ ք ա թ ը

Բալայ Սմբատ հար մէյտանայ գիրանդայ
Հոփլար դօշար դըլըճ զընդան սեյրանդայ

Եայօիս օյնաղանդայ հայ դշխրանդայ
Ճաշքառ շաղկլիթըսի տրշա շեաքիլբ:

Շ ա ն ը

Մէն շահ իսքեանդարամ, սէն 'նէ' քեարտսան,
Դիւզ էյլէյիպ աջ դուրտ իւստէ վարտսան
Ինադ էթմէմ ազեար [թոյեա վերասան]՝
Եօխսամ դանն տաղտան տաղտ արեալլիթ:

Բանակուիւը որ վերջացաւ, Սմբատը դարձաւ
դէպի արեելը երկք անգամ ինքն իրան խաչակնեց
և առաջուայ նման սուրը մերկացրած Ըստուծոյ
օդնութեանը ապաւինելով բանակի մէջ, աջ ու ձախ
հարուածելով սարսափ զցեց նրանց մէջ, զիշեր ժա-
մանակ զօրքը շփոթուած իրար էին հարուածում,
սրերի սաշխնը, վահանների կոփինը և ձիերի
փռնչոցը օդը թնդացնում էր. ահագին կոտորածի
մէջ ընկաւ նաև շահը. մնացող մի քանի զինւորն
էլ բռնեցին Պարսկաստանի ճանապարհը, բայց Սլմ-
րատը նրանց չթուզեց Թէհրան լուր տանելու այլ
նրանց էլ միւսների հետ հասցրեց Մահմետի զորը:
Սմբողջ զիշերը Սմբատը պարունակ լցրեց և արեան
հեղեղատներ վազգեցրեց, չնայելով որ պարսից այդ
զօրքերը բոլորն էլ բազ և արունարբու զազաններ
էին. Յետոյ ընկած զիշեների միջից պտաւ շահ իս-
կեանդարի զիշեր, կտրեց նորա զլուխը և նիզա-
ի ծայրը զարկեց տարաւ Սօֆիալի մօտ և առաւկ

նազելի Սօֆիայ, ահա շան էլ բեզ մատաղ արի, ահա նրա գլուխը, բայց այդքան զարհութելի պատերազմի և կոտորածի մէջ, Աստծու դօրութեամբ և իւր վերա դժնուած աղօթքագրերի օգնութեամբ, ոչ մի վէրքի նշոյլ անգամ չկար Սմբատի վերայ, որովհետեւ Սմբատին և Սօֆիային սիրոյ բաժակը խմացնողը ո. Սարգիսն էր, նրա համար էլ, նրանց օգնում և պաշտպանում էր ամեն մի դէպքում, որ և ձեզ էլ օդնէ և ոլաշտպանէ ամենակարող Աստուած ամէն:

Նրանք հանգստացան և շահի գլուխը վեր առան ու հեծնելով արաբական նժոյգները վնացին գէսլի Զէյթուն. Ճէի այդ տեղից Արմաւիրը աւելի մօտ էր, բայց Սմբատը դիտմամբ չ'կնաց Արմաւիր որպէս զի, Սօֆիին տանի իւր հայրենի բաղարը և մօր ախրութիւնը գոնէ Սօֆիայի միջսցաւ, մի բիշուրախութեան փոխել կարողանայ: Վերջապէս բսան օրում շարունակ ճանապարհորդութիւն արին և հասան Կիլիկիոյ սահմանը, իրանք իրանց ապահոված գիտնալով իջան մի յարմարաւոր տեղ, ապահով և հանգիստ սրտով ազատողին գոհութիւն և փառք վերառաքեցին, որ և ազատ, նոյն աղատարան ամէն մի անտէր և անօգնական մնացողներին. այստեղից հեծան ձիաներն և մինչ մութը ընկնելը հասան մի փոքրիկ գիւղ, նրանք իջնանեցին մի մարդու տուն և այդ մարդուն պատմեցին իրանց դլիսին եկած անցրը, ցոյց տուին նրան, նաև շահի կտրուած գը-

լուխը, որի պանկները հաստացած և կապտացած; և առամները բայց մնացած, գտնվի մեջ տեղը կընտած էր, տեսնազները մնացել էին զարմացած նրա անպատմելի բաժութեան վրայ: Կեցցես, առուժ էին նրանք որ, ազատեցիր քայրիկիս, երեր օր այդ մարդը Սօֆիային և Մմրատին չժողեց գնալու, այդ տեղ մի լաւ հանգստացան, և Մմրատը մի նամակ գրեց և ուղարկեց Զէյթուն իւր զօքանջին (Վառվառին) և Յավուկի իշխանին, թէ ահա ես ձեր սիրելի որդի Մմրատը ողջ առողջ գալիս եմ, Սօֆիայիս հետ. այդ գիւղից մինչ Զէյթուն մի օրուայ ճանապարհ էր. նամակին ստացաւ Յավուկի իշխանը և Մեծաւ ուրախութեամբ, կարդաց և Սօֆիայի Մմրատի գալստեան լուրը հազորդեց Վառվառին, և ինքը տէրութեան կողմից վեր առաւ հարիւրի շափ ձիաւորներ, և զէմ զնաց Մմրատին: Մմրատը և Սօֆիան ճանապարհ որ ելան այդ գիւղից, մինչ այդ տեղը տպամարդի հազուստներով էր Սօֆիան, ճանապարհին Մմրատն առաւ Սօֆիայ, հանիր այդ հազուստները և ըստ իսկական հալաւն հազիր զնանք, Սօֆիան կատարեց Մմրատի խօսքը և դալով մօտեցան Զէյթունին: Յավուկի իր հետ ունեցած հարիւր ձիաւորներով դուրս եկաւ Մմրատի առաջ քաղցր և ջերմ սիրով ողջունեցին, միմեսնց և միասին դնացին, երբ որ մտան քաղաք, Վառվառէն էլ իր բարեկամներով եկաւ Մմրատին առաջ, և ուրախ զուարթ զնացին տուն: Յավուկի իշխանը այս ձիաւորներին ուղարկեց իրանց

գործին, իսկ իրանք մտան Տիգրան վաճառականի
առւնը, Վառվառէն մի ձեռքը զցեց Մմրատի և մի
ձեռքը Սօֆիայի վիզը և համբաւրում էր նրանց, և
Տիրոչք փառք տալիս, դուբէյիթ եղանակով այսպէս
երգում էր:

Վ ա ռ վ ա ռ է ն

Եկաօր ինձ հազար աւետիք,
Ըյտինշ բարին օր է այսօր,
Մեծ տօնախումբ նաւակատիկ,
Տեղավ տաղաւար է այսօր,

Սօֆիան ասաւ, մայրիկ այդ խօսքերդ իրաւ է
բայց սպասիր հերթով տօննք և ինքը սկսեց.

Եյս օրս միշտ աօն կատարէ
Ամէ ամ որտորէ մայրիկ,
Եյս մի բարի բան համարէ
Մեզ պատիւ չնորհէ մայրիկ.

Մ ա յ օ ն

Ցառաջ մէ վատ գնաց վարզս
Ըստաւծմէ շը կտրի փառքն,
Նորսուեց բաժին աշխարհս,
Երկինք երկիր նոր է այսօր:

Ս օ ֆ ի է ն

Չար շահզատա Սուլէյմանը,
Զօրքերով եկաւ գազանը,
Միօրէն մտհմէտականը
Կտմէր մեղ կստորէ մայրիկ.

Մայքն

Վառվառն եմ մէջ ուրախութնան
Ըստծուն փառք ու դոհարան.
Մէկ կաղմս վարդ մէկս շուշան,
Մէկս էլ նունսւֆարէ այսօր:

Սօֆիէն

Տես Սմբատո ինչեր արեց.
Ժահն ու շահզատէն գլորեց,
Սօֆիայիդ զերուց յետ բերեց
Քաջ, զօրեղ զինւոր է մայրիկ:

Երդեցողութիւնը վերջացաւ նրանք նստան ու-
շախացան: Յովսէփ իշխանը ասաւ, պէհ Սմբատ
չան, սլատմիր տեսնինը ինչպէս կարողացար այդ
պատառող գտղանների ճանկից աղատել և ինքել
Սօֆիային: Սմբատը պատմեց իւր զլիսու եկոծ բո-
լոր անցրերը, և ցոյց տուաւ շահի կոտրուած տ-
տամները. բայց մնացած զլուխը երրոր տեսան,
մնացին զարմացած և նոր հաւատացին որ Սմբա-
տի բոլոր ասածները սւզիդ են, ուրախութիւն ա-
նելով միմիանց աշքալոյս էին տալիս. մի քանի
մեծամեծ մարդիր ևս կանչեց և շահի զլուխը ցոյց
տուաւ, և այդ մարդոց հետ վեր տուաւ շահի զը-
լուխը և տարաւ բաղաքի գարբասի վերի սեմին
կտամեց, որ անց ու զարձ անողները տեսնին, և
տեսնողները ի հարկէ կտսեն, այս է ահա աշխար-
հաւէր շահի զլուխը, և ամեն մի տեսնող զտվել էր

սկսում Սմբատի քաջայադիմ անունը, որով հռչակ-
ուեցաւ Նրայ քաջութիւնը ամբողջ Հայաստանում։
Յովսէփի իշխանը Սօֆիային և Սմբատին հրաւիրեց
իւր տուն, և իր բոլոր քարեկամներով երեք օր
շարունակ կերուխում արին, որովհետեւ Սմբատն էր
որ Նոյեմզարին (Յովսէփի հարսը) յաղթեց և Յով-
սէփի իշխանի որդոյ հետ ամուսնացրաւ, զրանց հա-
մար Յովսէփի շատ մեծ յարգանք ցոյց տվաւ Սրմ-
բատին և Սօֆիային և իւր ստացուածքից Նրանց
տմեն մէկին եօթը ձեռք ծիրանագոյն հանդերձ
ընծայեց, Սօֆիային, պարանոցի ոսկի մանեակ ոս-
կի աբարանջան և մատանիներ շնորհեց, և արկղը
բանալով բաւական էլ ճանապարհածախս ոսկի ար-
ուաւ։ Եւ այն տեղից գնացին Վառվառէի տունը,
մի չորս օր էլ այնտեղ մնացին, եօթ օր որ լրտ-
պաւ, ութներորդ օրը, Սմբատը հայրենիք գնալու
թոյլտվութիւն խնդրեց, թէ Վառվառէն և թէ պ.
Յովսէփը արժան համարեցին ճանապարհ գցելու ու
ասացին, մի այս օր էլ սպասեցէր վաղը շուտով
ձեզ ճանապարհ կ'գցենք, այդ օրը Վառվառէն տա-
սը բեռնակիր գրաստներ պատրաստեց որից եօթը
իր տնական օժիտը բարձեց և երեքը, Յովսէփի
ընծաները։ Վառվառէն խնդրեց պ. Յովսէփին թէ,
Սմբատին պէտք է զօրքերով յուղարկաւորես, Յով-
սէփին ասաւ, առանց րո խնդրելուն ես արդէն եր-
կու հարիւրի շափ զօրք պատրաստել եմ, Սմբատին
մինչև իր հօր քաղաքը՝ Արմաւիր տանելու, Միւս

առաւօտ ամեն բան պատրաստ էր, մնաս բարով
տացին և Սօֆիայի «ժիտով բեռնաւորուած գր-
րաստները տուածներին արած, երկու հարիւր զօր-
րով մեծ տրախութեամբ քաղաքից դուրս ելան և
զնացին գլանի արարատեան աշխարհը. Քաղաքից
քաղաք և իջևանից իջևան անցնելով եկան մի տմ-
ոոյ շափ ճանապարհ. և հասան Ալաշկերտ, երբ
ոյդ տեղիցն առաջ զնացին, արգելի մօտ էր Ծրա-
րատ մեծ սարը որի կատարը շատ հեռուիցն էլ
կարող է տեսնուիլ երբ այդ հսկայատիպ սարը
երեաց Սմբատի աշքերին, նրա սրտին կարծես մի
տեսակ ցնծութիւն եկաւ, որի համար ասաւ, Սօ-
ֆիա, տեսնում ես այն վիթխարի լեռու այդ է
Ծրարատ կամ Մասիս ասուած սարը, որի վերայ է
տում են նոյեան տապանը:

Սպասիր Սօֆիայ, այդ սարի էլ սիրտը շտհե-
լու համար մի բանի խօսք էլ կրա վերայ տսեմ,
ստիթուրը տուա դուրէլիթի եղանակով երգեց
այսովէս.

Եյօր սիրտս ուրախացաւ

Որ տեսայ Ծրարատ բեղի,

Բոլոր հոգսերս հեռացաւ

Որ տեսայ Ծրարատ քեղի:

Միշտ բաշում էի կարօտպ,

Բարով տեսայ ստորսատպ

Քաղցը բուրաց անուշ հօտդ

Երբ տեսայ Արարատ քեզի:

Դու ես հայսց վեհարանը,
Նոյա յարգի իջևանը,
Միտքս ընկաւ ոռւրբ տապանի,
Երբ տեսայ Արարատ քեզի:

Եշխարհ խօսում է անոնդ
Նոյա հիւրնկալութիւնս
Ինձ այցելեց չորս անկիւնդ
Երբ տեսայ Արարատ քեզի:

Ամբատն եմ շուռ եկայ աշխարհը
Չկայ քեզ պէս բարձրահասակ.
Փառք, սահղողին հազար փառք,
Որ տեսայ Արարատ քեզի:

Երգը աւարտեց և շաբունակեցին ճանապարհը.
Միւս օրը մտան Արմաւիրի սահմանը և արդէն մնաց
մի ժամուայ ճանապարհ որ հասնին Արմաւիր մի
դաշտավայրում ձիերից իջան հանկստանալու և այդ
տեղ Սմբատը մի նամակ գրեց իւր հօրը և յանձ-
նեց իւր ձիաւորներից մէկին որ տանի Արմաւիր և
յանձնէ իւր հօրը. Զիաւորը տարաւ նամակը և յանձ-
նեց Սաղաթէլին. Սմբատի հօրը, նա կարդաց և
իմացաւ. որ, Սմբատը սղջ և տռողջ Սօֆիայի հետ
կալիս են, իւր կին Մարգարիտի հետ ուրախու-
թեամբ լցուած մի կառը նստան և վնացին Սմբա-
տի տռաջ, տեսան որ Սմբատն էլ միւս կողմից իւր

ձիաւօրներսվ գալիս է, Երբոր մօտեցան միմեանց
Սմբատն ու Սօֆիէն ձիերից իշան ու ստով գնա-
ցին հօր կառքի տուած նորա ուրախութիւնից լազ
էին լինում և այդպէս լալով ողջունեցին միմեանց,
և համրուրվեցին, յետոյ Սմբատն ու Սօֆիէն էլ հե-
ծան կառը, Սմբատը մօր մօտը և Սօֆիան իւր
սկիսրայրի մօտ նստեց և զինուորներն էլ նրանց
բոլորը փաթթած մատան քաղաքը. Երբ քաղաքացիք
լսեցին Օաղաթէլի որդի Սմբատի գալը, դղրդաց
ամբողջ քաղաքը և բոլորն էլ կրպակները կողդպե-
րով գուրս ելան Սմբատին տեսնելու, որովհետեւ
այդ քաղաքի ամբողջ ժողովուրդը Սմբատով էր
սլարծենում, թէ զիտութեան և թէ քաջութեան
կողմից Սմբատի անունը տարածուել էր ամեն տեղ,
ժողովուրդը միմեանց արորելով առած էին անց-
նում նրան տեսնելու. Երբոր Սմբատը քաղաքի զբ-
րութիւնը նկատեց. սանիթուրը ձեռքը տռաւ և
սկսեց մի դուրէյիթ քօռօղլու. թէթի եղանակով, և
երգեց.

Ս մ բ ա տ ն

Բացուիր մայրիկ ուրախացի,
Ճիծայ այսօր որ ես եկայ,
Գնալաւս տրտում գնացի
Հիմա ծիծաղ երես եկայ.

Եյս տունը որ ասաւ, մայրն ասաւ, տպրիս
Սմբատ ջան, ապրիս, ոտպասիր որ ես էլ ասեմ իմ
ցանկացտծը և տռաւ.

Մ ա յ թ ւ

Լուրդ տռայ Թէյրան զնացիր
 Ազջ ու ազատ ինչպէս եկար,
 Պահող Ըստուածմէ գոհացիր
 Դժուար էր շատ ինչպէս եկար:

Ս մ բ ա տ ն

Զուր չգնաց աշխատանքս
 Տէրն յիշեց դառը տանջանքս
 Ազաշելով աղերսանքս
 Աստուած չ'առաւ անտես, եկայ:

Մ ա յ թ ը

Որդի ես քո կեանքիդ մատադ
 Բաղում աշխատանքիդ մատադ,
 Քաշած շարշարանքիդ մատադ,
 Մնծ փառք էր այդ, ինչպէս եկար:

Ս մ բ ա տ ն

Սմբատն եմ Արմաւիրեցի,
 Աղջ Պարսկաստան աւերեցի,
 Անիծիւ զօրքեր կոտորեցի
 Ազատեցի Սօֆիէս, եկայ:

Մ ա յ թ ը

Մտրգարիտն եմ շարդ տանիմ,
 Այսուհետեւ թող մեռանիմ,
 Յոյս շունէի քեզ տեսանիմ
 Այսօր ականատես եկար:

Եյտէս մայր ու որդի երգելով հտսան իրանց

առն գուռը. Ճողսվուրդը միւսի ուսերի վերայ էր բարձրանաւմ Սմբատին ու Սօֆիային տեսնելու, դրա համար էլ նրանք ժողովրդեան ցանկացածին լրաւթիւն տալու համար երկու ժամի շափ դռանք մնացին որպէս զի ամենքն էլ տեսնին. Նըրանց, բոլորն էլ տեսան, խնդացին և վերադարձան ամենքը իրանց գործին. Սաղաթէլը հրամայեց ծառաներին ամրսպջ ուղեկից զօրքերի ձիանները տեղաւորեցին, և ինքը այդ բոյսը զօրքը պատուալ պահպանեց մինչի Սմբատի հարսանեաց աւարտը, յետոյ առանձին, առանձին ընծաներ տալով մհծ պատառուի վերադարձաւ իրանց տեղը՝ Զէլթուն։ Երբոր Սաղաթէլը պատրաստւում էր հարսանիք տնելու Սմբատն ասաւ, հայրիկ ես մի խնդիր ունիմ քեզ, չայրի ասաւ ինչ է Սմբատ ջան, ասա տեսնիմ, ինչ որ կամննում ես պատրաստ եմ կատարելու։ Սմբատը ասաւ, ինչ որ իմ հարսանեաց համար պէտք է, լսիր որ ես երգով ասեմ, ու սկսեց գասթանի եղանակով երգել այսպէս.

Հայր իմ զերապատիւ ներէ զու ներէ,
ներէ որ բեզանից բաներ շատ կուզեմ,
ինչ որ կուզեմ ուրախութեամբ կատարէ,
Պայր ու ստացուածքիդ համեմատ կուզեմ։
Ակզբէն պատրաստէ անուշ խմելիքներ,
Նրա հետ համաձայն նուշ ու շամիչներ
Ժագանակի կլթոն ընկուզի միջներ

Առանց շափ, անկշիռ և անհատ կուզեմ:

Ամենայն մի բանը կարգով տեղն ու տեղ,
Յիսուն եղ մսացու վաթօռուն ֆունդ տաքտեղ,
Եօթանասուն լիտր մաքուր կովի եղ.

Հալուած ու մաքրուած անարատ կուզեմ:

Կուզեմ կերակուրներ համեղ պատուական
Հալի միս ծնեփակ ձուկը բաւական
Խորովածցու գառներ երկու ամսական
Համրանքով պատրաստուած 100 հատ կուզեմ:

Բոլոր սենեակներդ սլատրաստ է վաղով
Խայտապղէտ, պայծառ գոյնզգոյն դեզսվ.
Հոտաւէտ ծաղկունքով, նարթոսի իւղով,
Բազմոցներդ փռուած պատէ պատ կուզեմ:

Կարգադրէ քառասուն տեղ եփեն հաց,

Ամեն բանի վերատեսուչ ինքդ կաց

Օրստ օրէ աւելացրու սրտաբաց,

Զօր, գիշեր սեղանդ լի առատ կուզեմ:

Քառասուն բեռ գինի, քառասուն օղի,

Քառասուն բեռ պատրաստ լինի խազողի,

Քառասուն բեռ միրը ու մազա խմաղի

Քառասուն դրաստի բեռ փշատ կուզեմ:

Յետոյ կանչէ աւագ հրաւիրակներ,

Համայն ընտիր ազնուական զաւակներ,

Երամ երամ ժողուէ մեր հպատակներ,

Կազմէ հարսանիքս շրջապատ կուզեմ:

Մեծամեծ մարդկանց զատ զատ ոլժեան
Բեհեղէ բարձ, փղոսկրէ նստարան
Շարքով աշտանակներ դիր շարուէշտրան
Երծաթեայ ջահերը մոմապատ կուղեմ:

Ուզածո կատարէ գու անվրիտակ,
Ընտրը մի բանի ուսեալ նուիրակ,
Երբոր հարսանիքս լինի բոլորակ,
Կանգնած ծառաներո անարատ կուղեմ:
Հանգիստուորները նստեցրու դառ, դառ,
Սպասաւորներիդ պատուերներ կ'տաս,
Լցնեն անսուշ զինին բաժնեն անպակաս,
Ինչպէս վազման ջրի, դետ Եփրատ կուղեմ:
Տեռք, ձեռք նսւպարան համարանիքով քսան,
Երգիշներն հաճելի երգերով խօսան,
Տասը կամ քսան ձեռք սրինդ ու դուսան,
Իմ ազբունանքներս պայտղատ կուղեմ:
Մէկ կողմը խաղ լինի, մէկ կողմը խնդալ,
Օշարակներ մեզբով շինուած եղձեալ,
Ապրեշումէ ջնջոց սոկեցէ դղալ,
Դինու բաժակները ողջ արծաթ կուղեմ:
Աստուածանից եղաւ այս նպատակս,
Վերջը աջող դարձաւ ահեակ վիճակս,
Խնդրէք որ վայելեմ թագ ու պատակս,
Մինչի մահ Սօֆիայէս ան անջատ կուղեմ:
Հայցեմ 'ի բէն եօթն անուն ս. Կարապետ,
Տնւր բարի վայելում իմ Սօֆիայիս հետ,

Լիտուատ պարզեից չնորհատու վարսետ,
Ցաւերժ ևս բեզանից բարի խրատ կուզեմ:
Գիւլգեազեանը սիրեց Սմբատ անունըս
Եշխատանքով դրեց գիր պատմութիւնս
Ցիշատակի համար կազմեց մատեանս
Ով լսէ, ողորմի տայ հաստատ կուզեմ:

Սմբատի բոլոր ասածները, գեռ մի օր շահնցած, Սաղաթէլը կատարեց առատօրէն, և միւս օրը ամբողջ ազգ ու երամով, հարսանիքը բոլորեց, եօնն օր, եօթը գիշեր, ուրախացան հարսի և փեսայի վրայ, եւ ինչպէս նրանիք հասան իրանց ցանկալի նպատակին, գուք էլ հասնիք ձեր բարի նըպատակներին ամեն:

ՄԻ ՔԸՆԻ ՀԸՆԵԼԱԽԿՆԵՐ

Պահէ, պահեցի 6, պահածդդ կրկնէ, կրկնեցի=12
վերադիր արա 5, արի=17, բազմացրու հնգով,
 $17 \times 5 = 85$ բազմապատկիր 10, $85 \times 10 = 850$:

Խրատ: Բոլոր գումարը քանի հարիւր որ կ'լինի
նրանից 250 դուրս հանէ մնացածը բանի հարիւր
որ կ'լինի, ամեն մի հարիւրը մի հատ կ'նշանակէ:

Պահէ, պահեցի 4, երեք պատրէ $4 \times 3 = 12$
կէո արա 12=6, 6 կիսածդդ հաւասար է, այս, կէ-
ոը թող մնայ, կէոը երեք պատրէ $6 \times 3 = 18$. Ռւ-
բեմն ըս պահածդդ 4-նէ, որովհետեւ գումարի մէջ

որքան որ 9 լինի, ամեն մի 9-ը, 2 հաշ-
ուել:

~~3~~ Պահէ, պահեցի 3, երեքով բազու, ~~ուրեմն~~
կէս արա, 9: $2=4$ և 5: Հաւասովը շատ է
մէկր միտրդ պահէ, բայց որ բա և հինգի
երեքառարկ, $5 \times 3 = 15$: Հիմայրո պահա-
մէջ որքան 9 ունիս, մէկ 9-ը, մէկ 9-ը 2
ծըդ է՝ 3-ը, որքան 9 որ ունիւ էիր պահել
հատ հաշուէ, և այն մէկն էլ որի, այնքան է.
Կա էլ որ վրայ զատ ինչքան պահածդ:

Պահէ, պահեցի 3, կրկնեցի $3 \times 2 = 6$,
չորս վերագիր, $6 + 4 = 10$, $5 \times 10 = 50$
~~այցու~~ տասնով բազմա-
12 էլ վրայ արի, $50 + 12 = 62$ պահածդ է երեք:
Երբ 62 \times 10 = 620, որին պահածդ էլ պուրա բցէ,
Գումարը որքան հարիւր որի, ամեն մի հարիւ-
րը մի հատ հաշուես կ'դա

Մի սիրիք կ չԱնելուկ

Մի խումբ հաւքերածում էին դաշտում,
մի ուրիշ թաշուն եկաւ ասաւ՝ նրանց. բարե ձեզ
հարիւր հաւքեր նրանք ոին, մենք հարիւր շենք,
այլ մեզի պէս մէկ, մեկիսի պէս էլ մէկ և մեր
կիսու կէսն էլ մէկ և ու էլ մեզ հետ, նոր կ'ի-
նինք հարիւր հատ: Ճի իմացիր քանի հաւ էին
արածողները: Պատ. 36 հատ:

Եյաէլ ուրիշ կերպ.

Սրբունի օրհնեց մի տղայի և ասաւ. ապ-
րիս դուռան որ ապրել ես, ու այնքան երկուս
էլ ապրիայնքան մէկ էլ ապրիս. Աստուած իմ
տարրուս էլ տայ ըեզ, որ լինիս դու հարիսր
տարեկանուցէք թէ բանի տարեկան էր այդ
տղին:


Պատ, արի և Յ ամսական.

Քառասմարդ գնացին բաղնիք, և բաղնե-
պանին տուին փարայ բայց Յ տեսակ էին այդ
ուստի տուողն Մի տեսակը տուին մէկ մէկ
փարա, միւս ալիս տուին երկու երկու, մի տե-
սակը կէս կէս ա, լւէի 40 մարդ էին և 40
փարայ տուին. կղ ես իմանալ թէ բանիսը եր-
կու երկու տուեց սիսը մէկ մէկ, և բանիսը կէս
կէս:

Պատաս. 10 մե երկու երկու տվեց, 10 մարդ
մէկ մէկ և 20 մարդ կէս կէս:

Մի մարդ հիւանուր. ձմերուկ ուղեց. եղբայ-
րը գնաց շատ ձմերուկերեց որ տանի հիւանդին.
բայց դրան վերայ 9 տոկ պահապան կար. առա-
ջին պահապանը այդ ձմելւկների կէսը առաւ, 2-ը
կէսը. 3-ը կէսը. 4-ը կէս. 5-ը կէսը 6-ը կէսը
7-ը կէսը. 8-ը կէսը և 9-, կէսը. մնաց մի հատ
ձմերուկ որ այն էլ տարա հիւանդին կարճ ես
իմանալ թէ, այն ձմերուկները բանի հատ էին.

Պատ. 512.



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220037952

[1~304)

A $\frac{\pi}{37952}$

ԳԻՆՆ Է 60 ԿՈՊ.